

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

սոցիոլոգիա բաժին

«ԿԱՆԱՅՔ, ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ԲՈՇՅԱՆ ՍՅՈՒՋԱՆՆԱ ՌՈԲԵՐՏԻ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

Սոցիալական օտարման գենդերային
ասպեկտները

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	2
1 Սոցիալական օտարում հասկացության տեսամեթոդաբանական վերլուծություն.....	4
1.1 Օտարումը հասարակագիտական դիսկուրսում.....	4
1.2 Սոցիալական օտարման տեսամեթոդաբանական մոտեցումների վերլուծություն	24
2.1 Գենդերային հիմնախնդիրների հասարակագիտական ուսումնասիրությունների կիզակետում	35
2.2 Գենդերային հիմնախնդիրները Հայաստանում	42
3 Սոցիալական օտարման գենդերային առանձնահատկությունները (սոցիոլոգիական վերլուծություն)	56
3.1 Հետազոտության մեթոդաբանություն	57
3.2 Տվյալների վերլուծություն	61
Եզրակացություն	93
Գրականության ցանկ	
.....	
Հավելվածներ	
Հավելված 1 - Խորին հարցման հարցաշար	
Հավելված 2 - Փորձագիտական հարցման հարցաշար	

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայիս ժամանակաշրջանը աչքի է ընկնում հասարակական գործընթացների աննախադեպ ինտենսիվացմամբ, արագընթաց այլափոխումներով, նորի, չտեսնվածի, հաճախ անսպասելիի շարունակական արտադրություններով: Մինևույն ժամանակ տեղեկատվական հաճախ անվստահելի հոսանքների քառսը, նորագույն հասարակական վտանգներն ու անհանգստությունները, իրական և ընկալական անգնահատելի ռիսկերի տարափը վերի նշվածի հետ մեկ տեղ շարքային քաղաքացու, սովորական մարդու առօրյան, ապագան դարձնում են անկանխատեսելի: Ըստ էության ներկայիս հասարակական իրականությանը հատուկ է ծավալուն անորոշությունը, ինչը տեղի ունի հասարակական կյանքի կարծես բոլոր ոլորտներում՝ կենցաղից, առօրեականությունից մինչև մակրոսոցիալական, տնտեսական, քաղաքական հարաբերություններ, գործընթացներ: Այժմեական մարդու հասարակական կյանքն ու կենսագործունեությունը առավելապես կազմակերպվում է ժամանակաբանական և սոցիալական նեղ, քիչ թե շատ կանխատեսելի սոցիալական տիրույթում:

Ասվածը ակնհայտ է հայաստանյան հասարակական իրականությունում նույնպես, որին հատուկ էին տեղական պատմասոցիալական զարգացումների և գործընթացների արդյունքում ձևավորված ուրույն դրսևորումներ: Սովետական միության անկումը, տնտեսական ճգնաժամը, վեարտադրման կարծես կանխատեսելի համակարգից անցումը շուկայական մրցակցային հարաբերություններին, քաղաքական համակարգի այլասերումը դարաբաղյան հակամարտության և ավերիչ երկրաշարժի հետևանքները առաջ բերեցին բացառապես նոր սոցիալական իրականություն, նոր սոցիալական հարաբերություններ:

Կարևորագույն փոփոխություններից սոցիալական կյանքի և հարաբերությունների կայուն գործառնման արժեքանորմատիվային հիմքերի խեղումն ու այլասերումը՝ այն է անումիան, մրցակցային հարաբերությունների ներթափանցումը հասարակական հարաբերությունների ոչ առևտրային, անհրաժեշտորեն ոչ մրցակցային ոլորտներ, սոցիալական անվստահության աճը հասարակական գրեթե բոլոր

ագենտների և սոցիալական տարամակարդակ սուբյեկտների նկատմամբ, անկանխատեսելի նորարարություններն տնտեսական, քաղաքական զարգացումներում որպես արձագանք առաջացրին հայ մարդու սոցիալական օտարում իր առանձին դրսևորումներով: Այստեղ առաջնահերթերից են սոցիալական տկարությունը, ձեռքբերովի անօգնականությունը, սոցիալական իմաստագրկումը, սոցիալական մեկուսացումն ու մշակութային հեռացումն, ինչպես նաև կարևորագույն նշանակություն ունեցող սոցիալական աննորմությունը կամ սոցիալական անոմիան:

Նկարագրվածին հիփոթետիկորեն վերադրվում և այսօրինակ նոր համատեքստում են հայտնվում արդեն իսկ պատմականորեն առկա սոցիալական երևույթներ և գործընթացներ, որոնցից են մասնավորապես հայաստանյան իրականության գենդերային հիմնախնդիրների ողջ բազմազանությունը: Այսպիսով հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է վերլուծել սոցիալական օտարում երևույթը իր անալիտիկ բաղադրիչներով հենց գենդերային հատույթում, ինչը լրացուցի լույս կսփռի թե սոցիալական օտարման և թե գենդերային մի շարք հիմնախնդիրների վրա:

1 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕՏԱՐՈՒՄ ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 ՕՏԱՐՈՒՄԸ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՄԿՈՒՐՄՈՒՄ

Օտարում տերմինը ծագում է լատիներեն *alienus* բառից և նշանակում է ինչ-որ քանի այլ, հեռու, ուրիշ դառնալը կամ լինելը [11, էջ 1-8]: Պատմականորեն տերմինի կիրառությունը սկիզբ է առնում Հռոմեական իրավական ոլորտում՝ նկարագրելու համար տնտեսական ու իրավական այնպիսի գործընթացներ, ինչպես սեփականության փոխանցումը, իրավունքի անարդարացի կորուստը կամ այլ իրավախախտումներ [29]: Հոգեբանության ոլորտում տերմինը ցույց է տալիս այնպիսի հոգեվիճակներ, ինչպես անբավարարության զգացումը, հոգեկան խանգարումը, աստծուց, մարդկանցից, ընտանիքից կտրվելը, առանձնանալն, դեվիանտ վարքն ու այլ մենտալ խնդիրներ [13, 15, 18, էջ 782-792, 33, 36, էջ 670-677, 39, 47, էջ 709-716]:

Փիլիսոփաներն ու աստվածաբանները տերմինն օգտագործել են հոգեվոր անառողջության մեկնաբանություններում, շեշտելու համար, որ դա ոչ այլ ինչ է քան հոգու օտարումը Աստծուց [30]: «Օտարում» տերմինը կարող ենք հանդիպել է անգամ Աստվածանչում՝ Եփեսիացիներին ուղղված խոսքում. «Նրանց մտքերը մթազնած են, և իրենք օտարված են Աստծու կյանքից՝ իրենց մեջ եղած տգիտության պատճառով, որն իրենց սրտի կուրության հետևանք է» [1]:

Մթա. 5-րդ դարի հույն փիլիսոփա Պլատոնը իր «Պետություն» ձեռագրի, 7-րդ գրքում ներկայացված «Քարանձավի առակ»-ում հասարակության կառուցվածքի ու վերին ուժերի նկատմամբ ունեցած հավատքի մասին իր գաղափարները արտահայտում է Սոկրատի և Գլավկոնի միջև կայացած ալեգորիներով հարուստ երկխոսության միջոցով [61]: Առակում Պլատոնը անուղղակի տարբերակով ցույց է տալիս օտարվածության տարբեր ձևեր՝ հասարակությունից, ընդհանուր գաղափարից, գիտելիքից, սեփական կարողություններից, ինքն իրենից, մյուս մարդկանցից: «Քարանձավի առակը» փիլիսոփայի համար միջոց է ընդգծելու համար հասարակության մեջ իրերի և մարդկանց հարաբերակցությունները, քարանձավն էլ հենց

հասարակություն պրոեկցիան է: Առակի սկզբում ներկայացնելով երկխորշ քարանձավ, որոնցից մեկում մարդիկ շղթայված ստրուկներ են ու չեն կարողանում գլուխները քարձրացնել դեպի լույսը, կողքերը նայել: Այսինքն փիլիսոփան զարգացնում է հասարակությունում մարդկանց հնարավորությունների սահմանափակ լինելու գաղափարը: Քարանձավի մի կողմում պատ է, որից այն կողմ ազատ մարդիկ են և ստրուկները կարող են տեսնել միայն նրանց պատկերների ու կրած իրերի ուրվագծերը: «Վաղ մանկությունից նրանց ոտքերին ու պարանոցներին կապանքներ են, այնպես որ մարդիկ չեն կարող շարժվել, ու տեսնում են նրանք միայն այն, ինչ անմիջապես աչքի առաջ է, քանի որ այդ կապանքների պատճառով չեն կարող գլուխները շրջել: Մարդիկ մեջքով են շրջված կրակից եկող լույսին...»: Ստրուկներն անուններ են տալիս իրենց տեսանելի ստվերների, ձայներին, սակայն դրանց իրական որակները անհասանելի են առաջինների համար, նրանք միայն դրանց մասին պատկերացում ունեն: Իրենց մոտ ստեղծված տպավորությունները պրոյեկտում են համապատասխան ստվերներին:

Այսինքն, նկարագրվում է շատ միակողմանի ազդեցություն՝ «քարանձավը» սահմանափակում է մարդուն, նրա մտավոր գործընթացները, օտարում իրականությունից: Եվ անգամ եթե ստրուկին թույլ տրվի տեսնել պատից այն կողմ եղածը՝ նրանից մեծ ջանքեր կպահանջվեն նոր իրականությունն ընդունելու, վերակառուցելու գիտելիքները, նոր պատկերացումներ կազմելու համար, քանի որ նա այնքան համակերպված է իր նախկին կառուցվածքներին ու պատկերներին: «Մի բանի մասին էլ մտածիր, եթե նման մարդը կրկին քարանձավ իջնի, արդյոք նրա տեսողությունը չի մթագնի, արևի լույսի կտրուկ կորստից: Եթե նա ստվերների նշանակության մասին, ստիպված լինի վիճաբանության մեջ մտնել հավերժ ստրուկների հետ»: Սրանով Պլատոնը ցույց է տալիս մարդու ու հասարակության պահպանողական որակները, որպես խոչընդոտ սեփական առաջընթացին ու անհանդուրժողականությանը: Ընդգծում է մարդու սահմանափակությունը յուրաքանչյուր արդյունքի դեպքում՝ թե խավարում մնալով, թե լույսը բացահայտելով: Մատնանշվում է մարդու օտարվածությունը հնարավորություն ունենալու իրավունքից, գիտելիքից, հասարակությունից:

Հին Կտակարանի, կռապաշտության ու մարդու նախնական մեղքի մասին Քրիստոնեական ուսմունքները կարելի է Հեգելի օտարման շուրջ գաղափարների հմիք համարել [55]: Հեղինակի տեսանկյունից օտարման խնդիրը առաջ է գալիս գիտելիքի խնդրին զուգահեռ: 1807թ.-ին լույս տեսած «Հոգու ֆենոմենոլոգիա» գրքում Հեգելը օտարման մասին անուղղակի կերպով է խոսել՝ ձևակերպելով ոգու ազատության գաղափարը [19]: Աշխատությունում առանցքային է համոզմունքը, որ մարդուն շրջապատող իրականությունը նրանից օտար ու խորթ մի բան չէ, այլ սեփական գործունեության արդյունք է: Սակայն պարադոքսալ է համարում, որ նույն իրականությունը հակադրվում է մարդուն իբրև թշնամական ուժ: Հեգելն այս երևույթն անվանել է օտարում: Նա համոզված է, որ մարդու պատմական զարգացման ու կատեգորիաների տրամաբանական հաջորդականության մեջ տրամաբանական կապ գոյություն ունի: Մարդու յուրաքանչյուր ստեղծագործություն պետք է դրա ծագումնաբանությամբ ու պատմական կայացման տեսանկյունից դիտարկել: Փիլիսոփան մտքի կայացման երեք աստիճան է առանձնացնում [58]: Առաջինը՝ իրականության ընկալում անհատի բնական գիտակցության մակարդակից: Այսինքն, երբ մարդն ի սկզբանե կյանքն ընկալում է իբրև արտաքին, օտար իրականություն: Սակայն անգամ գիտակցության այս մակարդակում, մարդը սկսում է հասկանալ, որ արտաքին աշխարհը մարդու գործունեության արդյունք է: Երկրորդ աստիճանում միտքն ավելի գիտակցված է դառնում: Ի նկատի ունի, որ իրականությունը արդյունք է գործունեության: Սա թույլ է տալիս պատմությունը ամբողջական ու ու որպես օրինաչափություն ընկալել: Գիտակցության երրորդ աստիճանում միտքը նույն ճանապարհն է անցնում, սակայն ոգու պատմությունն ուսումնասիրելու հեռահար նպատակով:

Մտքի շարժման այս երեք աստիճանները ըստ Հեգելի համապատասխանում են գիտակցության, ինքնագիտակցության և բանականության մակարդակներին: Հեգելի ֆենոմենոլոգիան ցույց է տալիս որ գիտակցման հիմնական նպատակ հանդիսացող սուբյեկտի ու օբյեկտի նույնականացումը հնարավոր է միայն եթե այս երկուսը նույն բանն են: Ճանաչել օբյեկտը կնշանակի ուսումնասիրել սուբյեկտի այլակերպ լինելը, օբյեկտիվացնել այն: Ու քանի որ օբյեկտիվացման գործընթացը տարբեր աստիճաններով

է միջնորդավորված, ապա բանականությունը պետք է հաղթահարի դրանք բաժանման, օտարման ու ընկալման շրջանաձև շարժման մեջ: Հեզելը զարգացնելով գաղափարը ասում է, որ վերջնական միտքն էլ է օտարվում: Վերջնական մտքին բնորոշ է ստեղծել արդյունք, ինքնաարտահայտվել օբյեկտներում, ինքնաօբյեկտիվացվել՝ նյութականացվել, սոցիալական ինստիտուտներում ու մշակութային արդյունքներում (արտահայտչամիջոցներում): Այլ կերպ ասած, ըստ Հեզելի ճշմարտությունը մարդու սուբյեկտիվությունից առանձին չէ (այսինքն մարդկայաին իդձեր, նպատակներ, այլ հակումներ...) այլ փաստորեն բացահայտ օբյեկտիվացմամբ քողարկված սուբյեկտիվացում: Ստեղծված օբյեկտները օտարվում են արտադրողից:

Հեզելը ընդգծում է մարդկանց իրականության նկատմամբ գործնական բնույթը: Աշխատանքը առարկայական աշխարհի նկատմամբ մարդկային գիտակցության արտահայտման ձև է: Նա աշխատանքը կապում է մարդու իբրև անհատի արտաքին աշխարհի նկատմամբ գերակայություն հաստատելու, ուրիշին հպատակեցնելու, ինքնուրույն դառնալու ձգտման հետ: Այսպես է առաջանում ստրկացումը [52, 54]: Արդյունքում փոխազդելով բնության հետ ստրուկն իրեն նույնականացնում է սեփական գործունեության սուբյեկտ, ինքնուրույնություն է ձեռք բերում իսկ տերը կախվածության մեջ ընկում ստրուկից: Ստրուկը դառնում է իրավիճակի տեր, տերը իրավիճակի ստրուկ: Հեզելի համար սոցիալական բարիքների ստեղծումը հոգու ուղղակի ստեղծագործություններ չեն այլ հոգու օբյեկտիվացում: Սա նշանակում է նյութականը հոգևոր է միայն թե օբյեկտիֆիկացված ձևով: Այստեղից հետևում է, որ երբ նյութականը օտարված է անձից, և դա ոչ այլ ինչ է, քան անհատից օտարված, օբյեկտիվացված ոգի: «Ոգին իր գոյությունը ձևավորել է համապատասխան իր էության, այն իր օբյեկտն ունի, ինչպես անմիջական արստրակտ տարր» [20]. Ըստ Հեզելի օտարման բանաձևը վերջնականապես կհաղթահարվի միայն այն բանից հետո, երբ մենք կնվաճենք սուբյեկտ-օբյեկտ դիխոտոմիան: Հեզելի պնդմամբ ոգու զարգացման ամփոփիչ փուլը (այսինքն ոգին տարբեր աստիճաններ է անցնում, այնուհետ հանգում համապատասխան որոշման) փիլիսոփայությունն է:

Լ. Ֆեյերբախը հետամուտ է եղել առաջինիս փիլիսոփայական հայացքներին: Ֆեյերբախը 1841-ին լույս տեսած «Քրիստոնեության էությունը» աշխատությունում օտարման մասին գաղափարը զարգացրել է մարդաբանական տեսակետից: Մաքրիստոնեության մարդու վրա ունեցած ազդեցության մասին վերլուծություն է, որտեղ Ֆեյերբախը տվել է օտարման մեխանիկական մատերիալիստների աթեիստական վերլուծություն: Նրա ողջ հայեցակարգը հիմնված է կրոնի քննադատության վրա և քննադատողական էր վերաբերվում նաև Հեգելին ու իդեալիզմին: : Անդրադառնում է, թե ինչպես է կրոնը ձևավորում համապատասխան տրամաբանություն, փիլիսոփայություն, հավատքի ուժ, սահմանափակում մարդկանց ինքնուրույնությունը: Նա մատնանշում է, որ պաշտամունքի առարկա դարձած սրբերը, կամ այլ օբյեկտները իրականում մարդկային ինքնությունն են ներկայացնում, որոնք սակայն ազատ են անհատական սահմանափակումներից: Եվ հակառակը՝ մարդու կարողությունները օբյեկտիվացման արդյունքում օտարված են նրանից [65]:

«Աստծո անհատականությունը ոչ այլ ինչ է, քան մարդուց օբյեկտիվացված, նրանից առանձնացված անհատականությունը, սակայն օտարացման գործընթացում կրոնն աստվածային անհատականությանը վերագրում է գերբնական որակներ, իսկ անհատին՝ մարդուն և աշխարհին վերաբերվելու այլակերպված միջոցներ» [5]:

Ֆեյերբախի քննադատական գրառումներում տեսնում ենք, որ մարդ արարածն օտարված է Աստվածուց: Աստծուն վերագրած բոլոր որակները մարդկային են, սակայն օտարված նրանից, ներկայացված իբրև աստծո մեջ մարմնավորված ինքնուրույն որակներ: Մարդն ամբողջ կյանքում իրեն սահմանափակ է զգում, մահկանացու, անօգնական, թույլ արտաքին ու գերբնական ուժերի հանդեպ: Ֆեյերբախը ցույց է տալիս, որ մարդը կախվածության մեջ է բնությունից, լի վտանգներով ու սպառնալիքներով, բայց միևնույն ժամանակ հույսով է լցված բնության հանդեպ, որը կերակրում է նրան: Կախվածության զգացողությունն էլ կապված է այն ամենի հետ ինչ կարող է տալ ու վերցնել երջանկությունը: Հետևաբար բնական է հավանական վտանգներից խուսափելու ձգումը: Այսպիսով անդունդ է առաջանում իրականության ու ցանկության, նպատակի ու դրա բացակայության միջև: Մեծ ցանկության շնորհիվ սուբյեկտիվը դառնում է օբյեկտիվ,

երևակայականը, բաղձալին՝ իրական: Սակայն քանի որ մարդն ի գորու չէ ինքնուրույն դա անել, նա օգնության է դիմում աստվածներին: Ֆեերբախն ասում է. «Աստված մարդու երջանկության ձգտումն է, որ իր բավարարվածությունը երևակայության մեջ է գտել... Մարդը հավատում է անմահությանը ու նման հավատքը արդարացնելու, հիմնավորելու համար հավատում է աստծուն» [67]: Կարելի է ենթադրել որ երևակայության զարգացումն ու հավատը հրաշքներին օտարում է մարդուն սեփական կարողությունների զարգացումից ու ինքն իրեն վստահելու, ինքն իր մեջ ուժ գտնելու ունակությունից: Ֆեերբախը համոզված է, որ ոչ թե աստված է ստեղծել մարդուն, այլ մարդն աստծուն իր նմանությամբ: Ի հակադրություն աստծո նկատմամբ ունեցած սիրո նա կոչ է անում առաջնային դարձնել սերը մարդու հանդեպ՝ որպես միակ ճշմարիտ սեր:

Չնայած Կ. Մարքսի փիլիսոփայական հայացքները ձևավորվել են Հեգելի գաղափարներից (Հեգելը մարդկային պատմությունը դիտարկում էր բանականության զարգացման կոնցեպտով, մարդու օտարվածությունը՝ սուբյեկտ-օբյեկտ բաղկացուցիչների մեկ ամբողջականից զատված տարբերակով), սակայն Մարքսիստական օտարումը որպես տնտեսական հենքով հասարակական երևույթ է ներկայացվում: Մարքսիստական օտարման մեկնաբանությունը առանցքայնորեն տարբերվում է նաև իրեն հաջորդող մյուս տեսաբանների տեսակետներից՝ այն իմաստով, որ մարդուն դիտարկում է որպես պատմականորեն զարգացած սոցիալական էակ: Որը պարբերաբար կատարելագործելով իր աշատանքի արդյունքները օբյեկտիվացրել է դրանք ու կտրվել իր բնական գոյության ձևից: 1844թ.-ին լույս տեսած «Տնտեսափիլիսոփայական ձեռագրեր»-ում Կ. Մարքսն օտարմանն անդրադառնում է դասակարգային կոնֆլիկտի հիմնավորմամբ, իբրև շուկայական հարաբերությունների արդյունք է [53]: Նա գտնում էր, որ բանվոր դասակարգի ու կապիտալիստների միջև կա տնտեսական անդունդ: Մարքսը սոցիալական դասակարգման հիմքով, ցույց է տալիս բանվոր դասակարգի օտարումը մասնավոր սեփականությունից ու աշխատանքի բաշխման գործընթացից, ժամանակակից տնտեսական պայմաններում մարդու շահագործումն և օտարվածությունը:

Կյանքի ու դրա միջոցների թանկացմանը զուգահեռ որքան մեծ է արտադրանքի ծավալը, այնքան ավելի շատ բարիք է արտադրում բանվորը և այդքան ավելի աղքատ է դառնում, զրկվում արժանապատվությունից, ավելի էժան է գնահատվում, արժեզրկվում, այդքան ավելի քիչ կարող է սպառել, որքան լավ է ձևավորված արտադրանքը, այդքան դեֆորմացվում է բանվորը, որքան մշակութային է ստեղծած օբյեկտը, այդքան բարբարոս է բանվորը, որքան հնարամիտ /հագեցած տեխնիկապես/ է աշխատանքի միջոցը, այդքան ծայրահեղ ծանր կարող է լինել աշխատանքը: Աշխատանքը ոչ միայն ապրանքներ է արտադրում այլև արտադրում է աշխատանք և աշխատողին իբրև ապրանքատեսակ: Մարդու օբյեկտիֆիկացիան այն աստիճանի է, որ աշխատանքի իրականացումը թվում է իրականության կորուստ, աշխատանքն ինքնին օբյեկտ է դառնում, որի ձեռքբերումը հնարավոր է միայն ահռելի ջանքերի շնորհիվ:

Վերոհիշյալ բոլոր ձևակերպումները ներկայացնում են Մարքսի տված օտրաման սահմանման 4 տարբերակումներում: 1-ինը՝ օտարում սեփական աշխատանքի արդյունքից: Երբ աշխատանքն ապրանք է դառնում, շահույթը՝ խթանում տնտեսությունը և զարգանում մասնավոր սեփականությունը [31, էջ 242]: Արդյունաբերող հասարակությունում աշխատանք արտադրող օբյեկտը, աշխատանքի արդյունքը հակադրվում է բանվորին, իբրև օտար մի բան, իբրև արտադրողից խորթ, օտար ուժ: Օբյեկտի յուրացումը օտարված է բանվորից, որքան շատ է նա բարիքներ ստեղծում՝ այնքան ավելի քիչ բան կարող է իրեն թույլ տալ և այդքան ավելի կախվածության մեջ է կապիտալից: Նման հանգամանքներում աշխատանքի իրականացումը բանվորի ինքնադրսևորման կորուստ է հանդես գալիս [31, էջ 272]: Երբ բանվորը ներդնում է իր ներուժը և չգիտի ինչ է իր կատարած աշխատանքի վերջնական արդյունքը, դա նրանից օտարված օբյեկտ է: Աշխատանքից օտարումը բացահայտ է, երբ այն պարտադրված չէ, մարդն իրեն կտրված է զգում սեփական բնությունից, դրա համար էլ ծուլանում ու փախնում է աշխատանքից:

Ասվածից հենում է, որ որքան շատ է բանվորը վատնում իր ուժերը, այնքան օբյեկտիվ աշխարհն ավելի օտարված է նրանից, որը հենց բանվորն է արարում: Որքան օտարված է այդքան ավելի աղքատ է թե նյութապես, թե ներաշխարհով: Սեփական

աշխատանքի արդյունքից օտարումը նաև նշանակում է, որ աշխատանքը բանվորից անկախ, իրենից դուրս մի բան է, որին բանվորն առերեսվում է: Աշխատանքի արդյունքում գեղեցիկ, թանկարժեք արտադրանք ստացվում, բայց բանվորի համար միայն զրկանք ու տգեղություն է «արտադրվում»: Աշխատանքը մեքենայացվում է, բայց շատ բանվորների համար ստեղծում անմարդկային աշխատանքի պայմաններ: Այսինքն այն կյանքը որ հանուն օբյեկտի է անցնում հակադրվում է բանվորին իբրև օտար ու թշնամական մի բան:

Մարքսի օտարման 2-րդ տարբերակը՝ օտարումն է արտադրության գործընթացից: Այստեղ առաջնահերթ նշվում է այն հանգամանքը, որ աշխատանքը մարդու ներքին գործընթացներից անջատ մի բան է ու դրա հմար մարդն իր կատարած աշխատանքով ինքնահաստատվելու փոխարեն մերժում է ինքն իրեն: Բանվորն իրեն գոհ, սակայն դժբախտ է զգում, չի զարգացնում իր ներքին, մտավոր ու արտաքին պոտենցյալը: Երբ աշխատանքն արտաքին մի բան է ու չի համընկնում ներքին պահանջմունքներին, ապա աշխատանքի մեջ բանվորը չի զարգանում ու հաստատվում, այլ մերժում է իրեն [31, էջ 274]: Աշխատանքը ոչ թե կամավոր, այլ տնտեսապես պարտադրված է: Բանվորը գոհաբերում է իրեն: Արտաքին աշխատանքը բնութագրում է նաև, հանուն ուրիշ մեկի բարոքության լինելով, որտեղ այդ մեկը ղեկավարում է բանվորին: Մարդն իրեն ազատ է զգում միայն կենդանական բնագոյներից բխող պահանջմունքները բավարարելիս:

Օտարման 3-րդ տարբերակումը՝ օտարում մարդկայինից /էն ամենից ինչի շնորհիվ մարդն առանձնանում է կենդանիներից/: Մարքսը խոսում է տեխնոլոգիական զարգացուման արդյունքում մարդու և բնության հարաբերակցման նոր մակարդակի ձևավորման մասին, որ շուկայական հարաբերությունների արդյունքում բերում է բնությունից օտարման երկակի իմաստով: Ինչքն բանվորը իր աշխատանքով յուրացնում է արտաքին աշխարհը, զգայուն բնությունը, այնքն բանվորն ինքն իրեն, կրկնակի իմաստով, կյանքի համար անհրաժեշտ միջոցներից է զրկում՝ զգայուն բնությունը դադարում է աշխատանքին պատկանող օբյեկտ լինել, իբրև աշխատանքի միջոց և երկրորդ՝ արտաքին աշխարհը անմիջականորեն ավելի քիչ է կյանքի համար միջոցներ

տալիս՝ գուտ ֆիզիկական գոյության համար: Բանվորը իր աշխատաքնի առարկայի ստրուկն է դառնում:

Մարդու հոգեվոր ու ֆիզիկական կյանքը անմիջականորեն կապված են բնության հետ, ինքնին բնության մաս են: Օտարված աշխատանքը օտարում է մարդուն բնությունից ու ինքն իրենից՝ սեփական ակտիվ կենսագործունեությունից: Արդյունաբերական հասարակությունում մարդն օտարված է իրեն մարդ դարձնող աշխատանքից [31, էջ 277]: Մարդն օտարված է իր մարդկային էությունից, անհատական կյանք զարգացնելու հնարավորությունից: Առաջնային են դառնում ֆիզիկական գոյությունն ապահովող գործողությունները: Մինչդեռ լիարժեք կյանքը ազատ ու գիտակցված կյանք է վերարտադրում: Մարդն իր կենսագործունեությունը սեփական կամքի ու գիտակցության օբյեկտ է դարձնում: Գիտակցված կենսագործունեությունը՝ աշխատանքը, նպատակները առանձնացնում է մարդուն կենդանիներից: Եվ հենց գիտակցությամբ առանձնանալու շնորհիվ, մարդն իր կենսագործունեությունը, աշխատանքը մարդկային կարիքները բավարարելու գոյության ձև է դարձրել:

4-րդ տարբերակումը ներկայացնում է տեսության ամենախոր գաղափարը՝ մարդու օտարումը իր նմանից, մերձավորից: Մարդու օտարումը մարդուց... համապատասխանաբար, օտարված աշխատանքի պայմաններում յուրաքանչյուրը դիտարկում է մյուսին հարաբերությունների ստանդարտներին համապատասխան, որպես օբյեկտ, որտեղ իրեն բանվոր է տեսնում [31, էջ 277-278]: Արդյունաբերական, եկամուտի բազմապատկման աշխարհում, սեփական շահերով առաջնորդվելով, մարդիկ մյուսներին իբրև գործիք են վերաբերվում: Ըստ Մարքսի գնահատման, սա ամենավատ օտարման ձևն է, որ հատուկ է ժամանակակից քաղաքային ու արդյունաբերական կյանքին: Մենք չենք շփվում ու վերաբերվում միմյանց ինչպես անհատականություն, այլ միտված ենք օգտագործել դիմացինին որպես օբյեկտ:

Մարքսի կարծիքով օտարումը արդյունք է շահույթ հետապնդող ու տնտեսական հիերարխիկ միջավայր ստեղծող մրցակցային կապիտալիզմի, ինչպես նաև այն, որ օտարումը ժամանակակից հասարակությունների տարածված առանձնահատկություններից մեկն է: Կապիտալիզմը հավասարության պատրանք է

ստեղծում, որը սակայն հեռու է իրականությունից: Այստեղ մասնավոր սեփականությունը մի կողմից արդյունք է օտարված աշխատանքի, մյուս կողմից՝ դրավերարտադրման առիթ ու միջոց է: Ըստ էության ասվածը ստրկության ժամանակակից տարբերակ է հիշեցնում: Այս կոնտեքստում Մարքսը շեշտում է գիտակցության, գործիքների զարգացման ու դրանց նպատակային օգտագործումը, սոցիալական համակարգի ստեղծումն ու զարգացումը, աշխատանքի ու արտադրանքի դերը հանուն մեկ նպատակի:

Մարքսը շեշտում է, որ նման դրվածքը քաղաքական տնտեսությամբ է պայմանավորված: Բանվոր դասակարգը ամենաշահագործվածն է կապիտալիստական հասարակությունում: Ժամանակի ընթացքում դուրս մղվելով սեփական հողերից ստիպված են տեղափոխվել տնտեսապես ավելի շահավետ միջավայր, որտեղ վաճառելով աշխատուկայում իրենց աշխատուժն ու ժամանակը ձեռք են բերելում գործունեությանն անհրաժեշտ միջոցներ: Սակայն շահույթ չեն հետապնդում՝ քանի որ այն, ինչպես և աշխատանքի արդյունքը ի սկզբանե պատկանում է կապիտալիստներին, չեն տեսնում իրենց կատարած մասնավոր աշխատանքի վերջնական արդյունքը: Բանվորն անկարող է տնօրինել սեփական հնարավորությունները, հարկադրված է որոշումներ ընդունում, կտրված է կյանքի գեղեցկությունն ու իմաստը գնահատելու հնարավորությունից: Որքան շատ է բանվորը ձգտում ունենալ, այնքան շատ է աշխատում, ու այդքան շատ է հեռանում իր նպատակից՝ կորցնելով ժամանակ, առողջություն ու հետևաբար կրճատելով կյանքը: Աշխատաքնի բաժանման արդյունքում նա կտրվում է ոչ միայն սեփական աշխատանքից, հասարակությունից այլև բնությունից ու ինքն իրենից:

Ժամանակակից հասարակություններին բնորոշ տնտեսական ճգնաժամ, մարդկային փոխհարաբերություններում, բարոյական արժեքների ոչնչացման, անկարգությունների ու դեվիանտ վարքի դրսևորման երևույթները սահմանելիս է. Դյուրգհեյմը՝ իր տեսությունում օգտագործել է անոմիա տերմինը: Ըստ Դյուրգհեյմի անոմիան, աննորմալությունները բացառապես հասարակական իրավիճակ է բնորոշ անցումային ժամանակաշրջաններին: Ժամանակային առումով ավելի վաղ լույս տեսած

(1893թ.) «Հասարակական աշխատանքի բաժանում» գրքում Դյուրգհեյմը հասարակությունը ցույց է տալիս որպես անընդհատ զարգացող օրգանիզմ [17]: Հարկ է նշել, որ նա մեծապես տպավորված է եղել կենսաբանությունից և որպես հետևանք օրգանական հավասարակշռության ու սիմբիոզի կոնցեպտուալ մոտեցումները արտացոլվել են նրա կողմից առաջադրած դրույթներում:

Մարդիկ, ըստ Դյուրգհեյմի, ի տարբերություն կենդանիների անսահմանափակ ցանկություններ ունեն ու չեն հագենում դրանք բավարարելով, «որքան շատ ունի, այնքան ավելի շատ է ուզում, քանի որ նախորդ պահանջմունքի բավարարումը միայն խթան է նորի համար»: Լավ կարգավորվող հասարակություններում սոցիալական վերահսկումը սահմանափակում է առանձին անհատների հակումները: Դյուրգհեյմը սահմանում է կոլեկտիվ գիտակցության գաղափարը և զարգացնելով միտքը հիմնավորում օրենքի առկայությունը, որպես դրա ցուցանիշ: Երբ կարգավորող համակարգերը չեն գործում, վերահսկման ազդեցությունը թուլանում է անհատներն այլևս ազատ են իրենց գործողություններում: Նման իրավիճակը Դյուրգհեյմն անումիա է անվանում: Սոցիալական կառուցվածքում ցանկացած փոփոխություն կարող են անումիա ստեղծել դրա կամ ամբողջական կամ մասնակի հատվածներում: Դյուրգհեյմը պնդում է, որ տնտեսական հարստությունը իր մեջ վտանք է պարունակում, քանի որ խթանում է մեր ցանկությունները ու պատրանք է ստեղծում, որ մենք միայն մեզնից կախվածություն ունենք իսկ անազատությունը սանձող ազդեցություն ունի: Հետևաբար աղքատներն ավելի քիչ են անումիկ վիճակի մեջ լինում, քանի որ նրանց ցանկությունները սահմանափակ են:

Դյուրգհեյմը վաղեմի ու ժամանակակից հասարակությունների տարբերության հիմքում տեսնում է աշխատանքի բաժանումը, ինչը որոշ կետերում համահունչ է Ադամ Սմիթի մարդկային հասարակության զարգացման մասին դրույթին, որտեղ հիմնավորվում է աշխատանքի բաժանման աստիճանական զարգացումը: Դյուրգհեյմը առաջ է քաշել մեխանիկական ու օրգանական համերաշխության գաղափարները: Նա տեխնոլոգիական ոլորտի զարգացումը կապում էր աշխատանքի բաժանման հետ: Աշխատությունում անումիան նկարագրվում է իբրև պաթոլոգիա, որ զարգանում է

աշխատանքի բաժանման արդյունքում: Դյուրզհեյմի պատկերացմամբ, հասարակության ժամանակակից շուկայական հարաբերությունների, տեխնոլոգիաների, տնտեսության զարգացման, աշխատանքի բաժանման ընթացքում, որոշ համակարգ է ձևավորվում որպես ընդհանուր օրգանիզմ (ինչպես կենդանի օրգանիզմում), որտեղ որոշ օրգան համակարգեր կարող են անհամաչափ զարգանալ՝ հիմք հանդիսանալով բարոյական նորմերի անկման, դեվիանտ վարքի, անկազմակերպվածության, օրենքի ու կարգավորող համակարգերի բացակայությանը կամ չգործելուն, և այլն...

Սովորաբար աշխատանքի բաժանումը հիմք է հանրային համերաշխության, այնուամենայնիվ լինում են հակառակ դեպքեր: Իմանալով, թե ինչ պայմաններում է աշխատանքի բաժանման համերաշխությունը դադարեցվում, կարող ենք իմանալ ինչը կնպաստի դրա առաջացմանը, կամ դրական արդյունքին [17, էջ 291]: Անհնար է հասարակական կյանքն առանց պայքարի պատկերացնել, օրգանական համերաշխության դերը մրցակցությունը չափավորելու մեջ է [17, էջ 302]: Սակայն որոշ դեպքերում կարգավորող գործընթացները /մրցակցությունը չափավորող/ կամ գոյություն չունեն, կամ աշխատանքի բաժանման զարգացվածության աստիճանի հետ կապ չունեն [17, էջ 303]: Եթե աշխատանքի բաժանումը համերաշխություն չի սահմանում, ապա դա նշանակում է, որ օրգանների միջև հարաբերությունները չեն կարգավորվում և դա անոմիա է [17, էջ 304]: Քանի որ աշխատուժն ավելի աստիճանակարգված է դառնում կոմերցիոն ճգնաժամները, սնանկությունը, կապիտալի և աշխատաշուկայի միջև թշնամանքն ավելի հաճախակի է դառնում... Ինչքան արդյունաբերական գործառույթները նեղ մասնագիտական են դառնում, այնքան պայքարն ավելի կատաղի է դառնում...

Դյուրզհեյմի պնդմամբ, պաթոլոգիաներն առաջանում են ծայրահեղ կարգավորող մեխանիզմների կամ աշխատանքի հարկադիր բաժանման արդյունքում (համակարգային ճգնաժամ, դասային կոնֆլիկտ, դեպրեսիաներ): Ավանդական հասարակություններում, մեխանիկական համերաշխության պայմաններում դասակարգային կոնֆլիկտը քիչ հանդիպող երևույթ է, ինչը լրիվ հակակռակն է ժամանակակից հասարակությանը բնորոշ աշխատանքի ծայրահեղ բաժանմանը:

Միջնադարում դասակարգային հակամարտությունները բացառիկ էին... Այս լարվածությունը մասնակիորեն պայմանավորված էր նրանով, որ բանվոր դասակարգը չէր ձգտում համապատասխան ստատուսի [17, էջ 292-293]: Սեփական գործունեությամբ անհատն ինքն իրեն կսահմանափակի: Արդյունքում տեղյակ չի լինի ում հետ է համագործակցում նույն նպատակի շուրջ, նա անգամ այլևս չի պատկերացնում, որ ընդհանուր նպատակ կամ խնդիր գոյություն ունի և թե որն է դա... Հետևաբար աշխատանքի բաժանումը չի կարող դիտարկվել առանց մասնատման աղբյուր դառնալու [17, էջ 294]: Աշխատանքի հարկադրի բաժանման մասին խոսելիս, Դյուրգեյմն ի նկատի ունի իրավիճակ, երբ իշխանությունները գերշահույթի ձգտելով հարկադրում են մարդկանց գործունեության այն տարբերակները, որոնց մարդիկ պատրաստ չեն ու սովոր չեն: Բանվորներն արդյունքում դժբաժտ են իրենց զգում և նրանց մոտ իրերի դասավորվածությունը փոխելու ձգտումը կարող է հասարակության ոչ ստաբիլ վիճակների առիթ լինել:

Այնուամենայնիվ օերնքի գոյությունը բավարար չէ, երբեմն հենց այդ օրենքներն են չարիքի պատճառ դառնում: Դասակարգերի ինստիտուտը սերտորեն համագործակցող մեկ համակարգ է կազմում, և հաճախ ցածր դասակարգից հատուկ հանգամանքներում զարգացող հակասությունների պատշառ դառնում: Նման արդյունքը աշխատանքի բաժանման հետևանք է: Ի հակադրություն անոմիայի գեր կանոնակարգումը բերում է ֆատալիզմի [17, էջ 310-311]: Աշխատանքի բաժանումը բանվորի աշխատանքի նշանակությունը իջեցնում է մեքենայացման մակարդակի: Բանվորն այլևս անտեղյակ է իր կատարած գործնեության վերջնական նպատակից, եթե դրանք չի կապում որևէ նպատակի: Ամենօրյա մոնոտոն օրինաչափությամբ նա կրկնում է նույն շարժումները առանց դրանց նշանակությունը հասկանալու կամ որևէ հետաքրքրության [17, էջ 306]: Այս հետևանքները չեն զարգանում աշխատանքի բաժանման իմպերատիվ պահանջով այլ բացառիկ և աննորմալ հանգամանքների բերումով: Սակայն դրա զարգացման համար առանց մարդկային գիտակցությանը բացասական ազդեցություն գործելու, հարկ չկա այն չեզոքացնել մեխանիկական համերաշխության վեկադառնալու միջոցով [17, էջ 307]:

Որպես լուծում Դյուրգիեյմն առաջարկում է արժեքային, նորմատիվային համակարգերի վերականգնում որը հետևաբար կրերի անոմիայի խնդրի վերացման: Սակայն նա նաև պնդում էր, որ անոմիան աշխատանքի բաժանման անխուսափելի արդյունք չէ: Աշխատանքի բաժանումը կարող է լինել պարտադրողական կամ ծայրահեղ, սակայն կոլեկտիվ գիտակցականում կան տարրեր (մշակութային, կրոնական, էթիկայի), որոնք կարգավորում են աշխատանքի բաժանման մրցակցայնությունը, ապա անոմիա չի զարգանում: Եվ/կամ դասակարգային կոնֆլիկտն ու աշխատանքի բաժանումը կհաղթահարվի միայն այն դեպքում, երբ ընդհանրապես ոչ մի խոչընդոտ չի կարող խանգարել մարդկանց զբաղեցնել իրենց ընդունակություններին համապատասխան հաստիքներ, որտեղ մարդը կկայանա ու կինքնարտահայտվի:

20-րդ դարի գերմանացի փիլիսոփա Մ. Վեբերը վերլուծելով իր ապրած ժամանակաշրջանի՝ հեղափոխական Գերմանիայի արդյունաբերական հեղաշրջումը և նոր կառավարչական էլիտայով հին արիստոկրատիայի փոխարինումը, տվել է կապիտալիստական հասարակության ձևավորման հիմնադրույթները, որը հետագայում դասակարգային շերտավորումների ու օտարման առիթ դարձավ [4,48]: Վեբերը կապիտալիզմի ձևավորման հիմքում տեսնում էր Բողոքական՝ մասնավորապես Կալվինիզմի գաղափարախոսությունը և դրա վրա կառուցված քաղաքական բյուրոկրատիան: Սրանք, գործիքներն են, որ հնարավոր են դարձրել լայն հանրության կազմակերպված կառավարման: Նրա վերլուծություններում բյուրոկրատիան ու բողոքականությունը մարդկանց մեջ գեներացնում են մեղքի զգացողությունը, որ մեղքերը կարող են մարվել միայն անդադար, քրտնաջան աշխատանքի շնորհիվ: Արդարությունը, հարգանքն ու բարեկեցությունը աստծո հրաշքներ չեն, այլ հանրությանն ուղղված տարիների անձնուրաց աշխատանքի արդյունք: Բողոքականներն ու գիտական կապիտալիզմը մերժում էին հրաշքի գոյությունը՝ Վեբերն այս երևույթն անվանեց աշխարհի օտարում - disenchantment: Համապատասխանաբար՝ մարդկանց ձգտումը գտնել բացատրություն համապատասխան փոփոխություններին բերեց գիտական բացահայտումների և անխուսափելիորեն նաև տեխնոլոգիական զարգացումների: Շարունակելով նա պնդում է, որ շատ երկրներում կապիտալիզմ չի զարգանում

որովհետև այնտեղ մարդիկ բավականաչափ մեղավոր ու անհանգիստ չեն զգում իրենց: Հավատալով հրաշքներին՝ գերադասում են վայելել ներկան, քան ներդնել վաղվա օրվան:

Ըստ Վեբերի մինչև կապիտալիզմը հասարակությունը շերտավորումը ստատուսային էր: Կապիտալիստական մրցակցային հասարակություններում դիտվում է դասակարգային շերտավորումների ձևավորումը (Դասակարգային պատկանելությունը պայմանավորված է շուկայական դրությամբ [48, էջ 927], որտեղ մարդիկ առաջնորդվում են ելնելով սեփական, այլ ոչ թե հանրային շահերից, չնայած ունեն ընդհանուր դասակարգային շահեր: Համապատասխան կենսակերպ վարող մարդիկ համախմբվում են ընդհանուր գաղափարի շուրջ ու կապեր ստեղծում նույն դասակարգի ներկայացուցիչների հետ, մինչդեռ տվյալ շերտից դուրս «ներխուժող» մեկը աուտսայդեր է համարվում: Տիրապետման արդյունքները, որպես այդպիսին, իրական դասակարգի ձևավորման գրավական են: Վեբերը գտնում էր, որ օտարումը աշխատանքի վայրում վերահսկողության ու ազատության բացակայության արդյունք է՝ այսինքն ինդիքն առաջանում է իշխանությունների կամ պատասխանատու օղակների կառավարման ոչ ռացիոնալության արդյունքում: Իրականում, դասակարգային դիրք նշանակում է, որ մարդիկ ունեն նույնանման կենսական հնարավորություններ, քանի որ դա պայմանավորված է բացառապես տնտեսական շահերով և շուկայական պայմաններով [48, էջ 302-304,927]: Իսկ մասնավոր մակարդակում բյուրոկրատիզացիան հանգեցնում է դեպերսոնալիզացիայի: Որքան ավելի հաշվարկային ու պլանավորված է, կտրված թուլացնող ապրումներից (սեր, ասելություն, և այլ իռացիոնալ զգացումներ) այնքան ավելի դեպերսոնալիզացված է մարդը, հասարակությունը: Ու քանի որ դա է կապիտալիզմի պահանջը, ապա ստացվում է, որ բյուրոկրատիան և օտարումը – disenchantment-ը անխուսափելի է կայուն հասարակության զարգացման համար: Շուկան չունի անհատական տարբերակումներ, նրա «ֆունկցիոնալ» շահերը գերակա են: Չկա պատվի հասկացություն: Իրերի դասավորվածությունը կվտանգվի, եթե տնտեսական ձեռքբերումը ստորադասվի հանուն մեկի, պատվի... դա կխոչընդոտի շուկայի ազատ զարգացմանը [48, էջ 937]:

Բյուրոկրատիզացիայի ու ռացիոնալիզացիայի աշխարհի վրա ունեցած ազդեցության հայացքներում Վեբերան հայեցակարգը հիշեցնում է Մարքսի օտարման սահմանումը: Երկուսն էլ ընդունում են կառավարման ժամանակակից մեթոդների արդյունավետությունը արտադրանքի կազմակերպման գործում որ մարդուն բերել բնության հանդեպ աննախադեպ դոմինանտ դիրքի, որի արդյունքում, սակայն ակտուալ է դեպերսոնալիզացիայի խնդիրը: Վեբերը հակառակվում է Մարքսին մարդու ազատագրման ճանապարհին օտարումը զուտ անցումային փուլ դիտարկելու հարցում, որ օտարումը արտադրության համակարային ռացիոնալիզացիայի անխուսափելի արդյունքն է, ու ոչ պարզապես կապիտալիզմի արդյունք: Որպես լուծում Վեբերն առաջարկում է մի համակարգի ստեղծում, որտեղ բոլոր դասակարգերի ու ստատուսների մարդիկ կարող ոն ազատ համագործակցել:

20-րդ դարում ազատությունը կարևոր խնդիր է համարվում, որի համար պետք է պայքարել ու պաշտպանել [68]: Սակայն միշտ չէ, որ ազատությունը գաղափարը կարևոր է եղել մարդկան համար, իբրև կենսափորձ ու մտածելակերպ, կամ միանշանակ հաճելի/ցանկալի մի բան: Իր «Փախուստ ազատությունից» գրքում Է. Ֆրոմը վերլուծելով հասարակության զարգացման պատմական փուլերը՝ տվել է վերոհիշյալի հիմնավորում և օտարմա առավել մանրամասն մեկնաբանություններից մեկը: Հեղինակն ասում է, որ ժամանակակից մարդու խնդիրը ինքն իրենից օտարված լինելն է: Մարդկանց ճնշող մեծամասնությունը խոսքերի մակարդակում ընդունելով ազատության կարևորությունը, իրականում այն անգիտակցորեն որպես բեռ է ընկալում ու հավասարեցվում միայնակությանը: Իսկ միայնակությունը տանջալի ու անբնական վիճակ է սոցիալական էակ հանդիսացող մարդու համար՝ անորոշության ու անհանգստություն զգացողություն է առաջացնում: Ֆրոմը զուգահեռաբար ներկայացնում է նաև անհատականության ու բացառիկության զարգացմանը խոչընդոտող ժամանակակից հասարակության սպառնալիքները: Կարևոր է նշել գրքի ժամանակագրությունը, որովհետև դրանում տեղ գտած անձի զարգացմանը խոչընդոտող սպառնալիքները համապատասխանում են պատերազմայան իրավիճակին: Ըստ Ֆրոմի մինչև կապիտալիզմ անձի ազատություն որպես այդպիսին

գոյություն չի ունեցել: Մարդու աշխարհագրական (բնակության վայրի փոփոխություն) և սոցիալական (սոցիալական աստիճանի փոփոխություն) մոբիլությունը, իր ողջ կյանքի ընթացքում, շատ սահմանափակ է եղել: Իրավիճակը հատկապես սրվում էր եկեղեցու գերիշխանության ազդեցությամբ, որը անհատի կամքի դրսևորումը մեղք և չարիք էր որակավորում: Փոխարենը միջնադարյան մարդու աշխարհը պարզ էր և հարմարավետ, իր նմանների շրջապատում անվտանգ էր գգում [12, էջ 64-68]:

Այսպես կոչված նորագույն պատմության զարգացմանը համընթաց Ֆրոմմը խոսում է անհատական ազատության պայքարի մասին (բնության դեմ, իշխանավորների բացարձակ ուժի դեմ, եկեղեցական ճնշման դեմ և այլն): Վերլուծելով 20-րդ դարի սկզբին (Գերմանիայում, Իտալիայում, ՍՍՀՄ-ում) անհատական ազատությունը սահմանափակող տոտալիտար հասարակությունների ձևավորման պատճառները Ֆրոմմն ասում է, որ ժողովրդի աջակցության շնորհիվ է միայն, որ մակիավելիստները հաջողել են: Նրանք հիմնվել են համընդհանուր վախերի, կոլեկտիվ անգիտակցական ձգտումներին, մարդկանց, որոնք չգիտեին թե ինչպես ազատ լինել ու ձգտում էին իրենց ճակատագիրը հանձնել վերին ուժերին՝ իշխանությանը, փոխարենը ակնկալելով պաշտպանություն և հոգեբանական կոմֆորտ: Խոսքը գնում է մարդու ինքնաստարման մի տարբերակի մասին, երբ նա որոշակի հանգամանքներից ելնելով խուսափում է պատասխանատվությունից, չի վստահում իր ուժերին ու հույսը դնում է իրենից զորեղ մարդկանց, կառույցների [10]:

Կապիտալիստական համակարգը յուրօրինակ գազաթնակետ է անձնական ազատության, հավասար հնարավորությունների հասարակություն՝ որտեղ մարդիկ անկախ իրենց ծագումից կարող են ամեն ինչի հասնել շնորհիվ անհատական որակների՝ նպատակասլացություն, աշխատասիրություն, տաղանդ, կամքի ուժ և այլն: Սակայն շուկայական հարաբերություններում անհատականության դրսևորումը նույնքան հազվադեպ է որքան և տոտալիտար ժամանակաշրջանում և հավասարեցվում է ապստամբությանը՝ քննադատվում: Ֆրոմմի «օտարման» դրույթը բխում է մարդու իր ունեցածը ուրիշին վերագրելու մտքից: Նա հարց է բարձրացնում արդյոք ազատության ծարավին զուգահեռ մարդուն բնորոշ չէ հնազադվելու ձգտումը: Վաղ մանկությունից

դաստիարակության միջոցով զգացմունքների ինքնաբուխ արտահայտումը ճնշվում է: «Սեփական մտքերն արտահայտելու իրավունքը, իմաստ ունի միայն այն դեպքում, եթե մենք ընդունակ ենք սեփական կարծիք ունենալու» [10, էջ 201]: Համապատասխանաբար մարդն օտարված է ինքն իրենից, իր գործողություններից, կախված է ուրիշի/հասարակության կարծիքից: Միևնույն ժամանակ առաջնորդվելով այլ ուժերի կողմից ապրում է պատրանքով, որ անում է ինչ ուզում է: Կորցնելով իր և այլի միջև եղած սահմանները՝ մարդն իրեն չի զգում սեփական հնարավորությունների, կարողությունների, ուժի կրող, այլ իբրև «իր», որ կախվածության մեջ է իրենից դուրս լիազորություններից: Հեղինակը կարծում է, որ մարդ պատկանում է իր սեփական ստեղծագործությանը կորցնելով դրանց վրա ազդելու հնարավորությունը, որը բերում է անձնային, տնտեսական, քաղաքական օտարման: Միայն ներքին ազատության շնորհիվ է որ արտաքին փոփոխությունների դեպքում մարդու ինքնությունը կարող է անվնաս մնալ [51, 73,]:

Ուսումնասիրելով և համեմատելով մարդու մոտ ազատությունից վախ առաջացնող գործոնները է. Ֆրոմը գալիս է եզրակացության, որ դրանք զգալիորեն շատացել են, և կարևոր կարևորագույն հանգամանք է ատոմային էներգիայի բացահայտումը՝ դրա որպես զենք օգտագործման հավանականությունը: Միջուկային հեղափոխությանը զուգահեռ զարգանում է կիբեռ հեղափոխությունը: Վերջինիս արդյունքում մարդիկ փոխարինվում են հսկա սարքավորումներով, համակարգիչներով (ավելի արագ մտածող քամ մարդը) և մարդը «անպետք» է դառնում՝ մեծանում է դեմոգրաֆիական պայթյունի վտանգը: Այսինքն գիրքը գրելուց 20-ից ավել տարիներ անց մարդկային տիպի գոյատևմանը սպառնացող հսկա ուժեր են ի հայտ եկել, որից էլ բխում է համապատասխան արժեքային համակարգն և ազատությունից փախնելու ձգտումը: Ավելացել է անհատակն և սոցիալական իրողությունների կարևորությունը: Սակայն մեծամասամբ մարդը դեռ բավականաչափ հասուն չէ՝ անկախ, խելամիտ և օբյեկտիվ լինելու համար: Մարդը չի կարողանում լիովին տրվել սեփական ուժերին, իր սեփական կյանքին ինքնուրույն իմաստ տալ, այլ ոչ թե դա ստանալ վերին, այլ ուժերից: Թերևս դրա համար մարդկանց լեզենդներ, միֆեր, առասպելներ և կուռքեր են պետք:

Մեկ այլ հեղինակ որ «ազատության», «գիտակցության», «ոչինչ»-ի ու «ես»-ի մասին խոսելիս անդրադառնում է օտարմանը, դարձնելով այն իր տեսության մեջ առանցքային գաղափար՝ Ժ. Պ. Սարտրն է: Ազատությունն ըստ Սարտրի միանշանակ ու անդառնալի մի բան է ու մարդը դատապարտված է լինել ազատ: Նա ազատությունն ընկալում է ոչ թե ոգու ազատության տեսանկյունից, այլ կամքի, էքզիստենցիալ ընտրության ազատություն՝ որն անհատից ոչ ոք չի կարող վերցնել: Ընդ որում նա ասում է, որ ընտրությունը ամենաբարդ ու ամենապատասխանատու քայլն է մարդու համար: Որովհետև ամեն դեպքում մարդըն ավստոսում է իրերի զարգացման մյուս հավանական տարբերակի համար: Ազատ կամքի դրսևորման ու ես-ի հայեցակարգը փիլիսոփան նախագծի տեսքով է զարգացնում, համաձայն որի մարդը բաց է կյանքի առաջ ու ողջ կյանքի ընթացքում հավաքում, ձևավորում է իրեն: Մարդու ով լինելը մարդու գիտակցությամբ է պայմանավորվում ու միայն մահից հետո կարելի է ասել, որ նա կայացել է: Միևնույն ժամանակ կամքի դրսևորման ազատության ու գիտակցության հիմքով մարդը պատասխանատու է իր գործողությունների համար և սա է, ըստ Սարտրի, կյանքի միակ վավերական ձևը՝ չնայած տանում է մենակության: Մարդկանց մեծամասնությունը մերժում է ազատության գաղափարը պատասխանատվության ծանր բեռի ու միայնակության զգացողության պատճառով: Գիտակցության ու «ես»-ի ընտրության միջոցով աշխարհն իմաստավորվում ու արժեվորվում է: Առարկաները անհատական մարդկային արժեքների նշաններ են, դրանից դուրս նրանք ուղղակի փաստ են, պասիվ ու իներտ պայմաններ: Դրանց այս կամ այն մարդկային արժեքները վերագրելով, մարդն իրեն որպես անհատականություն է ձևավորում:

Ազատության հակառակ կողմում փիլիսոփան օտարումն է տեսնում: Նրա կարծիքով ժամանակակից մարդն օտարված է՝ նրա անհատականությունը ստանդարտացված է հասարակական, մշակութային պահանջներին: Անհատականությունը ենթարկեցված է սոցիալական ինստիտուտներին, որոնք կարծես ծառայած են մարդու վրա, ու մարդկանց ներաշխարհից չեն սկիզբ առնում: Սարտրն ասում էր որ «ուրիշ»-ի ներագդեցության արդյունքում «ես»-ը կորցնում է իր սուբյեկտիվությունը, ազատությունը, գիտակցությունը՝ պայմանավորվում «ուրիշ»-ով:

Ընդգծում է ամոթի զգացողությունը որպես օբյեկտիֆիկացիայի գործիք [41]: Ուրիշի հայացքը սակայն շատ բազմազան է մեկնաբանվում անհատի գոյության գիտակցության ու դրանից բխող հետագա հնարավոր քայլերի ձևավորման տեսանկյունից նաև ուրիշի համար: «Ուրիշի ներկայությունն օտարում է մարդուն ինքն իրենից, այն միշտ քննադատում, վախ ու ամոթ է ներշնչում ինչը ենթադրում է նաև օտարում մարդու կազմավորած աշխարհից» [41, էջ 350]: «Նույնկերպ իմ ներկայությունը մյուսների կողմից կարող է ուրիշի հայացք ընկալվել, ուրիշն իմ հնարավորությունների թաքուն մահն է» [41, էջ 354]: Օրինակ պետությունն օտարված ֆենոմեն է՝ մարդն իր կարողություններով օտարված է կառավարման գործերին մասնակցելուց, հետևաբար զրկված է ամենակարևոր՝ սեփական պատմությունը կերտելու կարողությունից:

Օտարման մեկ այլ տարբերակի մասին Սարտրը խոսում է «Մրտխառնոց» նովելում [8]: Այստեղ խոսքը գնում է ազատությանից ինքնասահմանափակման մասին կամ մի շարք գործոնների՝ որոնք կարող են զզվանքի ու վախի զգացողություն առաջացնել: Պատմվածքում հերոսը ինքնաօտարվում է սեփական անցյալից ու ինքնությունից, խուսափում արտաքին աշխարհի անխուսափելի իրականությունից: Այս օրինակով Սարտրը ցույց է տալիս աշխարհի անիմաստությունն ու «ես»-ի անզորությունը: Մարդու մյուսի կողմից ընկալվելն ու գնահատվելը է մյուսի կողմից շատ սուբյեկտիվ է ու չի կարող կառավարվել այնպես ինչպես կցանկանաինք կամ կանք իրականում: Դրա համար միայնությունը, ինքնա օտարումը ավելի նախընտրելի է քան ուրիշի քննադատությունը, ուրիշը միշտ որպես սահմանափակող է ընկալվում: Նման փոխհարաբերությունները կոնֆլիկտային են ու միայն բացարձակ միայնության մեջ է մարդը ազատ պիտակներից, կարծրատիպային կարծիքից:

Հորովիտցի կարծիքով (1966), օտարումը ենթադրում է խիստ տարանջատում միջավայրից՝ աշխարհի օբյեկտներից, մարդկանցից, այլ մարդկանց աշխարհի մասին ունեցած գաղափարներից: Օտարում գաղափարի հիմնական իմաստը նույնացվել է հակասոցիալական վիճակի կամ միջավայրում մեկ այլ տարրից անջատման զգացողության հետ [22]:

1.2 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից տեսություններն ու հետազոտությունները օտարումը հովանոցային գաղափար են դիտարկվում՝ տալիս դասական սահմանումներ, որոնք կարևոր են հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում: Օտարումը միշտ ենթադրում է սուբյեկտի և կյանքի ասպեկտի միջև փոխհարաբերություն՝ բնություն, աշխարհ, աստված, աշխատանք, այն միշտ սուբյեկտիվ վիճակ է համարվում: Անոմիայի դեպքում, ըստ Է. Դյուրգհեյմի տված սահմանման, խոսքը գնում է հասարակական իրավիճակի մասին: Կան անոմիան մեկնաբանող երկու տարբեր ուղղություններ: Առաջինը աննորմալության գաղափարն է՝ որպես սահմանված կանոններից շեղում (հանրային հանգամանքներ, գիտակցություն կամ հոգեվիճակ, որի դեպքում շեղումներն ու անվստահությունը մասսայական են): Երկրորդ, աննորմալության գաղափարը իբրև ընդունված վարքի ոչ հստակություն կամ բացակայություն (իմաստագրկում): Այնուամենայնիվ անոմիայի և օտարման հիմքում ընկած սկզբունքային խնդիրները ժամանակի ընթացքում շատ չեն փոխվել: Ժամանակակից տեսությունները տալիս են օտարման դասական սահմանումներ (աշխատանքային, առողջապահական, քաղաքական, խմբային վարք և այլն) [45]՝ 1) սոցիալական տկարություն - social powerlessness (կարողությունների, հնարավորությունների պակաս, երբ մարդու վարքը չի կանխորոշում ցանկալի ցանկալի արդյունքները) [27], 2) սոցիալական մեկուսացում և մենակություն - social isolation and loneliness (համայնքից կտրվածության անհատական զգացողություն, որի պատճառները հասարակական են ու բերում են հասարակությունից հեռանալուն), 3) արտաքին, ինքնաօտարող գործունեություն երբ մարդը իմաստային առումով կտրված է իր կատարած աշխատանքից (օրինակ՝ քաղաքական, տնտեսական գործընթացներում չի տեսնում իր մասնակցության իմաստն ու կարևորությունը), 4) սոցիալական աննորմալության և անվստահության - social normlessness and distrust (նպատակին հասնելու համար սոցիալապես անընդունելի վարքի դրսևորում [43], 5) սոցիալական իմաստագրկում - social meaninglessness (իրադարձությունների

մասնակցելու անիմաստության զգացողություն,), 6) մշակութային օտարումը - cultural estrangement (հանրընդանուր արժեքների ընունելու կամ հերքելու զգացողությունը): Այս սահմանումները յուրօրինակ ֆրեյմ են անումիան և օտարումը չափող հետազոտություններում: Այնուամենայնիվ որոշ հեղինակներ սկեպտիկորեն են վերաբերվել հասկացությունները լիարժեք մեկնաբանող սահմանումներին [40], պնդելով, որ այնպիսի չափորոշիչներ ինչպիսիք են օրինակ տկարությունն ու իմաստագրկումը, կարող են օտարման նախադրյալ կամ հետևանք լինել:

Ըստ Մ. Միմանի օտարման վերոհիշյալ սահմանումները հիմնական են ու հիմք են ծառայում օտարման չափման սանդղակները կազմելիս: Օրինակ՝ ուսումնասիրության տարածված թեմաներից են աշխատանքի վայրում տկարությունն ու ինքնակառավարման օտարումը, մինչդեռ իմաստագրկումն ու մշակութային օտարումը՝ ոչ: Այնուամենայնիվ, որոշ հեղինակներ [26] վիճարկում են, թե արդյոք սահմանումները համապատասխան են կամ լիարժեք են բացատրում օտարումը՝ պնդելով, որ հասարակական տկարությունն ու իմաստագրկումը կարող են օտարման նախադրյալ կամ արդյունք լինել: Ստորև ներկայացված են հետազոտությունների սանդղակների՝ ընդհանրական մեկնաբանություններ ըստ օտարման վերոհիշյալ սահմանումների՝ սոցիալական տկարություն, մեկուսացում, սոցիալական աննորմալություն, իմաստագրկում և մշակութային հեռացում:

Սոցիալական տկարություն (անգլ. social powerlessness) թեմայով քանակապես առավել շատ ու ծավալուն հետազոտություններ են կատարվել, որոնք կենտրոնանացած են անհատի սեփական կյանքը վերահսկելու, հեղինակության պակասի, անարդյունավետության, քաղաքատնտեսական երևույթների, օտարման, ինքնավարության չափորոշիչների բացահայտմանը:

Դինի հետազոտության սանդղակը բաղկացած է երեք ենթասանդղակներից, որոնք համապատասխանաբար ուսումնասիրում են օտարումը, աննորմալությունը և սոցիալական մեկուսացումը [14]: Հղվում է ժամանակակից երեխաների ապագային՝ օգտագործված լինելու, կյանքի մեխանիզմում պտուտակ լինելու, աշխատանքային առաջընթացի արգելափակվածության զգացողությանը: Հետազոտության մեջ

համեմատվել են օբյեկտիվ և սուբյեկտիվ կարգավիճակների անհամապատասխանելիությունները՝ «Երկյուղում են երեխաների դաստիարակության պատասխանատվությունից», «Ապագան շատ մռայլ է թվում»: Արդյունքները ցույց են տալիս, որ կարգավիճակի սուբյեկտիվ անհամապատասխանելիությունը զգալի ազդեցություն ունի (ի նկատի առնելով կրթությունը և մասնագիտական հեղինակությունը) տկարության վրա, մինչդեռ օբյեկտիվ կարգավիճակը անհամապատասխանելիությունը՝ ոչ:

Նիլի և Միմանի տկարության սանդղակը անդրադառնում է համաշխարհային գործընթացներին՝ տնտեսություն, քաղաքականություն, ներազդել կարողանալու հնարավորությունը [35]: Օրինակ՝ «Այս աշխարհի կառավարման իշխանությունը մի քանիսի ձեռքում է, սովորական մարդը շատ բան անել չի կարող», «Երբեմն ինձ մեղավոր եմ զգում, մեր կառավարության տխուր իրավիճակի համար»: Հեղինակները սոցիալական տկարությունը սահմանում են իբրև «իրադարձությունների վերահսկման մեջ ցածր հավակնություն»՝ իրադրություններ, որոնք կարևոր են զանգվածային հասարակություններում: Այս հետազոտության արդյունքները ցույց են տալիս որ տկարությունն ու աննորմալությունը միասին հանդիպում են ավելի ծեր, սահմանափակ մոբիլությամբ մարդկանց մոտ: Տկարության ու աննորմալության նվազագույն հավանականություն կա երիտասարդ, ակտիվ, ոչ ձեռքի աշխատանք կատարող, մոբիլ աշխատանք կատարողների մոտ:

Նիլի և Գրոտի սանդղակը նման էն նախորդին բովանդակությամբ, սակայն տարբերվում են ձևաչափով [34]: Տկարության վերաբերյալ նրանց կոնցեպցիան հիմնվում է քաղաքական և տնտեսական գործընթացների արդյունքների վերահսկողության ցածր ակնկալիքների վրա: Դիտարկվում են պատերազմի, խաղաղության, իշխանության, կառավարության որոշումները, գնաճի և ԱՄՆ-ի մասին համաշխարհային կարծիքը: 1971թ.-ի տկարության ցուցանիշները կապված էին համապատասխան սոցիոտնտեսական իրադարձությունների և դեմոգրաֆիական փոփոխականների հետ: Նախնական հետազոտությունները կենտրոնացել են օտարման տարբեր ձևերի և ծնելիության միջև կապ բացահայտելուն: Բացահայտվել է որ ծնելիությունը չի

պայմանավորվում տկարությամբ: Կրթական ցածր մակարդակը, ամուսնու աշխատանքային կարգավիճակը և ընտանիքի եկամուտը արտացոլվում են հասարակական տկարության բարձր ցուցանիշներում: Դրական կապ է սահմանվել է տկարության և Կաթոլիկների, բայց ոչ Բողոքականների ծնելիության միջև: Շարունակական հետազոտությունները ութ տարիների ընթացքում ցույց են տվել հասարակական տկարության համեմատական բարձր ու աճման միտումով ցուցանիշներ: Կա ենթադրություն որ տկարության, որ օտարվելու դիրքորոշումը արմատավորվում է մանկության կամ դեռահասության սոցիալիզացիայի շրջանում:

Ավելի անհատական ու աբստրակտ են Պեռլինի և Շուալերի սանդղակները [37]: Առանց որոշակի կյանքի իրավիճակների հղման, աբստրակտ ձևակերպումներով գնահատում են տկարության զգացողությունը: Օրինակ՝ «Իմ կյանքում տեղի ունեցող շատ բաներ չեմ կարող վերահսկել», «Աշխարհը շատ բարդ է ինձ համար»: Վարպետությունը կամ պրոֆեսիոնալիզմը սահմանվում է ինչպես «մի աստիճան, որի դեպքում մարդն իր կյանքի հնարավորությունները սեփական վերահսկողության տակ է դիտարկում ի հակադրություն կառավարված լինելու»:

Վարպետությունը ձևակերպվում է իբրև սեփական կարողությունների կառավարման հմտություն: Ենթադրաբար վարպետությունը հոգեբանական երեք դրական ռեսուրսներից մեկն է, որ մարդկանց պաշտպանում է սոցիալական լարումներից: Հետազոտության արդյունքում բացահայտվեց, որ վարպետությունը և մյուս երկու ռեսուրսները (բարձր ինքնագնահատական և ցածր ինքնասահմանափակում) կարող են բթացնել խնդիրների տևական ազդեցության էմոցիոնալ ներազդեցությունը: Ընդ որում, վարպետությունը ըստ կարևորության երկրորդ ռեսուրսն է դասվել ցածր ինքնասահմանափակումից հետո: Ըստ արդյունքների հենց հոգեբանական առանձնահատկությունները ամենակարևորն են լարված աշխատանքային պայմաններին դիմակայելու համար: Հետագա ուսումնասիրություններում ներառվել են նաև խրոնիկ լարվածությունները:

Շուալերի հետազոտությունում դիտարկվում է արդյոք մարդն իրեն հասարակական իրադարձությունների արդյունքում ձևավորված մեկն է զգում, թե կարծում է որ ինքն է

դրանք ձևավորում խորապես համոզված լինելով որ հանրային կյանքը, իրադրությունները կապ չունեն իր սեփական պլանների և աշխատանքի հետ [42]: Հեղինակը հանրային կյանքի 12 զգացողությունների չափորոշիչների սերտ կապ է հայտնաբերել: Նա սա դիտարկում է, որ սոցիալական կյանքում ֆունկցիոնալ առումով միայն 12 ցուցանիշներ են տարբերվում: Օրինակ՝ «Մարդը քիչ կապ ունի էն ամենի հետ ինչ կատարվում է նրա կյանքում», «Իմ համար բոլոր օրերը միանման են», «Շատ դժվար է այսօր լավատես լինել»:

Ամենապարզը Կոնի ու Սքուլերի սանդղակն ուղղված է ադմինիստրատիվ աշխատակիցների վերահսկողության ուսումնասիրությանը: Հեղինակների տկարությունը սահմանում են որպես մարդու գործողություններով չպայմանավորված արդյունքների հավանականություն [28]: Օրինակ՝ «Համաձայն էք արդյոք, որ այն ամենը ինչ կատարվում է Ձեր հետ Ձեր կայացրած որոշումների արդյունք են, թե դրանք բաներ են, որ Ձեր վերահսկողությունից դուրս են»: Նրանք տկարությունը սահմանում են իբրև «հավանականություն որ իր վարքը չի կարող իր ակնկալված արդյունքները սահմանել»: Ուսումնասիրությունում սանդղակն ուղղված է տկարության զգացողության, այլ ոչ թե տկարության փաստի բացահայտմանը: Հեղինակներն ուսումնասիրել են հասարակության կառուցվածքը և օտարման սուբյեկտիվ փորձառությունը: Օտարումն իր հերթին բնորոշվում է հինգ ենթասանդղակով՝ տկարություն, ինքնաօտարում, աննորմալություն, մշակութային օտարում և իմաստագրկում: Կոնն ու Սքուլերը եկել են եզրակացության, որ կապիտալիստական համակարգում աշխատանքի արդյունքի վերահսկողությունը միայն անուղղակի կապ ունի օտարման հետ, մինչդեռ աշխատանքի գործընթացի վերահսկողությունը (անմիջական վերահսկողություն, բարդություն, առօրեականայնացումը) նկատելի ազդեցություն ունեն տկարության զգացողության ձևավորմանը [28, էջ 96]:

Սոցիալական մեկուսացում (անգլ. social isolation) Դինի կազմած օտարումն ուսումնասիրող եռաչափ սանդղակի չափորոշիչներից մեկը սոցիալական մեկուսացումն է [14]: Օրինակ՝ «Երբեմն ես ինձ աշխարհում մեն մենակ եմ զգում» «Մարդկանց միջև հուսալի կապերն այլևս շատ քիչ են»: Սոցիալական մեկուսացման ու հարակից

սոցիալական աջակցման և սոցիալական միայնություն թեմաները շարունակում են հետազոտողների ուշադրությունը գրավել:

Սոցիալական աննորմալության (անգլ. social normlessness) գաղափարը գալիս է Դյուրգհեյմի անոմիայի գաղափարից: Սոցիոլոգները պնդում են, որ սա ոչ թե անհատական հոգեվիճակի այլ հասարակական վիճակի բնութագրիչ է: Ցավոք քիչ են աննորմալության կառուցվածքի հստակեցման բացահայտմանն ուղղված էմպիրիկ հետազոտությունները (բոլորն ուղղված են երևույթի ընկալմանը): Անհատակենտրոն տեսանկյան հիմնական գաղափարն այն է որ որոշ մարդիկ երբեմն կարող են չհարգել/չհետևել ենթադրվող նորմերը, կարող են դեվիանտ վարք դրսևորել նպատակին հասնելու համար:

Մրովի աննորմալության սանդղակն անդրադառնում է մի շարք հարցերի և զգացմունքների այդ թվում նաև հոռետեսությանը, իմաստագրկմանն ու արժեզրկմանը, ցինիզմին և բարոյականության անկմանը [47]: Նա անոմիան դիտարկել է որպես անհատի սոցիալապես թերընդգրկվածության ընդհանրացված զգացողություն, կամ ինքնաօտարում մյուսներից: Մշակութային աննորմալությունը, մշակութային բազմազանության ու հասարակական արագ փոփոխությունների կոնտեքստում, մատնանշվում է Դինի սանդղակում [14]: Հետազոտության անոմիայի փոքրամասնությունների նկատմամբ բացասական վերաբերմունքի հետ կապվածության հիպոթեզը հաստատվել է: «Մեր օրերում մարդ պիտի այսօրով ապրի», «Հիմա մարդիկ իսկապես չգիտեն ում, կամ ինչին կարող են ապավինել», «Առողջությունն ու գումարը ամենաթանկ բաներն են կյանքում»:

Դինի աննորմալությունը բացահայտող ուսումնասիրությունում մշակվել է ընդհանուր օտարումը բացահայտող սանդղակի հաջորդ բաղադրիչը աննորմալությունն է՝ «Նպատակն արդարացնում է միջոցները», «Ամեն ինչ հարաբերական է ու չկան կյանքի հստակ օրենքներ» [14]:

Մըկ Կլոսկիի և Շաարի աշխատանքները կրկին աննորմալության դրսևորումների դաշտ են ուսումնասիրում՝ սահմանելով որ սոցիալական պայմանները որոշակի զգացողություններ են արթնացնում, որն իր հերթին համապատասխան վարքի առիթ

կարող է դառնալ [32]: «Այսօր ամեն ինչ այդքան արագ է փոխվում, որ հաճախ չեմ կողմնորոշվում որն է ճիշտը», «Առաջ մարդիկ ավելի լավն էին ապրում, բոլորը գիտեին ինչ պիտի անեն»: Հեղինակի նպատակն է ուսումնասիրել անհատական փոփոխությունները, որ կարող են anomy-ի դեպքում առաջանալ: Հոգեբանական գործոնի դերն ապացուցելու համար չափորոշիչների 3 խումբ համեմատվել են անոմիայի զգացումի հետ: Բացահայտվել է, որ տկար իմացական գործընթացներով անհատները (կրթության, ինտելեկտուալ, իրազեկության ցածր ցուցանիշներ) հակված են անոմիայի բարձր աստիճանի: Ինչպես նաև, ոչ ադեկվատ էմոցիոնալ վիճակով (ոչ ճկունություն, ուժեղ անհանգստություն, ագրեսիա, ցածր էգո) անհատները նույնպես ունեցել են անոմիայի համեմատականորեն բարձր աստիճան: Վերջապես ծայրահեղ զգացմունքային մարդիկ, որոնք մերժողական էին տրամադրված մարդկանց ևս ունեցել են անոմիայի բարձր ցուցանիշներ:

Նիլն ու Գրոտը կարևոր են համարում նպատակին հասնելու անբարո կամ անցանկալի վարքի ուսումնասիրությունը [34]: Հեղինակներն աննորմալությունը սահմանել են ինչպես սոցիալապես անընդունելի վարքի անհրաժեշտություն նպատակների նվաճման համար: Ընդգծով են տնտեսական կամ քաղաքական նպատակներում հարկադրանքի կամ խաբեության անհրաժեշտությունը: «Կառավարության ներկայացուցիչները պետք է թաքցնեն իրենց կեղտոտ գործերը, եթե ուզում են իրենց դիրքը պահել», «Աշխատանքային առաջխաղացումը լավ վերաբերմունք է պահանջում»: Հետազոտության տվյալները համապատասխանում են 1971թ.-ին ընտրված սոցիոտնտեսական և դեմոգրաֆիական փոփոխականներին: Կրթության ցածր մակարդակը, ամուսնու աշխատանքային կարգավիճակը և ընտանիքի եկամուտը պատճառահետևանքային կապի մեջ է դիտվում աննորմալության բարձր ցուցանիշի հետ: Նաև դուրս է բերվել աննորմալության և ծնելիության ցուցանիշների միջև եղած կապը՝ որքան բարձր է առաջինը նույնքան բարձր է նաև երկրորդը: Համեմատականորեն բարձր է աննորմալության ցուցանիշը աշխատող կանանց մոտ և համեմատականորեն ցածր՝ միջին դասի կանանց մոտ:

Եսասիրության պարճառով մյուս մարդկանց չվստահելու անկարողության ուսումնասիրության ցուցանիշներին է անդրադառնում Շուպերի սանդղակը [42]: Այստեղ արտացոլվում են թե որքանով են մարդիկ կասկածում, որ մյուսները արդար, անկեղծ և ազնիվ են առօրյա կյանքում: «Շատերը սիրալիք են, որովհետև իրենց ինչ որ քան է պետք»: Սանդղակի տարբեր թեստերի համակցությունն ապացուցել է ենթադրությունը: Դուրս է բերվել, որ երիտասարդ, ամուսնալուծված, առանձին, ցածր կրթությամբ, ցածր եկամուտով, այլ ռասայի ներկայացուցիչ լինելը ուղիղ համեմատական կապի մեջ է մարդկանց նկատմամբ անվստահության հետ:

Եվ վերջապես Կոնի ու Սքուլերի սանդղակում շեշտվում են ցինիզմն ու անբարոյականությունն, ու ամենաթողության ցուցանիշները [28]: «Նպատակին հասնելու համար բոլոր միջոցներն արդարացված են»: Սլոմգինսկին հիմնվելով ԱՄՆ-ում և Պոլշայում արված համանման հետազոտություններին դուրս է բերել որ հասարակական շերտավորման դիրքորոշման և բարոյականության որոշակի չափորոշիչներ համընկնում են այս երկու երկրներում: Բարձր պաշտոն զբաղեցնելը ասոցացվում է բարոյական բարձր արժեքների հետ [46]:

Հեղինակները եզրակացրել են, որ կապիտալիստական հասարակությունում սեփական աշխատանքի արդյունքի վերահսկումը (սեփականատերերի կամ բարձր հաստիք զբաղեցնողների համր) օտարման վրա միայն անուղղակի ազդեցություն ունի: Մինչդեռ աշխատանքային գործընթացի վերահսկողությունը (աշխատանքի բարդություններին մոտ լինելը) ուղիղ համեմատական կապ ունի աննորմալության ձևավորմանը:

Սոցիալական իմաստազրկում (անգլ. social meaninglessness) ասվածը նկարագրվում է հստակ նպատակների բացակայությամբ, սթափ գիտակցությամբ և կանխատեսելիությամբ, սակայն հարկ է նաև նշել, որ դրանց բովանդակային երանգները արտահայտվում են նաև այլ ուղղվածություններում: Նիլի և Գրոտի հետազոտություններում իմաստազրկումը դիտարկվում են, սոցիալական և քաղաքական երևույթների իբրև վերին աստիճանի բարդ, անկանխատեսելի ու անիմաստ ընկալվելով [34]: Օրինակ՝ «Միջազգային իրավիճակն այնքան բարդ է, որ

մարդ ուղղակի խճճվում է դրա մասին մտածելիս», «Շատրերը հուսահատված են ապրում»: Հետազոտության արդյունքում երեխանրի քանակը իմաստագրկվածության դեպքում կապված է ավելի շատ Բողոքականների, քան Կաթոլիկներ մոտ: Հետագա ուումնասիրությունների արդյունքում իմաստագրկվածության ցուցանիշի համեմատական աճ է բացահայտվել:

Կյանքի իմաստը բացահայտող Կրամբաուի սանդղակը նախատեսված է ուումնասիրելու, թե որքանով է մարդն իր կյանքում իմաստ ու նպատակ տեսնում [16]: Սանդղակը ձևավորվել է Վ. Տրանկլի այն թեզի հիման վրա, որ երբ բացակայում է կյանքի իմաստը առաջանում է էկզիստենցիալ ֆրուստրացիա կամ նեոգեն նեվրոզ [7]: Տրանկլը հաշվարկել էր որ հոգեբուժարանում գտնվողների մոտ 20%-ը հենց նեոգեն նեվրոզ ունեցողներն են:

Աշխատանքից օտարման Սիմանի հետազոտությունում օտարումը կապվում է աշխատանքի հետ, որը ինքնաօտարվում է այն իմաստով, որ քիչ ներքին բավարարվածություն է բերում [44]: Սիմանն այս հետազոտությունում շեշտադրել է աշխատանքից օտարման և աշխատանքից բավարարվածության միջև: «Այստեղ օգտագործված աշխատանքի օտարում հասկացությունը վերաբերվում է աշխատանքում ներքին պարզեվատրմանը, մի բան որ համարժեք չէ աշխատանքից բավարարվածության զգացողության հետ, չնայած կարող են փոխկապակցված լինել» [44, էջ 280]: Հետազոտության նպատակն էր գնահատել աշխատանքային օտարման հետևանքները հասարակական կյանքում: Աշխատանքային օտարման ուումնասիրության արդյունքում պարզվել է, որ ոչ միշտ է էականորեն կապված ենթադրվող արդյունքների հետ, մինչդեռ տկարությունն էս իմաստով ավելի կարևոր է: Հետազոտությունում դիտարկվել է նաև աշխատանքային օտարման և տկարության հարաբերակցությունը նախապաշարմունքների անումիայի, և քաղաքական տեղեկատվածության հետ: Օրինակ՝ «Արդյոք Ձեր աշխատանքը հնարավորություն է ընձեռում կիրառել սեփական գաղափարները», «Եթե աշխատանքից ազատվելու հենց հիմա հնարավորություն ունենաիք, կազատվեիք, թե կշարունակեիք աշխատել»:

Մշակութային հեռացում (անգլ. Cultural Estrangement): Նախկինում այս թեմայի շուրջ հետազոտությունները պահանջված չեն եղել (դոմինանտող արժեքներից անհատի հրաժարումը) ինչպես օտարման մյուս տեսակների շուրջ (տկարություն, ինքնաստարում): Սակայն կոմունալ և երիտասարդական կոնտրամշակութային շարժումները մեծ հետաքրքրություն առաջացրեցման առիթ դարձան: Ստորև ներկայացված են օտարման այս տեսակը բացահայտող երկու հետազոտություններ:

Առաջինը Կոնի ու Սքուլերի սանդղակն է: Այս մոտեցումը թույլ է տալիս խուսափել ուշադրությունը դոմինանտող մշակութային թեմաներին կենտրոնացնելուց, փորձելով հաղթահարել հարցվողի կողմից կանխագուշակումների խնդիրը [28]: Քանի որ նախնական հետազոտությունը ներառում է նաև տկարության, աննորմալության բաղադրիչները, մշակութային հեռացման ցուցանիշները նախորդների մաս են կազմում: «Տկարության, ինքնաստարման, աննորմալության վերաբերյալ մարդիկ ունեն բացասական արձագանք, էն իմաստով, որ իրենց մեջ պակասում է բավարարարյունավետությունը, ինքնագնահատականը, կամ չունեն անհատական որոշում կայացնելու հնարավորությունը»: Մյուս տեսանկյունից մշակութային օտարումը ամպայմանորեն չի պայմանավորում բացասական ինքնագնահատական, հաճախ հենց հակառակը, մարդը կարող է բավականաչափ ինքնավստահ լինել, որ սեփական արժեհամակարգում վստահ լինի [28, էջ 90]: Օրինակ՝ «Որքան հաճախ են Ձեր գաղափարներն ու կարծիքները տարբերվում Ձեր ընկերների նույն թեմայի շուրջ ունեցած հայացքներից»:

Երկրորդ հետազոտությունը Ջեսսոբի հանրային քննադատական սանդղակն է [24]: Հեղինակները սոցիալական քննադատությունը՝ հանրային արժեքներից, նորմերից ու փորձառություններից հրաժարման կամ դրանց ընդունման աստճան են որակել: Հետազոտության հարցերն ուղղված են սոցիալական արդարության, տնտեսական հնարավորությունների, ինքնաբավարարվածության, միլիտարիզմի, միջավայրի և կրթության ոլորտներին: Հետազոտության արդյունքում պարզվել է որ հանրային քննադատությունը ժամանակի ընթացքում աճել է: Անձնային համակարգը կարևոր գործոն է երիտասարդության խնդրահարույց վարքի առաջացման հարցում: Առավել

կարևոր են անձի ինքնավերահսկողությունը (ամենակարևորն էստեղ տղերանտության սանդղակն է), մոտիվացնող կոմպոնենտները և անձնական համոզմունքները որ ամեաքիչ կարևորության են գնահատվել: Օրինակ՝ «Մեր հասարակությունում կանանց դիրքը համապատասխանում է ողջամտության սահմաններին», «Առաջ գնալը, հաջողությունը չափից շատ է ակցենտավորվում մեր հասարակությունում, մարդիկ նյութապաշտ են դառնում, հեռվանում մարդկային բնույթից»:

2.1 ԳԵՆԴԵՐԱՑԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ

Գլխում ներկայացված են ֆեմինիստական հիմնական տեսությունները՝ լիբերալ, սոցիալիստական, ռադիկալ, հոգեբանական և պոստմոդեռնիստական, որոնք հասարակությունում կանանց դերն ու նշանակությունը տարբեր ուղղվածություններում են դիտարկում: Չնայած ֆիլիսոփայական հայացքների տարբերությունների ու քաղաքական դիրքորոշումների, բոլորին ընդհանրացնում են մի շարք դրույթներ: Բոլորում առանցքային է հասարակությունում կանանց նկատմամբ դիսկրիմինացիայի տարատեսակ դրսևորումների վերացումը: Տեսությունները քննադատում են հայրիշխանական համակարգը և պնդում ավանդական հասարակական, քաղաքական ու անհատական փորձառությունների փոփոխության անհրաժեշտությունը հանուն կնոջ, և առահասարակ հասարակության առողջ զարգացման [50]:

Կնոջ իրավունքների մասին բարձրաձայնող շարժումները սկիզբ առան 19-րդ դարում ԱՄՆ-ում և Անգլիայում: Հենց այդ ժամանակ էլ ձևավորվեց ֆեմինիզմի մեջ անհատականացված տեսություն համարվում Լիբերալ ֆեմինիզմը: Այս ուղղությունը կենտրոնանում է կանանց առօրյա կյանքում գործողությունների ընտրության և կնոջ սեփական կյանքում որոշումներ կայացնելու իրավունքին: Լիբերալ ֆեմինիստների վաղ շրջանի ներկայացուցիչների տեսանկյունից կանանց ու տղամարդկանց անձնային փոխհարաբերությունները ելակետային են հասարակության վերակազմավորման համար: Լիբերալ ֆեմինիստները նշում են, որ հասարակությունը ոտնահարում է կանանց հավասար իրավունքների արժեքը հատկապես կանանց որպես խումբ, այլ ոչ առանձին անհատներ դիտարկելով [25]: Լիբերալ ֆեմինիստների կարծիքով բոլոր կանայք պետք է տղամարդկանց հավասար լինելու իրավունք ունենան [21]: Էս դիրքորոշումը գալիս է հավասար հնարավորություններով հասարակության կառուցման գաղափարից, որտեղ տղամարդուց անկախանալու գրավական էր կնոջ սեփականության իրավունքը:

Լիբերալ ֆեմինիզմը կարելի է բաժանել երեք հիմնական ալիքի: Առաջին ալիքը՝ 19-րդ դարի կեսին մինչև 20-րդ դար նշանավորվեց սուֆրաժիստական շարժման ձևավորմամբ, որտեղ առանցքային էին կանանց ընտրական իրավունքի, կրթական, քաղաքական բարեփոխումների հարցերը, միաժամանակ պնդում էին, որ կանանց շահերը ոչ միայն տարբեր, այլև հակառակ են տղամարդկանց շահերին [3, էջ 42]: Ժամանակի ֆեմինիստական շարժումը ազատությունը հիմնարար արժեք էր դիտարկում ու պահանջում կանանց համար դրա պետական մակարդակով ամրապնդումը՝ ընտրական իրավունքի տեսքով: Սուֆրաժիստները արտահայտվել են կանանց նկատմամբ քաղաքական ու տնտեսական դաշտերում կիրառվող խտրականությունների վերաբերյալ: Հանուն ազատության պայքարի միջոցներում ընունելի էին համարում անգամ ծայրահեղական գործողությունները (իրենց դարպասներին էին գամում, գնացքի գծերին նստում, փողոցում պաստառներով ցույցեր էին կազմակերպում):

1848թ. հուլիսի-ին ԱՄՆ-ի Սենեկա Ֆոլգ քաղաքում տեղի ունեցած «Բոլոր կանայք և տղամարդիկ հավասար են ստեղծված» խորագրով կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված առաջին հանրագումարում ընդունվեց «Զգացմունքների հռչակագր»-ը հաստատվեց 68 կնոջ և 32 տղամարդու կողմից ստորագրություններով: Այստեղ շարադրվում են կանանց համար քաղաքացիական իրավունքի, սեփականության, մասնագիտության ընտրության իրավունքի, սեռական բարոյականության, բարձրագույն կրթության, վճարվող աշխատանքի, քաղաքական ու կրոնական կյանքի մեջ ակտիվ մասնակցության պահանջը [3, էջ 45]: Փաստաթղթի հեղինակներն էին Լ. Մոտտն ու Է. Կ. Ստենտոնը:

Անգլիայում ֆեմինիզմի գաղափարներն մի փոքր ավելի ուշ ձևավորվեցին և հիմնվում էին ֆեմինիստ, լիբերալ փիլիսոփա Ջ. Ս. Միլլի «մի սեռի ենթարկումը մուսին օրենսդրական աջակցությունը վատ է... ու համամարդկային կատարելագործման խոչընդոտներից մեկն է» դրույթներին, որոնք շարադրված են «Կնոջ ստորադասումը» գրքում: Կանայք սկսելցին իրենց իրավունքների համար օրենքների փոփոխության

հանրային ակցիաներ կազմակերպել: Ամուսնացած կանայք երեխաներին հավասար ամուսնու սեփականությունն էին համարվում, որը շատ էր հիշեցնում ստրկությունը [6]:

Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ում կանանց անկախության ու իրավահավասարության դժգոհություն էր սերմանվում, որը 60-ների ֆեմինիստական երկրորդ ալիքի հիմք հանդիսացավ: Այս ալիքըն անվանում են *Կլասիկ լիբերալ ֆեմինիզմ*՝ զարգացել է 1960-1990-ները [63]: Ֆեմինիզմի այս փուլի ներկայացուցիչները իրենց գործունեության մեջ խնդիրների ավելի լայն շրջանակներով էին ներառում՝ փաստացի անհավասարություններ, սեռականություն, ընտանիք, աշխատաշուկա, վերարտադրողական իրավունք: Հենց այս փուլում ակտիվիստ Քերոլ Խենիշի կողմից առաջարկվեց «մասնավորը քաղաքական է» կարգախոսը, որն ասոցացվում է երկրորդ ալիքի հետ: Ուղղվածության ներկայացուցիչները գտնում էին, որ կանանց մշակութային ու քաղաքական անհավասարության տարբեր ձևերը անքակտելիորեն կապված են միմյանց հետ: Կոչ էին անում կանանց գիտակցել, որ անձնական կյանքի առանձին ասպեկտներ շատ քաղաքականացված են ու սեքսիստական կառավարող համակարգի արտացոլումն են: Նաև, որ կենսագործնեության պայմաններում չեն ապահովվում կանանց հիմնական պահանջմունքներն ու շահերը, քանի որ նրանք թերի են ներկայացված ժողովրդավարական ինքնորոշման գործընթացներում: Լիբերալ ֆեմինիստները հավատացած են, որ նմանատիպ թերի ինքնավարության պատճառները գենդերային համակարգում են, կամ ժառանգված ավանդույթների և ինստիտուտների հայրիշխանական բնույթը և որ կանանց շարժումները պետք է բացահայտեն ու վերացնեն դրանք: Քանի որ, ըստ լիբերալիստների, քաղաքացու ինքնավարության պաշտպանությունն ու ապահովումը պետության դերն է, ապա պետությունը կարող է և պետք է կանանց ինքնավարության զարգացման գործում կանանց շարժումների դաշնակիցը լինի: Այնուամենայնիվ պետության դերի շուրջ լիբերալ ֆեմինիստների հայացքները կիսվում են [64]:

Բեռլի Ֆրիդանն իր «Կանացիության առեղծվածը» գրքում քննադատում է էն գաղափարը, որ կանայք կարող են ինքնադրսևորվել միայն տնային տնտեսության ու

երեխաների դաստիարակության ոլորտներում [9, էջ 44]: Գիրքը հեղափոխական եղավ հասարակության կառուցվածքը փոխելու տեսանկյունից: Ֆրիդանը գտնում էր, որ տնային տնտեսուհու դերը պարտադրված է կնոջը առեղծվածային կերպարի ձևավորման համար: Նշում էր որ սուտ գիտական տեսությունները, կանանց համար թողարկվող ամսագրերն ու գովազդային մոտեցումները սովորեցրեցին, որ իրական կանացիությամբ օժտված կանայք կարիերա զարգացնելու, բարձրագույն կրթություն ստանալու ու քաղաքացիական իրավունքի կարիք չունեն: Նրանց պետք չեն անկախություն, ինքնուրույնություն և այլ հնարավորություններ, որոնց համար պայքարել են: Նրանցից միայն պահանջվում է վաղ մանկությունից իրենց մեջ դաստիարակել ապագա լավ կնոջ ու մոր համապատասխան որակներ [9, էջ 44-50]:

Երկրորդ ալիքի նշանակալի զարգացում է գրանցել Ֆրանսիայում, որն առանձնանում է փիլիսոփայական մոտեցմամբ: Ֆրանսիական ֆեմինիզմը քիչ է ուշադրություն դարձնում քաղաքական գաղափարախոսություններին: Վառ ներկայացուցիչն է Սիմոնա դե Բովուարը իր «Երկրորդ սեռը» գրքով, որտեղ մանրամասն նկարագրում է կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքի բնույթը: Հեղինակն ընդդիմանում է կնոջ կենսաբանական առանձնահատկություններով պայմանավորված հասարակական դիքի ընդունման գաղափարի հետ, որից ելնելով էլ կնոջն որպես սոցիալական կառուցակցում անվանում էր երկրորդ սեռ, որը խտրական վերաբերմունքի պատճառ է: Հիմնվելով Սարտրի էկզիստենցիալիզմին պնդում էր, որ կին չեն ծնվում այլ դառնում են: Նա նաև գրում էր, որ կինը պատմականորեն դեվիանտ ու աննորմալ է համարվում, ինչը խանգարում է նրան դուրս գալ իր մասին կանխակալ վերաբերմունքից: Բովուարը գտնում էր, որ տնտեսական անկախության հիմքով կինը կարող է ազատություն ձեռք բերել, ապրել լիարժեք կյանքով:

1990-ականներին կրկին ԱՄՆ-ում, ի պատասխան ֆեմինիստական 2-րդ ալիքի թերություններին կամ գործող ֆեմինիստական նախաձեռնությունների բացասական արձագանք, հիմնվելով նախորդ ալիքի ձեռքբերումներին սկսվեց ֆեմինիզմի *երրորդ ալիքը*, որը շարունակվում է մինչև օրս: Երրորդ ալիքի ի հայտ գալը կապվում է սևամորթ ֆեմինիստների գործնեության հետ՝ Բել Հուքս, Օդրի Լորդ, որոնք ձգտում էին

Ֆեմինիստական հաեցակարգի մեջ ներառել նաև ռասսայական պատկանելությամբ պայմանավորված խտրականությունները: Ի տարբերություն երկրորդ ալիքի, երրորդ ալիքում առաջնահերթ դիտարկում են սեռականության հետ կապված հարցեր: Երրորդ ալիքի ֆեմինիզմը հրաժարվում է կնոջ հետերոսեքսուալության իբրև չափանիշ և նորմ ընունելուց և բարձր է գնահատում սեռականությունը՝ իբրև կնոջ ազատագրման գործիք:

Ֆեմինիզմի հաջորդ ուղղվածությունը, որ դիտարկում է կանանց ինչպես հանրային այնպես էլ մասնավոր կյանքը, պնդում անհավասարությունը կարող է հաղթահարվել միայն խտրականության մշակութային ու տնտեսական աղբյուրների վերացման դեպքում Սոցիալիստական ֆեմինիզմն է [56]: Ուղղվածությունը համադրում է կանանց նկատմամբ խտրականությունը մարքսիստական շահագործման, ճնշման ու աշխատանքի գաղափարների հետ: Սոցիալիստական ֆեմինիզմը դիտարկում է կանանց ճնշվածությունը աշխատավայրում ու կենցաղում տղամարդու հետ անհավասար դիրքեր ունենալու տեսանկյունից: Այս ուղղվածության ներկայացուցիչները մարմնավաճառությունը, տնային աշխատանքը, երեխաների խնամքն ու ամուսնությունը հայրիշխանական համակարգի կողմից կնոջ շահագործման տարբերակներ են համարում: Կենտրոնանում են հասարակությանն անդրադարձող լայնամաշտաբ փոփոխություններին: Սոցիալիստական ֆեմինիզմի հետևորդները անհրաժեշտ են համարում համատեղ աշխատել ոչ միայն տղամարդկանց, այլև մնացած բոլոր խմբերի հետ, որոնք ինչպես և կանայք շահագործվում են կապիտալիստական համակարգում/ <https> [60]: Առանձնացնում են գենդերային հիմքով խտրականությունը ռասսայական պատկանելությամբ պայմանավորված խտրականությունից:

Ռադիկալ ֆեմինիզմի մասին առաջին հերթին հարկ է նշել որ կապված է ֆեմինիզմի 1980-ականների երկրորդ ալիքի հետ: Ուղղվածությունը կենտրոնանում է հայրիշխանության տեսությանը, իբրև իշխանության համակարգի որը հիմնվելով տղամարդու գերակայության ու կանանց ստորադասելու գաղափարին հասարակության ու հարաբերությունների համակարգն է կարգավորում: Հանդես գալով դեմ ավանդական գենդերային դերերին ու կանանց նկատմամբ խտրականությանը՝ վիճարկում են հայրիշխանությունը, կոչ են անում հասարակության կառուցվածքում

արմատական փոփոխություններ իրականացնել: Վաղ ռադիկալները հայրիշխանությունը իբրև պատմական երևույթ են դիտարկում, որն ըստ նրանց ավելի կարևոր է քան ճնշումների մյուս աղբյուրները, ոչ միայն որպես հնագույն ու առավել համընդանուր ձև, այլ որպես մյուս բոլոր ճնշումների սկզբնաղբյուր: Ռադիկալ ֆեմինիստները կանանց նկատմամբ խտրականության հիմքը տեսնում են հայրիշխանական գենդերային հարաբերություններում, և ոչ իրավական համակարգերում՝ ինչպես լիբերալ ֆեմինիստները, կամ դասակարգային կոնֆլիկտներում՝ ինչպես սոցիալիստականները [49]:

Հոգեանալալիտիկ ֆեմինիզմը առաջացել է 20-րդ դարի երկրորդ կեսին: Մինչ այլ հոգեվերլուծությանը բնորոշ անգիտակցականին հղվելը ֆեմինիզմում կնոջը ենթարկացնելու գործիք էր ընկալվում: 1974-ին ԱՄՆ-ում լույս տեսած Ջ. Միտչելի «հոգեվերլուծությունն ու ֆեմինիզմը», որին 1978-ին հաջորդում է Ն. Չոդորուի «Մայրության վերարտադրումը» և մյուս թողարկումները (al-Hibri, 1981; Benjamin, 1985, 1988; Dinnerstein, 1976; Kittay, 1984) ֆեմինիստական հոգեվերլուծական նոր մտքի սկիզբ դրեցին: Այս տեսության հիմքում դրվում են ոչ թե հոր յուրահատուկ դերն ու եղիպյան բարդույթը, այլ մինչեղիպյան ժամանակահատվածը, երբ երեխան հատուկ կերպով մորն է կապված: Հոգեանալալիտիկ ֆեմինիստները հասուն մարդու վարքագծի մոտիվացիան տեսնում են մանկուց դրված մոր հանդեպ երևակայական վախի մեջ: Լ. Իրիգարին պահանջեց հրաժարվել կնոջ՝ իբրև կաստրացիայի ենթարկված տղամարդու, ֆրեյդյան գաղափարներից, որը տառապելով տղամարդու օրգանի բացակայությունից, տղամարդուն վերագրում է երեխա ունենալու նախանձը: Այս ուղղության ներկայացուցիչներին մեղադրում են էսսենցիալիզմի մեջ (այն դրույթի հիմնադրումը ըստ որի կանայք հավերժ կարևորվում են տղամարդկանց համեմատ), ներքին հոգեկան մեխանիզմներին կենտրոնանալուն, արտաքին ազդեցության թերազնահատելուն, այդ թվում հասարակական գործոնների տղամարդու գերիշխանության վրա ազդող գործընթացը: Սոցիալական տեսության մեջ հոգեանալիտիկ ֆեմինիզմի կարևորությունը կայանում է ոչ միայն հասարակության հանրային բնույթին ուշադրություն գրավելուն,

այլն մայրության, (մասնավորապես կանանց կողմից կանանց) դաստիարակության խնդիրների ձևակերպման մեջ [57, 66]:

Պոստմոդեռնիստական ֆեմինիզմի ուղղվածությունը առաջ է եկել 20-րդ դարում, ֆեմինիստական երրորդ ավիքին համընթաց: Այս ուղղվածությունը ֆեմինիզմը վերածեց նախկին գիտական ռացիոնալությունն ու օբյեկտիվությունը քննադատող մեթոդաբանության, հայտարարելով որ դրանք ծառայում են տղամարդկային գիտակարգին: Հասարակագիտական տեսությունում դնում է գիտելիքի բացառապես տղամարդկանց կողմից ներկայացվածության սահմանափակ լինելու խնդիրը: Որ գիտելիքը արտահայտվել է բացառապես տղամարդկանց տեսանկյունից ու տղամարդուն հատուկ արտահայտվելու ձևով: Հերքելով նախկին ռացիոնալությունը, պոստմոդեռնիստական ֆեմինիզմն առաջարկում է ուշադրություն դարձնել բացահայտվող սուբյեկտի սեռային առանձնահատկությունները, նրա արժեքային համակարգերը: Նման ֆեմինիզմի մեթոդաբանությունը դեմ է ուղղված է «օբյեկտիվ փաստի» պոզիտիվիստական դրույթին: Ընդգծում է գիտնականի, որպես համապատասխան սեռի ներկայացուցչի, հետազոտության խնդիրների նկատմամբ ունեցած աշխարհայացքը:

Այս ուղղվածության գիտնականների աշխատանքները կենտրոնացած են դիսկուրսներում աստահայտվող կանանց նկատմամբ խտրականություններին: Հենց պոստմոդեռնիստ ֆեմինիստների աշխատանքների շնորհիվ են գիտության մեջ ի հայտ եկել «կանանց գրեր» և «կանացի ընթերցում» հասկացությունները [59]:

2.2 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ենթագլխում ներկայացվում են Հայաստանում գենդերային հիմնախնդրի պատճառների բազմազանությունը, դրանց քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային հիմքը ուսումնասիրող մի շարք հետազոտություններ կատարված գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոնի կողմից:

2016 թ.-ին ԳՀԱԿ-ի «ՕքսեՋեն» հիմնադրամի աջակցությամբ իրականացված հետազոտությունը ուղղված է կանանց և տղամարդկանց տնտեսական ակտիվության բազմակողմանի ուսումնասիրությանը [69]: Բացահայտվել են կանանց տնտեսապես հզորացումից դեպի քաղաքական մասնակցությունից ետ պահող մի շարք կառուցվածքային և մշակութային գործոններ: Դուրս են բերվել հետևյալ սահմանումները՝

- Աշխատանքային ռեսուրսների տիրապետման ավելի մեծ մասշտաբների պայմաններում Հայաստանում կանանց տնտեսական ակտիվությունը, տղամարդկանց հետ համեմատած, զգալիորեն ցածր է: Գեղարքունիքի, Լոռու և Արագածոտնի մարզերում տնտեսապես ակտիվ տղամարդկանց թիվն ավելի ցածր է, քան տնտեսապես ակտիվ կանանց թիվը:

- Կանանց՝ տնտեսության տարբեր ոլորտներում ներգրավվածության տեսանկյունից ակտիվ տարի է բնորոշվում 2013 թ.-ը՝ կանանց մասնակցությունը պետական և համայնքային հատվածում կազմել է 58%, մասնավոր հատվածում՝ 44.7%, հասարակական ոլորտում՝ 68.1%: Նույն 2013 թվականին կտրուկ անկում է ապրել կին գործատուների քանակը՝ հասնելով 16%-ի՝ համեմատությամբ 2011 և 2012 թվականների, երբ կին գործատուների տոկոսը համապատասխանաբար կազմել էր 22% և 21%:

- ՀՀ վիճակագրական ծառայության 2010-2014 թվականների տվյալների համաձայն՝ կանայք Հայաստանում առավելապես ներգրավված են աշխատաշուկայում ոչ լրիվ աշխատանքային օրով: Այս միտումը գնալով ավելի է խորացել. կանայք նշված ժամանակահատվածում գնալով ավելի շատ են ներգրավվել աշխատաշուկայում ոչ լրիվ

աշխատանքային օրով. 2010-2014 թվականների ընթացքում այս ցուցանիշը 58.2%-ից դարձել է 63.4%:

- Ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատող ամուսնացած կանանց թիվը գերազանցում է նույն կարգավիճակ ունեցող տղամարդկանց թվին: Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ երբևէ չամուսնացած, այրի և ամուսնալուծված կանայք ավելի շատ են զբաղված լրիվ աշխատանքային օրով, քան ամուսնացած և համատեղ ապրող կանայք, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ որոշ առումով կոտրվում են կանանց՝ աշխատաշուկայում ներգրավվածության և նրանց աշխատանքային հնարավորությունների մասին կարծրատիպերը:

- Չնայած կանանց կրթական հաջողություններին և այս համակարգում ավելի ակտիվ մասնակցությանը՝ կանայք չունեն համապատասխան վարձատրություն:

- 15-80 տարեկան կանանց և տղամարդկանց ժամանակի ծախսման կառուցվածքում հատկապես շատ մեծ տարբերություն է նկատվում աշխատանքի (եկամտաբեր և ոչ եկամտաբեր) վրա ծախսած ժամաքանակներում: Կանայք չվճարվող աշխատանքի (տնային տնտեսության և ընտանիքի խնամքի) վրա ծախսում են 5 անգամ ավելի շատ ժամանակ, քան տղամարդիկ, իսկ տղամարդիկ վճարովի աշխատանքի վրա ծախսում են 4.6 անգամ ավելի շատ ժամանակ, քան չվճարվող աշխատանքի վրա:

- 2014 թվականին ընտանեկան հանգամանքների պատճառով գործազուրկ են եղել միայն կանայք: Կանանց գործազրկության ամենաբարձր ցուցանիշները 2014 թվականին գրանցվել են Կոտայքի (30.9%), Սյունիքի (24.8%) մարզերում և Երևանում (29.5%):

- Կանայք ավելի երկար են աշխատանք փնտրում, քան տղամարդիկ:

- Աշխատաշուկայում գենդերային խտրականությունը նկարագրելու ամենատարածված և ակնհայտ մեխանիզմը կանանց ու տղամարդկանց եկամուտների միջև տարբերությունների ուսումնասիրությունն է: Հայաստանում գենդերային ճեղքվածքը դեռևս մնում է ամենամեծը լայն տարածաշրջանում (այդ թվում՝ Հարավարևելյան Եվրոպան և ԱՊՀ երկրները):

- Հայ հասարակությունում գենդերային հիմնական պատկերացումները կառուցվում են դերերի և իշխանության ավանդական բաշխման «կինը ընտանիքի համար է, տղամարդը՝

հասարակության» կարծրատիպերի շուրջ, որոնք առաջացել են հայրիշխանական մշակույթի և պատրիլոկալ ընտանիքի մոդելների լայն տարածման հետևանքով:

- Հնագանդություն հատկանիշը քառակի ավելի է կարևորվում աղջիկների համար (11%-ի կարծիքով՝ կարևոր է տղաների, 3%-ի կարծիքով՝ աղջիկների համար), անկախությունը համարյա կրկնակի ավելի է կարևորվում տղաների համար (7.3%-ը կարծում է, որ կարևոր է տղաների, 3.9%-ը՝ աղջիկների համար), վստահությունը, 9%-ի կարծիքով, կարևոր է տղաների և 6%-ի կարծիքով՝ աղջիկների համար, ինքնարտահայտումը, 6%-ի կարծիքով, կարևոր է տղաների, 4%-ի կարծիքով՝ աղջիկների համար: Այնուամենայնիվ, հետաքրքրական է, որ երևակայություն հատկանիշը կրկնակի ավելի է կարևորվել աղջիկների, քան տղաների համար (2.6%-ի կարծիքով՝ կարևոր է աղջիկների, 1.3%-ի կարծիքով՝ տղաների համար):

- Հայ հասարակությունում ընտանիքի նյութապես ապահովումը հիմնականում դրված է տղամարդու վրա: Սակայն այս դիրքորոշումն առավել տարածված է տղամարդկանց, քան կանանց շրջանում: Այսպես, տղամարդկանց միայն 2.5%-ն է նշում, որ ընտանիքը նյութապես կինն է ապահովում այն դեպքում, երբ կանանց 15%-ն է նշել այդ պատասխանը:

- ԳՀԱԿ-ի կողմից իրականացված հետազոտության տվյալների համաձայն՝ տղամարդկանց 62%-ը և կանանց 56%-ը լիովին համաձայն են այն դատողությանը, որ երբ աշխատատեղերը քիչ են, տղամարդիկ պետք է ունենան աշխատանք ձեռք բերելու ավելի ընդարձակ իրավունքներ, քան կանայք:

- Տղամարդկանց 78%-ը և կանանց 75%-ը լիովին համաձայն են, որ կնոջ կարևորագույն առաքելությունը մայրանալն է: Հայաստանի բոլոր մարզերում շատ բարձր է տոկոսային ցուցանիշն այս դատողությանը լիովին համաձայն լինելու հարցում: «Արդյո՞ք աշխատող մայրը կարող է լինել այնպիսի լավ մայր, ինչպիսին չաշխատող մայրը», տղամարդկանց միայն 17%-ն է համաձայնել՝ կանանց 91%-ը:

- Տղամարդկանց 78%-ը և կանանց 58%-ը կարծում են, որ առավել պատասխանատու աշխատանքները ավելի լավ տղամարդիկ են իրականացնում:

- Պատանիները, որոշ դեպքերում՝ նաև աղջիկները, գտնում են, որ կնոջ աշխատելու պարագայում անպայմանորեն պետք է տղամարդու աշխատավարձի չափն ավելի բարձր լինի, քան կնոջինը, քանի որ հակառակ դեպքում կինը կարող է օգտագործել այդ հանգամանքը՝ ցուցաբերելով «անհնազանդություն» ընտանեկան հարաբերություններում:

-Կանանց քաղաքական մասնակցությունը սահմանափակող գործոնների շարքում կարելի է առաձնացնել.

1) գաղափարական գործոններ, ըստ որոնց՝ հայրիշխանական հասարակարգում ձևավորված գենդերային հարաբերություններում կանայք միշտ զբաղեցնելու են երկրորդական դերեր և դուրս են մնալու հանրային կյանքից:

2) քաղաքական գործոններ, ըստ որոնց՝ տղամարդկանց կողմից ղեկավարվող կուսակցությունները, քաղաքական կուսակցությունների մշակույթը և հայրիշխանական արժեքներն ու նորմերը սահմանափակում են կանանց մասնակցությունը քաղաքականության մեջ:

3) սոցիալ-մշակութային գործոններ, որոնք արտահայտվում են խիստ տարբերակող գենդերային սոցիալականացման, գենդերային դերերի մասին կարծրացած պատկերացումներում, կանացիության և առնականության հայեցակարգերի վերաբերյալ գերակշռող առասպելներում և կարծրատիպերում:

4) տնտեսական գործոններ, ըստ որոնց՝ կանանց շրջանում տնտեսական կապիտալի սակավությունը արդի քաղաքականության բարձր առևտրայնացվածության (կոմերցիալացվածության) համատեքստում բավականին մեծ խոչընդոտ է կանանց՝ քաղաքական կյանքին մասնակցության համար:

5) սոցիալական ցածր կապիտալ, որի առկայության դեպքում ամբողջ աշխարհում կանայք զիջում են տղամարդկանց՝ սոցիալական ցանցերում ներգրավվածության, սոցիալական «կարևոր» կապեր և դրանք ստեղծելու ու պահպանելու հմտություններ ունենալու առումներով:

- Կանանց՝ որպես ղեկավարներ ներգրավվումը, նպաստում է ոչ միայն տնտեսական շահույթի ավելացմանը, այլ նաև առաջնորդական նոր մշակույթի ներդրմանը:

- Մարդիկ, որոնք իրենց առօրյա գործունեությունը արդյունավետ են համարում, ավելի հակված են մասնակցելու քաղաքական գործընթացներին:

-Կին համայնքների ղեկավարները հիմնականում ղեկավարում են աղքատ համայնքներ և գրեթե միշտ ասոցիացվում են քիչ բարեկեցիկ համայնքների հետ, ինչը ևս մեկ անգամ ամրապնդում է այն կարծրատիպը, որ «քաղաքականությունը կանանց գործը չէ», և որ «կինը չի կարող լավ առաջնորդ լինել:

- Տարբեր երկրներում կանանց միկրոկրեդիտավորման ծրագրերի փորձը վկայում է այն մասին, որ ֆինանսների տրամադրմանը զուգահեռ անպայման պետք է իրականացվեն կյանքի և ժամանակի պլանավորման հմտությունների զարգացմանը, կոլեկտիվ շահի վերաբաշխմանը, ինչպես նաև շուկայաբանությանը (մարքեթինգին), առաջնորդությանը և սոցիալական այլ հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացներ, այլապես ծրագրերը չեն իրականացվի:

- Կանանց կոոպերատիվները կարող են դառնալ այն միջավայրը և հարթակը, որտեղ ինքնաբուխ և բնականորեն կձևավորվեն և ի հայտ կգան կին առաջնորդներ: Ըստ փորձագետների՝ նման նախաձեռնությունների միջոցով է միայն, որ հանրությունը կկարողանա տեսնել տնտեսական հզորացման ու քաղաքական մասնակցության միջև անմիջական կապը:

- Կոոպերատիվները զգալիորեն նվազեցնում են կոռուպցիոն ռիսկերը և չեզոքացնում են այն տարածված երևույթը, երբ բիզնեսը պարզապես գրանցվում է կնոջ անունով: Կոոպերատիվները հնարավորություն են տալիս կնոջը փորձարկելու իր բիզնեսհմտությունները և զգալու՝ արդյոք նա պատրաստ է ստեղծել ինքնուրույն բիզնես, թե ոչ: Կոոպերատիվները կանանց մենթորության և փոխօգնության յուրահատուկ ձևեր են, քանի որ այստեղ կանայք փոխանակում են իրենց գիտելիքներն ու հմտությունները՝ քննարկելով նոր բիզնես գաղափարներ:

«Հայաստանի գենդերային բարոմետր» ԳՀԱԿ-ի կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումը ուսումնասիրել է հայաստանցիների գենդերային դիրքորոշումները [70]: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս հայաստանյան

հասարակության ներկայիս գենդերային դիրքորոշումները, կարծրատիպերը և իրողությունը: Ըստ դրանց՝

- Արժեհամակարգի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հարցվողները հակված են քննադատորեն վերաբերվել շրջապատող մարդկանց կարծիքին, ավանդական պատկերացումներին՝ ավելի կարևորելով սեփական փորձը և կարծիքը: Միևնույն ժամանակ համեմատաբար քիչ են այն հարցվողները, ում համար կարևոր է շրջապատից տարբերվելը: Տվյալները վկայում են գենդերային հստակ տարբերությունների մասին. եթե տղամարդիկ ավելի են կարևորում սեփական ջանքերով հաջողության հասնելը և շրջապատի կարծիքը նրանց ձեռքբերումների մասին, ապա կանանց կարծիքով ավելի կարևոր է կրթված զարգացած լինելը, ինչպես նաև դարերից եկած ավանդույթները: Արժեհամակարգի հետ կապված էական գենդերային տարբերություններ չեն արձանագրվել. ընտանիքը, խաղաղությունը, աշխատանքը և կրոնը նշված հաջորդականությամբ կարևորել են ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ: Տարբերությունը նկատելի է ընկերների վերաբերյալ կանանց և տղամարդկանց դիրքորոշումներում. տղամարդիկ ավելի են կարևորում ընկերությունը, քան կանայք:

- Ավելի երջանիկ են այն հարցվողները, որոնք ավելի են կարևորում ընկերներին, հանգիստը, ժամանցը, կրոնը: Եվ պակաս երջանիկ են նրանք, ովքեր ավելի են կարևորում քաղաքականությունը և հարուստ լինելը:

- Հետազոտական տվյալների համաձայն՝ սեռը որպես հաջողության հասնելու գործոն հինգերորդ տեղում է: Այս հարցին կանանց և տղամարդկանց պատասխանների համեմատությունը ցույց տվեց, որ տղամարդիկ շատ ավելի հաճախ են սեռը նշում, որպես իրենց կյանքում հաջողության հասնելու համար անմիջական ազդեցություն ունեցող գործոն:

- Հայ հասարակության մեջ կնոջ և տղամարդու սոցիալական դերերի բազմակողմանի քննարկումը թույլ տվեց անել հետևյալ եզրակացությունները՝

- ✓ Հայ հասարակությունը բոլոր բնագավառներում՝ ընտանեկան, կրթական, մասնագիտական, նյութական, կրոնական և քաղաքական, տղամարդու առջև ավելի բարձր պահանջներ է դնում, քան կնոջ:

- ✓ Տղամարդու կողմից ընտանիքի նյութական ապահովության դերը շատ է կարևորվում, անհամեմատ ավելի բարձր, քան կնոջ համանման դերը:
 - ✓ Կին հարցվողները ավելի էմանսիպացված դիրքորոշում են արտահայտում, քան տղամարդիկ՝ կարևորելով իրենց դերը կրթական, մասնագիտական, նյութական ապահովության ոլորտում:
- Երջանկության վերաբերյալ տվյալների համադրությունը այլ հարցերի հետ թույլ տվեց մի շարք հետաքրքիր օրինաչափություններ վեր հանել:
- ✓ համեմատած կանանց հետ տղամարդկանց ավելի մեծ տոկոսն է իրեն շատ երջանիկ համարում:
 - ✓ մեծ ընտանիքներում ապրող հարցվողներն իրենց ավելի երջանիկ են զգում, քան փոքր ընտանիքներում ապրողները:
 - ✓ ամուսնացած (ինչպես պաշտոնապես ամուսնացած, այնպես էլ եկեղեցական արարողակարգով ամուսնացած) հարցվողները համեմատաբար ավելի երջանիկ են իրենց համարում: Երջանկության մակարդակն ամենացածրն է ամուսնալուծված հարցվողների շրջանում:
 - ✓ ավելի բարձր անձնական և ընտանեկան եկամուտ ունեցող հարցվողներն իրենց ավելի երջանիկ են համարում:
 - ✓ որքան ավելի բարձր է կրթական մակարդակը, այնքան ավելի երջանիկ են իրենց համարում հարցվողները:
 - ✓ որքան ավելի բարձր է աշխատանքային կարգավիճակը, այնքան ավելի երջանիկ են իրենց համարում հարցվողները:
 - ✓ որքան ավելի հաջողակ են մարդիկ իրենց համարում, այնքան նրանք ավելի երջանիկ են:
 - ✓ ավելի երջանիկ են նրանք, ովքեր հաջողության հասնելու գործում կարևորում են ազնվությունը, ճարպկությունը, ծննդավայրը:
 - ✓ ավելի երջանիկ են նրանք, ովքեր հաջողության հասնելու գործում կարևորել են իրենց սեռը:

- ✓ ավանդական գենդերային դիրքորոշումներ ունեցող հարցվողները ավելի երջանիկ են իրենց զգում:
- ✓ պակաս երջանիկ են նրանք, ովքեր կարևորում են ինչպես կնոջ, այնպես էլ տղամարդու հարուստ լինելը և քաղաքականության մեջ ակտիվ ներգրավված լինելը:
- ✓ ավելի երջանիկ են նրանք, ովքեր համարում են, որ ՀՀ-ում պաշտպանված են կանանց և տղամարդկանց իրավունքները:
 - Հարցվածների 59%-ի կարծիքով մեր հասարակությունում առկա է կանանց և տղամարդկանց միջև անհավասարություն: Հարցվածների միայն 8.3%-ն է համարում, որ մեր հասարակությունում չկա անհավասարություն կանանց և տղամարդկանց միջև, իսկ 1.6%-ը դժվարացավ պատասխանել այս հարցին:
 - «Եթե ընտրելու հնարավորություն ունենաիք ծնվել կին, թե տղամարդ, որը կնախընտրեիք» հարցին տղամարդկանց գերակշռող մեծամասնությունը կցանկանար տղամարդ ծնվել (96.6%): Իգական սեռի հարցվողների 67.7%-ը հայտնեց, որ կնախընտրեր կին ծնվել, իսկ 27.3%-ը նշել է, որ կնախընտրեր ծնվել տղամարդ, ինչը էապես ավելի շատ է, քան հարցված տղամարդկանցից կին ծնվելու ցանկություն հայտնաձևների տոկոսը:
 - Հարցվածներն ավելի բարձր են գնահատում Հայաստանում տղամարդկանց իրավունքների պաշտպանության մակարդակը, քան կանանց: Տղամարդկանց իրավունքները, հարցվողների կարծիքով, համեմատաբար ավելի հաճախ ոտնահարվում են բիզնեսի ոլորտում: Կանանց իրավունքները բոլոր ոլորտներում ավելի հաճախ են ոտնահարվում, քան տղամարդկանց իրավունքները:
 - Արական և իգական սեռի երեխաների դաստիարակության հարցում հատկապես կարևորվում է պատասխանատվության զգացումի, աշխատասիրության, հանդուրժողականության, այլ մարդկանց հանդեպ հարգանքի դաստիարակությունը: Տղաների դաստիարակության հարցում ավելի է կարևորվում վստահության, հաստատակամության, անշահախնդրության, առատաձեռնության, մեծահոգության դաստիարակումը, և անհամեմատ ավելի շատ անկախության դաստիարակումը:

Աղջիկների դաստիարակության հարցում հարցվողները շատ կարևորեցին հնազանդության դաստիարակությունը և որոշ չափով ավելի բարձր, քան տղաների դաստիարակության հարցում, երևակայության զարգացումը:

- Ապագա թե՛ ամուսին և թե՛ կին ընտրելու հարցում հարցվողների կարծիքով առաջնային կարևորություն ունեն բնավորությունը և փոխադարձ զգացմունքները, սերը: Սակայն ամուսին ընտրելիս էապես ավելի, քան կին ընտրելիս, հարցվողները կարևորում են նյութական ապահովվածությունը, իսկ կին ընտրելիս՝ արտաքինը:

- Գենդերային անհավասարության հայտանիշներից է արական սեռի զավակ ունենալու նախապատվությունը: Ընդ որում տղամարդկանց շրջանում արական սեռի երեխա ունենալու նախապատվությունը շատ ավելի տարածված երևույթ է:

- Ե՛վ արական, և՛ իգական սեռի հարցվողների համաձայնության մակարդակը հայ հասարակության մեջ տարածված կարծրատիպերի հետ բավական բարձր է՝ հատկապես տղամարդու գումար վաստակողի, կնոջ որպես մոր դերերն են շեշտվում:

- Բավական ցածր է հետևյալ կարծրատիպի հետ հարցվողների համաձայնության աստիճանը « Կրթությունը տղայի համար ավելի կարևոր է , քան աղջկա համար»:

- «Կանայք պետք է տղամարդկանց հետ հավասար իրավունքներ ունենան և հավասար վերաբերմունքի արժանանան» դատողության հետ համաձայնվել է հարցվածների գերակշռող մեծամասնությունը: Ստացված պատկերը վկայում է հասարակության կարծիքում գենդերային հավասարության գաղափարների արմատավորման մասին: Միննույն ժամանակ կարելի է արձանագրել տղամարդկանց որոշակի դիմադրողականությունը գենդերային հավասարության հարցում:

- Հարցվողների գերակշռող մեծամասնությունը անհանդուրժող է կնոջ հանդեպ բռնության հարցում: Սակայն տղամարդիկ համեմատաբար ավելի հանդուրժող են կնոջ հանդեպ բռնությանը: Ընդհանուր առմամբ, ավելի վարձր է հանդուրժողականությունը տղամարդու բռնարար վարքի նկատմամբ:

- Ընտանիքների 74.7%-ում ընտանիքի գլխավոր է հանդիսանում արական սեռի ներկայացուցիչը, իսկ ուսումնասիրված ընտանիքների 25.3%-ի ընտանիքի գլխավորը

կին է: Չամուսնացած, ամուսնալուծված և այրիացած հարցվողները ավելի հաճախ են նշել, որ նրանց ընտանիքի գլխավորը կին է:

- Որքան ավելի ցածր է ընտանիքի տնտեսական ապահովվածության մակարդակը, այնքան ավելի մեծ է կին ընտանիքի գլխավորների տոկոսը: Իրենց՝ որպես բոլորովին չապահովված գնահատող ընտանիքների 41.5%-ում ընտանիքի գլխավոր են հանդիսանում կանայք:

- Ընտանեկան պարտականությունների բաշխումը համապատասխանում է ավանդական դերերի բաշխմանը: Հավասարապես և՛ կանայք, և՛ տղամարդիկ ներգրավված են հանգստի/Ժամանցի կազմակերպման և երեխաների կրթության և դաստիարակության մեջ: Իսկ երեխաների խնամքով ավելի շատ զբաղվում են կանայք:

- Տղամարդիկ էապես ավելի հաճախ, քան կանայք հանդիսանում են այս կամ այն սեփականության սեփականատեր կամ համասեփականատեր: Անշարժ և շարժական գույքի այլ տեսակների հետ համեմատաբար ավելի շատ դեպքերում կանայք հանդիսանում են բնակարանի կամ տան սեփականատեր:

- Արական սեռի հարցվողները ավելի շատ են հետաքրքրվում քաղաքականությամբ, քան իգական սեռի հարցվողները:

- Ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց սեզոնային աշխատանքային միգրացիան բավական բացասական հետևանքներ է թողնում ընտանիքի վրա: Դա և՛ ամուսնալուծությունների թվի աճն է, և՛ Հայաստանում մնացած ամուսնու պարտականությունների ավելացումը, և՛ ծանր հոգեբանական վիճակը: Սակայն առավել հաճախ նշվել է միգրանտ ծնողի չմասնակցելը երեխաների դաստիարակությանը:

- Արտագնա աշխատանքների մեկնող ընտանիքի անդամ ունեցող ընտանիքներում նրա բացակայության ընթացքում իր ընտանեկան պարտականությունները հիմնականում կատարում են հակառակ սեռի ներկայացուցիչները՝ 41.4%:

- Իգական սեռի հարցվողների զբաղվածության մակարդակը էապես ավելի ցածր է վերջին մեկ ամսվա ընթացքում իրականացրել են աշխատանք և ստացել են նյութական փոխհատուցում հարցված տղամարդկանց 59.5%-ը, իսկ կանանց՝ 32.1%ը: Պետական հիմնարկություններում համեմատաբար ավելի բարձր է իգական սեռի

ներկայացուցիչների ներկայացվածությունը, իսկ մասնավոր հիմնարկություններում՝ արական: Կանանց համեմատ բարձր է նաև ինքնագրադված տղամարդկանց տոկոսը:

- Ղեկավար պաշտոններում տղամարդկանց ներկայացվածությունն ավելի բարձր է, քան կանանց ներկայացվածությունը: Զբաղված հարցվողների աշխատանքը հիմնականում համապատասխանում է իրենց մասնագիտական որակավորմանը: Սակայն կանայք համեմատաբար ավելի հաճախ, քան տղամարդիկ կատարում են ավելի ցածր մասնագիտական որակավորում պահանջող աշխատանք, իսկ տղամարդիկ ավելի հաճախ, քան կանայք՝ ավելի բարձր մասնագիտական որակավորում պահանջող աշխատանք:

Մեկ այլ հետազոտություն, որ անդրադարձել է գենդերային խտրականությանը՝ «Գենդերային սոցիալականացման գործընթացի վերլուծություն. հայկական ընտանիքներում կանանց և աղջիկների կարգավիճակն ու հեռանկարները» խորագրով Լ. Գարգրջյանի և Ի. Հարությունյանի համատեղ աշխատանքն է [71]: Դիտարկվել է գենդերային սոցիալականացման ազգային առանձնահատկությունները, թե ինչպես են փոխանցվում այն գենդերային դիրքորոշումները, որոնց արդյունքում հայաստանյան հայրիշխանական համակարգում թերարժեքվորվում է կնոջ դիրքը, անհավասար գենդերային կարգավիճակների ձևավորումն ու ամրապնդումը, դրանցում ընտանիքի, կրթության ու կրոնի դերը: Հետազոտության արդյունքում պարզվել է որ՝

- Հիմնական գենդերային պատկերացումները կառուցվում են դերերի և իշխանության կարծրատիպային ավանդական բաշխման շուրջ:
- Փոխանցվելով սերնդից սերունդ՝ այս պատկերացումները հիմք են դնում աղջիկների ու տղաների մեջ երկակի ստանդարտների ձևավորմանը՝ սեռից կախված թույլատրելիության և բարոյականության տարբեր չափանիշների կիրառման շնորհիվ:
- Դաստիարակության տարբերակված պրակտիկաները՝ մասնավորապես աղջիկների խիստ վերահսկումը և նկատելի սահմանափակվածությունը, նրանց պարտականությունների բազմազանությունը, տղաների ազատ և արտոնյալ դաստիարակության պայմանները ամրագրում են հասարակությունում առկա

անհավասար գենդերային կարգավիճակները և երկու սեռերի մոտ էլ ստեղծում են դրանց բնականոն տրվածության ընկալում:

- Աղջկա դաստիարակության բոլոր եզրաշերտերը կառուցվում և ուղղված են ապագա մոր և «համեստ հարսի» դերին պատրաստելուն: Այս դերերի անբաժան մաս են կազմում ինքնանվիրումն ու պատասխանատվությունը. աղջկա տարածաժամանակային սահմանափակումները, սեռականության, ազատ խոսքի, վարքի սահմանափակումները նպատակ ունեն աղջկա մեջ դաստիարակելու պատասխանատվության բարձր զգացում և սեփական ձգտումների սահմանափակման և ինքնանորմավորման կարողություն: Այս հատկությունները աղջիկներին դարձնում են «հարմար» ուրիշ ընտանիքում ապրելու համար և հանդիսանում են նրանց շրջապատողների (ամուսնու, երեխաների, ամուսնու ծնողների) բարեկեցության գրավականը:
- Տղայի դաստիարակությունը կառուցվում է «տան սյուն» լինելու գաղափարի շուրջ, որը տղաներին մի շարք «չվաստակած» արտոնություններ է ընձեռում, ինչը ոչ միայն ամրագրում է տղամարդու գերակա դիրքը հասարակություն մեջ, այլ նաև հաճախ զրկում է տղային նախաձեռնողականությունից և ձեռքբերումների համար պայքարելու ձգտումից: Քանի որ տղաները առանց ջանքերի արտոնյալ պայմաններ են ունենում աղջիկների համեմատ, նրանց մոտ թուլանում է մրցակցայնության, նպատակասլացության միտումը:
- Միննույն ժամանակ, նույն այս հանգամանքը աղջիկներին հաճախակի մղում է դեպի ակտիվության բարձր մակարդակ, ինչը հիմնականում դրսևորվում է ուսման ասպարեզում ավելի բարձր նվաճումների տեսքով, իսկ հետագայում հասարակական գործունեության մեջ սահմանափակումներին բախվելով՝ վերածվում է «իդեալական մոր» դերի իրականացման ձգտման: Միննույն ժամանակ, դուրս է մնում աղջկա կարևորագույն դերերից մեկը՝ կողակցի դերը, ինչը մեծացնում է ընտանեկան կոնֆլիկտների և համատեղ կյանքով անբավարարվածության մակարդակը:

- Տղաների սոցիալականցման «կանացի չլինելու» պայմանը նրանց մոտ իզական սեռի հետ առնչություն ունեցող ամեն բանի հանդեպ բացասական վերաբերմունք է սերմանում, ինչպես նաև «իզականի» պատժելիության վերաբերյալ դիրքորոշում է ձևավորում: Չի բացառվում, որ այս գործոնն իր դերն ունի աղջիկ երեխա ունենալ չցանկանալու դիրքորոշման ձևավորման մեջ:
- Երեխաների ապագայի հանդեպ ակնկալիքները հստակ արտացոլում են այն պատկերացումները, որոնք հասարակությունը վերագրում է կնոջը և տղամարդուն՝ տղաներից ակնկալելով բարձր հասարակական ակտիվություն և մասնագիտական ձեռքբերումներ, իսկ աղջիկներից համեստ ձեռքբերումներ և «իզական մասնագիտությունների» յուրացում, «օրինակելի հարսնություն» և ինքնամոռաց մայրություն: Այս սպասելիքները սկսած վաղ մանկությունից երեխային մատնանշում են իր ինքնիրացման սահմանները և բավականին հստակ ծրագիր առաջադրում հետագա ողջ կյանքի համար:

Գ. Շահնազարյանի և Ս. Հովհաննիսյանի «Մեռով Պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների համակարգային և մշակութային պատճառները Հայաստանում» հետազոտությունում ներկայացված են տղա երեխային նախապատվուն տալու տվյալների հարաբերակցությունը ամբողջ երկրի համար [72]: Ըստ դրա տղա երեխայի նախապատվությունը առկա է թե ընտանիքներում, թե շրտապատում, թե կանանց թե տղամարդկանց դիրքորոշումներում: Ընդ որում համեմատելով քաղաքներում և գյուղական, մարզային համայնքներում ստացված տվյալները, երևում է որ գյուղերում տղա երեխաների նախապատվությունը տաս անգամ գերազանցում է: Երևույթի պատճառներից նշվում է՝

- հայ իրականության մեջ ընդունված պատկերացումն է այն մասին, որ որդիներն ավելի արդյունավետ են որոշ դժվարությունների լուծման հարցերում,
- տղամարդու հետ ավելի հեշտ է համագործակցել, քանի որ կինն իրեն ստորադասված է զգում,
- քույրերի կանանց պատիվը պաշտպանելու տղաների մշակութային դիրքորոշումը,

Հետազոտությունում շեշտվում է ՄՊՀԱԸ-ի տարածվելու դեպքում հասարակության ծայրահեղ մասկուլինացումը, հարցի լուծման համար պետական ռազմավարական մշակման կարևորությունը, ստեղծված իրավիճակի կործանիչ ազդեցությունը առաջին հերթին մարդու իրավունքների կայացման տեսակետից, սեռերի անհամաչափության և դրանով պայմանավորված՝ ապագա սերունդներում ծնելիության հնարավոր բարդությունները:

Հետաքրքրական է այն փաստը, որ ըստ վերոհիշյալ թեմայի շուրջ ՄԶՄԿ-ի (մարդկային զարգացման միջազգային կենտրոն) 2015-2017թթ-ի ընթացքում կատարված աշխատանքի արդյունքների մասին հաշվետվության 2011թ. համեմատ կրճատվել է քառասուն տոկոսով: Հետազոտությունը փաստում է, որ սեռի խտրական ընտրությանը նպաստում են սոցիալական միջավայրն ու դրանում առկա գենդերային կարծրատիպերը: Նշվում է, որ ամբողջ երկրի մաշտաբով քարոզարշավ է իրականացվել: Ծրագրին մասնակցել են պետական հասարակական և միջազգային գործընկերներ, կրոնական կազմակերպություններ ու համայնքային գործիչներ [62]:

Յ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՕՏԱՐՄԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Նպատակ հետապնդելով բացահայտել հայաստանյան իրականությունում սոցիալական օտարվածությունն ու դրա գենդերային բաղադրիչները կազմվել է որակական հետազոտության կիրառմամբ ծրագրային հիմք խորին և փորձագիտական հարցումներով: Մեթոդի ընդհանուր ռազմավարությունը ենթադրում է առանձին սուբյեկտների օբյեկտիվ և սուբյեկտիվ սոցիալական փորձի, իրավիճակների և գործողությունների հաջորդականության խորացված ուսումնասիրություն: Հարցազրույցի այս տեսակը ճկուն է ու դինամիկ: Որակական հարցազրույցները պակաս պաշտոնական են և ավելի մտերմիկ: Սա իր հերթին նպաստում է հարցնողի և հարցվողի դեմ առ դեմ փոխազդեցության, պատասխանների անկաշկանդ ու բազմակողմանի լինելուն: Ուղղված են հարցվողի անհատական կենսափորձն ու իրավիճակը իրենց իսկ տեսանկյունից, իրենց իսկ բառերով հասկանալուն ու մեկնաբանելուն[23]: Որակական հարցազրույցը թե ակադեմիական և թե պրակտիկ գործիք է: Այն ցույց է տալիս ուրիշների աշխարհընկալումը [38, էջ 5]: Հարցազրույցը կարելի է դիտարկել որպես առօրյա հարցազրույցի ձևափոխված տարբերակ, որտեղ հետազոտողն առավել հետաքրքրված է հարցվողների ներքին շարժառիթներով, գիտելիքներով, մեկնաբանություններով [38, էջ 6]: Հարցվողի ու հարցազրուցավարի միջև ստեղծվող ուղղակի հաղորդակցությունը և սոցիալ-հոգեբանական հարաբերությունները նպաստում են այնպիսի տեղեկատվության ստացմանը, որը դժվար է ստանալ քանակական և որակական այլ մեթոդներով և պատասխանում «ինչու», «ինչպես», «ինչ պատճառով հարցերին»: Որակական հարցազրույցի միջոցով կարելի է վերլուծել երևույթի իմաստային նշանակությունը, բացահայտել դրա պատճառահետևանքային կապերը՝ խնդրի բազմազանությամբ ու խորությամբ [2]:

3.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներկայիս ժամանակաշրջանը աչքի է ընկնում հասարակական գործընթացների աննախադեպ ինտենսիվացմամբ, արագընթաց այլափոխումներով, նորի, չտեսնվածի, հաճախ անսպասելիի շարունակական արտադրություններով: Մինևույն ժամանակ տեղեկատվական հաճախ անվստահելի հոսանքների քառսը, նորագույն հասարակական վտանգներն ու անհանգստությունները, իրական և ընկալական անգնահատելի ռիսկերի տարափը վերի նշվածի հետ մեկ տեղ շարքային քաղաքացու, սովորական մարդու առօրյան, ապագան դարձնում են անկանխատեսելի: Ըստ էության ներկայիս հասարակական իրականությանը հատուկ է ծավալուն անորոշությունը, ինչը տեղի ունի հասարակական կյանքի կարծես բոլոր ոլորտներում՝ կենցաղից, առօրեականությունից մինչև մակրոսոցիալական, տնտեսական, քաղաքական հարաբերություններ, գործընթացներ: Այժմեական մարդու հասարակական կյանքն ու կենսագործունեությունը առավելապես կազմակերպվում է ժամանակաբանական և սոցիալական նեղ, քիչ թե շատ կանխատեսելի սոցիալական տիրույթում:

Ասվածը ակնհայտ է հայաստանյան հասարակական իրականությունում նույնպես, որին հատուկ էին տեղական պատմասոցիալական զարգացումների և գործընթացների արդյունքում ձևավորված ուրույն դրսևորումներ: Սովետական միության անկումը, տնտեսական ճգնաժամը, վեարտադրման կարծես կանխատեսելի համակարգից անցումը շուկայական մրցակցային հարաբերություններին, քաղաքական համակարգի այլասերումը դարաբաղյան հակամարտության և ավերիչ երկրաշարժի հետևանքները առաջ բերեցին բացառապես նոր սոցիալական իրականություն, նոր սոցիալական հարաբերություններ:

Կարևորագույն փոփոխություններից սոցիալական կյանքի և հարաբերությունների կայուն գործառնման արժեքանորմատիվային հիմքերի խեղումն ու այլասերումը՝ այն է անումիան, մրցակցային հարաբերությունների ներթափանցումը հասարակական հարաբերությունների ոչ առևտրային, անհրաժեշտորեն ոչ մրցակցային

ուրորտներ, սոցիալական անվստահության աճը հասարակական գրեթե բոլոր ազենտների և սոցիալական տարամակարդակ սուբյեկտների նկատմամբ, անկանխատեսելի նորարարությունները տնտեսական, քաղաքական զարգացումներում որպես արձագանք առաջացրին հայ մարդու սոցիալական օտարում իր առանձին դրսևորումներով: Այստեղ առաջնահերթերից են սոցիալական տկարությունը, ձեռքբերովի անօգնականությունը, սոցիալական իմաստագրկումը, սոցիալական մեկուսացումն ու մշակութային հեռացումն, ինչպես նաև կարևորագույն նշանակություն ունեցող սոցիալական աննորմությունը կամ սոցիալական անոմիան:

Նկարագրվածին հիփոթետիկորեն վերադրվում և այսօրինակ նոր համատեքստում են հայտնվում արդեն իսկ պատմականորեն առկա սոցիալական երևույթներ և գործընթացներ, որոնցից են մասնավորապես հայաստանյան իրականության գենդերային հիմնախնդիրների ողջ բազմազանությունը: Այսպիսով հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է *վերլուծել սոցիալական օտարում երևույթը իր անալիտիկ բաղադրիչներով հենց գենդերային հատույթում, ինչը լրացուցի լույս կսփռի թե սոցիալական օտարման և թե գենդերային մի շարք հիմնախնդիրների վրա:*

Հետազոտության օբյեկտը՝

Երևան քաղաքի չափահաս բնակչությանը

Հետազոտության առարկան՝

Երևան քաղաքի չափահաս բնակչության սոցիալական օտարումը գենդերային հիմնախնդիրների համատեքստում

Հետազոտական խնդրիները՝

Ձևակերպել “գենդերային հեռացում” հասկացությունը՝ դիտարկելով այն որպես անձի հեռացում (*անգ.estrangement, ռուս. отстранение*) հասարակայնորեն վերագրված գենդերային նորմատիվներից:

Վերլուծել վերը նշված ձևակերպմանը համաձայն «գենդերային հեռացում» երևույթը ընտրված հետազոտական պարագայում: Բացահայտել վերջինիս նախադրյալները, վերաբորմունքը երևույթի նկատմամբ:

Ձևավորել սոցիալական օտարում բազմաչափ երևույթի վերլուծությանն ուղղված անալիտիկ գործիքակազմ՝ բաղադրատեղիով այն հետևյալ վերլուծական բաղադրիչների՝

- սոցիալական տկարություն (անգ. Social powerlessness)
- սոցիալական իմաստազրկում (անգ. Social meaninglessness)
- սոցիալական աննորմություն (անգ. Social normlessness)
- մշակութային հեռացում (անգ. Cultural estrangement)
- Սոցիալական մեկուսացում (անգ. Social isolation)

Համեմատական վերլուծության ենթարկել սոցիալական օտարման երևույթի վերը ներկայացված բաղադրիչների հասարակական դրսևորման գենդերային առանձնահատկությունները հասարակական առանձին հիմնախնդիրների համատեքստերում:

Տալ սոցիալական օտարում երևույթի համեմատական վերլուծությունը ըստ վերը ներկայացված բաղադրիչների հետազոտական օբյեկտի սոցիալ ժողովրդագրական հատույթներին համապատասխան:

Հետազոտական հիփոթեզներ՝

- Գենդերային հեռացումն առավելապես տեղին է կանանց, քան տղամարդկանց պարագայում, այն առումով որ «իրական» կինը պայմանականորեն առավել է հեռացված «իդեալականից»:
- Գենդերային «ավանդական» նորմատիվների փոփոխությունները ընկալվում են որպես դրական միտում կանանց մոտ: Տղամարդկանց պարագայում գենդերային «ավանդական» նորմատիվների փոփոխությունը ընկալվում է որպես այնուամենայնիվ բացասական, բայց անհրաժեշտորեն անխուսափելի գործընթաց:

- Սոցիալական օտարումը հանձինս սոցիալական տկարության քաղաքական, տնտեսական, սոցիալական հարաբերություններում առավելապես տեղին է կանանց քան տղամարդկանց պարագայում:
- Սոցիալական օտարումը հանձինս սոցիալական մեկուսացման առավելապես տեղին է կանանց, քան տղամարդկանց պարագայում:
- Սոցիալական օտարումը հանձինս սոցիալական աննորմության առավելապես տեղին է տղամարդկանց պարագայում, քան կանանց:
- Սոցիալական օտարումը հանձինս սոցիալական իմաստազրկման առավելապես տեղին է տղամարդկանց, քան կանանց պարագայում:

Հետազոտության ընտրանքը ըստ սեռերի՝

Տղամարդիկ	18-35	Աշխատում է	3
		Չի աշխատում	3
	35-50	Աշխատում է	3
		Չի աշխատում	3
	50-65	Աշխատում է	3
		Չի աշխատում	3
Կանայք	18-35	Աշխատում է	3
		Չի աշխատում	3
	35-50	Աշխատում է	3
		Չի աշխատում	3
	50-65	Աշխատում է	3
		Չի աշխատում	3
Ընդամենը			36

3.2 ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իդեալական տղամարդուն և իդեալական կնոջը վերագրվող գենդերային նորմատիվային որակների համախումբը բովանդականյին առումով բավականին տարբեր է երիտասարդ ու ավագ սերնդի մոտ: Հակասությունը կապված է դրսից եկող փոփոխությունների ու տվյալ տարիքային խմբի դրանց նկատմամբ ունեցած որոշակի սպասելիքների հետ: Երիտասարդ սերունդը (թե կին, թե տղամարդ) հարցերի ձևակերպման մեջ չի ընկալում «հայ» բառի նշանակության շեշտադրումը: Մեկնաբանություններում նշում են, որ իդեալական կնոջ կամ իդեալական տղամարդու որակների մասին ունեցած իրենց պատկերացումներում հիմնականում չկա տարբերություն: Կան համամարդկային արժեքներ, որոնք կրում են կինն ու տղամարդը ու դրանք ավելի արդիական են, քան սեռային պատկանելության առանձնահատկությունները: Մարդկանց առանձնացնում են ըստ սեռային պատկանելության ու վարքի դրսևորումներով, բայց երկուսն էլ մեկ են մարդ տեսակի ու համամարդկային արժեք կրող լինելու տեսանկյունից:

Տղամարդ 21տ.՝ *«Իմ պատկերացրած տարբերությունն էն է, որ առաջ «տան կրակը» պիտի կինը լիներ, իսկ հիմա կարծում եմ «տան կրակը» կնոջ և տղամարդու միասնությունն է»:* *«Երբ մարդկանց մեջ կան բարձր արժեքներ, նրանք գեղեցիկ են իսկ ազգային պահպանողական, կարծրատիպային մոտեցումները ավելի շտա վնաս են նույն ազգային տեսանկյունից քան օգտակար»:*

Ավագ սերունդը սակայն, գենդերային ավանդական նորմատիվների հստակ բաժանում է ձևակերպում: Կանանց վերագրում են հանդուրժող, մեղմ, համեստ հայ տղամարդուն հենարան, տնտեսող, մարդամոտ, կանացի, գեղեցիկ և այլ որակներ, իսկ տղամարդկանց՝ ակտիվ, խելացի, մտածող, լիդեր, սկզբունքային, նախաձեռնող, զարգացած, պայքարող, պաշտպանող, հուսալի և այլն: Վերագրվող որակները կտրուկ տարբեր են ու համընկնում են հայկական ավանդական գենդերային նորմատիվային պատկերացումներին: Գենդերային դերերն ու որակները որպես արժեք կարևորվում են ընտանիքի, հասարակության ու ազգային նկարագրեր պահպանելու տեսանկյունից:

Երեխային նորմատիվների դաստիարակության հարցում կրթական պետական հանցակարգի մշակման անհրաժեշտությունը կարևորվում է ընտանիքի ու ծնողների կողմից փոխանցվող արժեքներն ամրապնդելու, հանրային համապատասխան արժեհամակարգի ձևավորելու տեսանկյունից: Մշին տարիքի մի տղամարդ (44 տ.) Գևորգ Չաուշին որպես հայ իդեալական տղամարդու օրինակ բերեց. *«Իսկական հայ տղամարդը պիտի օրինակ Գևորգ Չաուշի նման լինի՝ ազգասեր, հայրենասեր, կովող, թասիբով, թե չէ հիմա ինչ են ցույց տալիս հեռուստատեսությամբ մարդ չի հասկանում: Պարապ են մարդիկ դրա համար էլ մեծ-մեծ են խոսում, որ գոնե տպավորություն ստեղծեն, որ մի բան կարող են անել»:*

Կին 35տ.՝ *«Բնականաբար քսանհինգ տարի առաջ կանանց ու տղամարդկանց իդեալական նույն որակները տարբեր ձևերով էին վերարտադրվում, բայց դրանք անհրաժեշտություն են հասարակական կառուցվածքում»:*

Փորձագիտական տեսանկյունից իդեալական ասվածն ուղղակի գաղափարային հավաքական է ու իդեալական մարդ ընդհանրապես չկա: Պնդում են, որ յուրաքանչյուրն իր համար շատ անհատական է ընկալում թե ինչպիսին պիտի լինի իդեալական կինը կամ իդեալական տղամարդը և դրանք կարող են հակասել մեկ ուրիշի ունեցած պատկերացումներին:

Փորձագետ՝ *«Չկան իդեալական հայ տղամարդու կամ կնոջ որակներ, դրանք ավելի շուտ համամարդկային որակներ են, ու ընդհանրապես դա շատ սուբյեկտիվ է. . .»:*

Կանանց և տղամարդկանց իդեալական և իրական որակների ցուցակների համեմատությունն ու հարցազրույցի ընթացքում տրված մեկնաբանություններն ըստ էության ավանդական նորմատիվներից հեռացված են: Հագեցած են սեռերին վերագրվող որակների բացասական երանգավորմամբ ու հարուստ բազմազանությամբ: Բոլոր հարցվողները համակարծիք են, որ երկրի քաղաքական, տնտեսական իրականությունը նախադրյալ են ծանր սոցիալական պայմանների համար, որոնց արդյունքում ունենք իդեալական տղամարդուն ու իդեալական կնոջը ձգտող որակների արժեզրկում, դրանցից հեռացում, որովհետև ժամանակի մեջ քիչ են պահանջված: Թե տղամարդիկ թե կանայք իրական տղամարդուն տեսնում են ճնշված, ցածրացած, ծուլ, ազրեսիվ ու

իշխող: Կանանց վերաբերյալ նկարագրականներում շեշտվում է կանանց մասկուլինացված՝ «տղամարդակերպ» դառնալը՝ ակտիվ, նպատակային, ընտանիքին քիչ ժամանակ հատկացնող: Տատանումները պայմանավորվում են դրսից եկող ազգային ավանդական գենդերային նորմատիվներին չհամապատասխանող փոփոխություններով ու որոշակի սպասելիքներով, որոնք հիմնականում չեն համընկնում: Հայ իրականություն ներթափանցում են արժեքներ, որ դեմ են կնոջ ու տղամարդու գենդերային կառուցվածքների մասին կայացած պատկերացումներին, հետևաբար առաջանում են կոնֆլիկտներ: Փորձագիտները համոզված են, որ նույն սոցիալ-տնտեսական ծանր պայմանները տղամարդու ստեղծածն են, քանի որ տղամարդիկ են կառավարության ղեկում, ու թելադրում են տղամարդկանց համար միանշանակ շահեկան իրականություն:

Փորձագետ՝ «Կինն այսօր խեղտված է սոցիալական պայմանականություններով, վախեցած, նա կույտ է տղամարդկանց ցանկությունների ու հրահանգների, դրա համար նա ըստ էության գոյություն չունի՝ նրա մեջ տղամարդն է, ոչ թե ինքը: Հայ տղամարդը ասիական ինքնասիան է, իր ունեցած կարողություններից իրեն գերազնահատող, փնթի թե հիզիենայի, թե հարաբերությունների առումով: Համոզված են որ իրենց ասվածն օրենսդրական նորմավորող ուժ ունի, ինքնազարգացման մեծ բացով: Ըստ մեր մենթալիտետ տղամարդու իր անսահմանափակ կարողություններով ընդունված լինելը կոռումպացնում է տղամարդուն, ավելի ծուլացնում»:

Կին 49տ.՝ «Մեր իրականության մեջ տղամարդն այսօր շատ խեղճացած է ու գիտակցում է, որ չի համապատասխանում մեր նախկին պատկերացումներին: Իսկ կինը՝ ստիպված իր վրա վերցրեց տան, երեխաների հոգսը ու դարձավ կիսատղամարդ»:

Տղամարդ 48տ.՝ «Իրականում ոչ թե վատ եմ վերաբերվում փոփոխություններին, այլ ցավով: Տղամարդիկ շատ բաների հնարավորություն չունեն ու դրա համար կանայք դուրս են եկել իրենց դերից. . .»

Կին 52տ.՝ «Կինն ակամայից ավելի ուժեղ է դարձել, համաձայն է ամեն գործ անի, միայն թե աջակցի ընտանիքին: Տղամարդը քմահաճ է «Էս աշխատանքն ինձ պատիվ չի բերում», դժբոհությամբ է համաձայնվում կամ ընդհանրապես հրաժարվում է

աշխատանքից: Կինն ավելի ցածր պահանջներ ունի: Իսկ եթե ընտանիքում կինն է գումար բերողը՝ ակամայից պայքարող, իշխող է դառնում: Բնականաբար սրանից տուժում է նրա կանացիությունը բայց այլընտրանք չունի»:

Գենդերային նորմատիվների պահպանման կամ չպահպանման հարցի վերաբերյալ հարցվողների մոտ անմիջապես ասոցիացիաներ էին առաջանում լրատվամիջոցներով մեզ փոխանցվող տեղեկատվության գենդերային երանգավորոյմների մասին՝ նշում են մշակութային տարրերի մարդկանց վրա ազդելու ուղղակի կամ անուղղակի հնարավոր տարբերակների արդիականությունը: Համեմատվում է ՄՍՀՄ-ի ժամանակաշրջանի և այսօրվա տեղեկատվության որակն ու բովանդակությունը, տեղեկատվական միջոցների մարդկանց գիտակցության վրա ազդելու հնարքների ու մոտեցումների հետ: Ավելացնում են հասարակությունում եղած գենդերային նորմատիվների ունեցած կշիռն ու մարդկանց (կանանց ու տղամարդկանց) տարբեր սոցիալ-տնտեսական հնարավորությունները: Էս հարցում երկու սեռի, երիտասարդների ու ավագ սերնդի ներկայացուցիչների կարծիքները համընկնում են:

Ավագ սերունդը ի տարբերություն երիտասարդների, կնոջ ու տղամարդու իդեալական նախատիպերի պահպանումը ընտանեկան, հանրային, ազգային արժեքների պահպանման նախապայման է համարում: Էս տրամաբանությունից էլնելով 40-ից բարձր կանանց ու տղամարդկանց համար կնոջ ավանդական դերից, դիրքերից, վարքից շեղումը անընդունելի է համարվում: Երիտասարդների համար, ավանդական խտրական պայմանականություններից հեռացումը, իրավահավասար հասարակության ձևավորումը դրական է գնահատվում:

Տղամարդ 46տ.՝ *«Էն բոլոր բացասական որակները, որ նշել եմ իրական կնոջ ու իրական տղամարդու համար, իմ կարծիքով արտացոլում է թե ինչպես են նրանք ներկայացված, մշակույթում, քաղաքական, տնտեսական ոլորտներում: Օրինակ նույն հեռուստասերիալներում, հաղորդումներում, կամ այլ լրատվամիջոցներում»:*

Կին 26տ.՝ *«Շատ ուրախ եմ, որ հիամա կանայք ավելի շատ են ներգրավված քաղաքականության մեջ: Իհարկե նրանց ներկայությունը դեռ չի տալիս էն պտուղները*

որ ցանկալի է, բայց լավ է էն իմաստով, որ կոտրվել է սահմանափակման թեկուզ արտաքին, ձևական շերտը»:

Տղամարդ 20տ.՝ «Բոլորը ձգտում են դրսի արժեքներին, բայց դրսում ընդունված է, որ ցանկացած երկու անձ, անկախ սեռից, իրար հավասար են: Դա էլ անխուսափելիորեն մեր իրականությունն է մտնում, կանանց հնարավորությունները շատանում են: Ու չեմ կարծում, որ տղամարդիկ էս պարագայում ինչ-որ բան կորցնում են: Եթե տղամարդը մտածող մեկն է, կարող է էնպես անել, որ այդքանով հանդերձ ոչինչ չկորցնի»:

Կին 49տ.՝ «Մարդկանց գիտակցությունը ձևավորող բոլոր տեղեկատվական միջոցներով գովազդվում է հաջողակ, հարուստ, երիտասարդ, գեղեցիկ մարմին ունենալը և վերջ: Մնացած մարդկային որակները կորում են: Ոչ մեր չի խոսում տղամարդու պատասխանատվությունից, ընդհակառակը՝ քննարկում են նրա հասարակական կապերը, որքան արժի մեքենան ու հեռախոսը, ում հետ է նստում վեր կենում: Արտաքին տպավորությունը ստացվում է որ շատ ավելի կարևոր է, քան իրական մարդկային արժեքները ու սրանից տուժում են հավասարապես երկու սեռն էլ»:

Տղամարդ 46տ.՝ «Ինձ թվում է լրատվամիջոցները մեծ ազդեցություն և ուժ ունեն մարդկանց դաստիարակելու և կառավարելու նպատակով: Լուրերի ներկայացրածը ուղղակի ցեմենտվում է, անկախ նրանից, թե որքանով են հավաստի... Եթե հեռուստատեսության ազդեցության ուժը մեծ չլիներ բոլոր պետություններում չէր վերահսկվի: Հեռուստասերիալները քարոզում են գողական, քրեական այլ արժեհամակարգ, խեղված կանացի ու տղամարդկային վարքի մոդելներ, մտածելակերպ, բառապաշար: Քանի որ մեր դեկավարներին էս մակարդակն է պետք, որ հեշտ կառավարեն, դրա համար էլ էկրաններից դա ենք շարունակում տեսներ»:

Տղամարդու և կնոջ իդեալականին ձգտող որակների պահպանումը կորևորվում է նաև փորձագետների կողմից, նշելով որ հասարակությունը չի կարող միանգամից փոխվել և դա կարող է քառսային իրավիճակ ստեղծել: Ընդգծվում է դաստիարակչական, կրթական գործի կարևորությունը որպես հանրային խտրական արժեհամակարգի փոփոխության, սեռերի միջև իրավահավասարության գիտակցության ձևավորման և փոխանցման գործիք: Առաջարկում են նոր գենդերային դերերի ցուցադրությամբ

սոցիալական գովազդների, մշակութային միջոցառումների, պետական հայեցակարգի մշակում: Որպես խանգարող կոմպոնենտ առանձնացվում են մոնոթնիկությունը, փակ, սահմանափակ մտածելակերպը, ադապտացվելու բարձր աստիճանը, որը ետ է պահում դեպի զարգացում տանող ազատությունից:

Փորձագետ՝ «Եթե խոսում ենք էս կառուցվածքների որպես ընդհանուրի մի մաս, ապա դա անընդհատ փոփոխվելու է, որովհետև դա բիզնեսի պահանջ է: Մեկ այլ բան է էդ փոփոխությունների տեմպը ու թե ինչի ազդեցության տակ են փոխվում: Նույնը քաղաքականի վերաբերյալ ու սրանք էնքան սերտաճած են, որ դժվար է առանձնացնել միմյանցից: Հանրապետական կուսակցությունը լինելով ավանդական կուսակցություն դավանում է ընտանիքի, գենդերային հարաբերությունների ավանդական-խտրական կոնստրուկտներ, ու իրենք էլ էդ մշակույթի կորողներն են: Մանավանդ վերջին 2 տարիներին դա ավելի է ամրապնդվում, միգրացիոն պատերազմն է պատճառը, չգիտեմ: Պատերազմը միշտ ազգայնականություն է բերում: Ինձ թվում է քաղաքական իշխանությունը կամ թերագնահատում է իր դերը մշակութային փոփոխություններ մտցնելու մասով, կամ գիտի ու ցույց չի տալիս: Բայց ազգայնականությունը, խտրականության մեծ երանգավորմամբ, կաթիլ-կաթիլ մատուցվում է ժողովրդին: Այսինքն կա մշակութային փոփոխություն, բայց բացասական ուղղվածությամբ»:

Ավանդական դերերի, դիրքերի ու վարքի փոփոխությանը ժամանակակից հասարակության զարգացման բնականոն ընթացք է համարվում կանանց ու տղամարդկանց բոլոր տարիքային խմբերում: Դեպի առաջադեմ, իրավահավասար դեմոկրատական հասարակության զարգացման տեսանկյունից դրական է գնահատվում կնոջ հասարակական ակտիվությունը: Այնուամենայնիվ տղամարդիկ մի փոքր վերապահումով են վերաբերվում կնոջ ընտանեկան, ազգային նկարագրի փոփոխությանը: 35-ից բարձր տարիքի կանայք և տղամարդիկ սեռերի դերերի ու դիրքի փոփոխությունը արհեստածին, տնտեսապես պայմանավորված են համարում: Գտնում են որ վտանգված են ազգային ավանդույթների, հայ ազգի, որպես էթնոխմբի գոյությունը: Ընդգծում են, որ այնուամենայնիվ մեր մենթալիթետին դեռևս խորթ են կնոջ ազատությունը ու մեծ է դրա ամենաթողության հետ շփոթելու վտանգը: Տղամարդկանց

թուլամորթ դառնալը, օրինակ, ևս քննադատվում է, բայց արդարացվում աշխատաշուկայում տղամարդկանց քիչ գործ լինելով: Այսինքն, ամեն դեպքում կինը տղամարդու կնոջ մասին ունեցած խտրական պատկերացումներով սահմանափակվում ու օտարվում է հասարակական ու ինչու չէ նաև անձնական, ընտանեկան կյանքից:

Հարցի շուրջ մեկնաբանություններում փորձագիտները կարևորում են ավանդականի արդիականացման, դրանցում ստորադասման բաղկացուցիչների բացառման անհրաժեշտությունը: Գլոբալիզացիայի հետ եկած հնարավորությունները (համացանց, ճանապարհորդություններ, տեղեկատվության տարածում և այլն) նոր ավանդույթներ տեսնելը, սահմանափակ ռեսուրսներից դուրս գալը, այլ մշակույթների կրող մարդկանց հասարակության մեջ ընդունելը գիտակցության նոր մակարդակի (21-րդ դարին համընթաց) ձևավորման գրավական են համարում, որը անպայման կրերի դիմացինի հանդեպ ավելի տուլերանտ միջավայրի:

Տղամարդ 27տ.՝ *«Կնոջ ու տղամարդու դավաճանությունը չի կարող նույն կերպ ընկալվել: Հայաստանում դեռ չի եկել էն պահը, երբ հասարակական կարծիք ասվածը կանայք ձևավորեն ու դա երբեք էլ չի լինի, որովհետև մեր երկրում տղամարդիկ չեն զիճի իրենց դիրքերը»:*

Կին 57տ.՝ *«Էստեղ չափի ու սահմանի խնդիր եմ տեսնում, որ մարզերում ավելի ցցուն են արտահայտված ու կոնֆլիկտների առիթ են: Ու չնայած հիմա կանայք շատ են աշխատաշուկայում, բայց դրանից զատ իրենց տան գործն ու երեխաների դաստիարակությանն են հետևում: Ստացվում է որ կինը կրկնակի, եռակի է ծանրաբեռնված»:*

Երեխաների դաստիարակության մեջ բարձր, բարոյական արժեքների դաստիարակության արդիականության մասին հարցը իդեալական կնոջ ու տղամարդու որակների տրամաբանական շարունակությունն է: Սակայն մի փքր շեղում կա դեպի ավանդական նորմատիվների դաստիարակությունը մասնավորապես նույն պրոգրեսիվ ու համամարդկային արժեքներ առանձնացնող երիասարդ կանանց ու տղամարդկանց շրջանում կրկին անգամ շեշտելով, որ ազգային պատկանելությունը առանցքային չէ: Համապատասխանաբար տղային ու աղջկան դաստիարակվող որակների շարքը նույն

մարդու մոտ բովանդակային առումով գրեթե կրկնում են իդեալական տղամարդուն և կնոջը վերագրվող որակները: Համամարդկային բարության, մեծահոգության, ազնվության, սեփական փորձով օրինակ լինելու, կարգապահ, ընկերասիրության և այլ նման որակների կողքին տղային և աղջկան հատուկ ավանդական որակների հակադրությունում ավելանում են նպատակասլաց-զուսպ, վերլուծական միտք-կշռադատվածություն, պատասխանատու-հոգատար բովանդակային տարբերակումները:

Ավագ սերնդի թե կանայք և թե տղամարդիկ բովանդակային առումով (այլ բառեր էին օգտագործում որակը ներկայացնելիս) միանշանակ կրկնում էին իդեալական որակների ցանկը: 35-ից բարձր ներկայացուցիչները վերոհիշյալ որակների դաստիարակությունը կարևորում էին անկախ ենթադրվող դժվարություններից: Պահպանողական մոտեցումը դաստիարակության մեջ առավել արտահայտիչ է աղջիկներին դաստիարակվող որակների շարքն ուսումնասիրելիս: Երիտասարդ կանայք ու տղամարդիկ առանձնացնելով նշված որակների կարևորությունը ավելացնում էին, որ դարանց զուգահեռ երեխային (թե տղա թե աղջիկ) պետք է ճկունություն սովորեցնել, որ կարողանա կյանքում կողմնորոշվել:

Տղամարդ 46տ.՝ *«Կախված նրանից թե ինչ ենք հասկանում համեստություն ասելով, եթե աղջիկը պիտի գլուխը կախի տղայի հետ խոսելիս ապա ոչ, բայց եթե ի նկատի ունենք զրուցակցին համեստորեն լսելը, կարծիք ունենա, բայց չպարտադրի ապա այո: Տղամարդն էլ կարող է համեստ լինել, ավելի շատ կասեի քաղաքակիրթ լինեն երկուսն էլ: Ստերեոտիպային գաղափարները իհարկե խանգարող են, ու հասարակություններն էդպես չեն զարգանում: Համեստությունը լավ բան է, բայց սոված է պահում»:*

Կին 49տ.՝ *«Էս որակները չեն կարող խանգարել ու արդիական են + ճկունություն իրավիճակում կողմնորոշվելու համար: Ազնվությունն ու հավատարմությունն էլ ցանկացած հարաբերություններում անկախ սեռից, ամեն մարդի առաջին ինքն իր հանդեպ պետք է ազնիվ ու հավատարիմ լինի: Իսկ համեստությունը եթե էնքան է, որ պիտի շահագործեն ու քո սահմանները խախտեն, ապա միանշանակ խանգարելու է:*

Ամեն ինչ չափի մեջ պետք է լինի: Շատերն ասում են, որ հիմա պետք է միայն սեփական շահերով առաջնորդվել, բայց կարծում եմ դա ժամանակավոր մի բան է, ու էդ տարբերակում մարդ տեսակն է կորում»:

Տղամարդ 36տ.՝ «Մարդկ կարող է կրի էդ որակները, բայց ունենա ավելի լայն մտահորիզոն ու պարտադիր չէ ապտակի դեպքում մյուս թուշն էլ դեմ տալ, այլ ուրիշ լուծում գտնելի էդ հարցին: Ծնողների դերը հենց էդ լուծումները գտնելու ունակությունը սովորեցնելու մեջ է»:

Կին 57տ.՝ «Ազգիկներին էլ համապատասխան որակներ է պետք սերմանել, լիդեր դարձնել, բայց ոչ տղաներին հավասար լիդեր: Որ աղջիկները լիդեր լինեն աղջիկների մեջ այլ ոչ տղաների մեջ: Կան իհարկե աղջիկներ, որ բնությունից ավելի խելացի ու ակտիվ են տղաներից, բայց սրանք եզակի դեպքեր են: Հիմնականում առաջնորդային որակները տղաների համար եմ կարևորում, որովհետև մեր երկիրն այսօր շատ խնդիրներ ունի սկսած պատերազմական իրավիճակից վերջացրած կենցաղային խնդիրներով: Դրա համար պետք է, որ տղաները հեռատես ու մտքով ձկուն լինեն: Աղջիկներին էլ է դա կարևոր, կյանքն անկանխատեսելի է ու պետք է պատրաստ լինել ցանկացած անակնկալի, բայց դա պիտի չափավոր լինի»:

Տղամարդ 21տ.՝ «Հայաստանում կարող են խանգարող լինել միանշանակ: Որովհետև մեր երկրում հանրությունը շատ տարբեր է: 10 քյառթի կողքին մենք ունենք 5 զարգացած մարդ, դրա համար էլ էդպես է, սրանք կարող են ձնշել կարևոր դրական որակները որ իրականում շատ անհրաժեշտ է որ երկու սեռի երեխաների մեջ էլ դաստիարակվեն: Եվրոպայում ընդհակառակը՝ էդ որակը փոքրամասնություն է կազմում: Խնդիրները երևի հավասար են տղայի և աղջկա դեպքում: Օրինակ քյառթուների հետ կարևոր որակներով դաստիարակված տղան կարող է խնդիրներ ունենալ տեսակը պաշտպանելու մակարդակում: Աղջիկները նույնպես, եթե մեկը մի փոքր պահպանողական լինի կարող է մյուս աղջիկների կողմից ծաղրի ենթարկվել»:

Փորձագետ՝ «Անշուշտ ուրախ եմ փոփոխությունների համար, համոզված եմ դա նաև լեզվամտածողության վրա է ազդում: Սոցիալական նորմը մի բան է որին մարդիկ ենթարկվում են, որովհետև դրան չենթարկվելու պատիժը հասարակությունից մերժված, օտարված լինելն է,

սիրված չլինելը, աղջիկ չամուսնացնելը: Մինչև էն պահը, քանի դեռ էդ ավանդույթը էնքան խիստ չի որ դրան չենթարկվելու համար մարդ չի պատժվում, դա կարող է լինել, բայց եթե ինչ-որ մեկը պիտի պատժվի դրան չհետևելու համար էդ ավանդույթն արդեն հասարակական խնդիր է: Ինձ թվում է հին ավանդույթների նորով փոխարինվելու ընթացքը անխուսափելի է: Շարժում սկսողները միշտ շատ բան են գոհարերում, քննադատվում են ոչ միայն համընդհանուրի կողմից, այլև իրենց հետևորդների կողմից, ծայրահեղական են ընկալվում: Բայց մյուս կողմից լուրջ փոփոխությունների հասնելու այլ տարբերակ չկա քան որոշ ՀԿ-ների կողմից աղաղակող դեպքերի շուրջ հանրության ուշադրության գրավումը: Քաղաքական դաշտում էս փոփոխությունը շատ ավելի դանդաղ է ընթանում: Ցավում եմ ու ամաչում, որ միջազգային կառույցների ճնշման շնորհիվ է, որ մենք բռնության հանդեպ օրենք ենք հանում: Բայց անգամ էդ միջազգային կառույցները բարձրաձայնում է խտրականության ձևերից միայն բռնության մասին ու մարդիկ տարվում են էս խնդրով, մինչդեռ ավելի կարևոր ու «վերինից» խնդիրներ կան լուծելու: Վերջերս մեր արդարադատության նախարարը կոնֆերանսի էր մասնակցում ու ըստ էության կրկնեց տղամարդու կողմից կնոջն ուղղված խոսքը՝ «լավ սովորեք, ձգտեք, կդառնաք», բայց իրականում էդպես չէ: Կինը պետք չունի ավելի աշխատելու քան տղամարդը: Դրա համար կարծում եմ մենք քաղաքականությանը չենք հասնում, որովհետև էս դաշտը չգիտեմ դիտմամբ թե միամիտ մեզ զբաղեցնում է բռնության խնդրով, իսկ ավելի լուրջ հարցերով զբաղվում են տղամարդիկ: Տնտեսությունը համարում եմ մի համակարգ է որ միայն եկամուտով է առաջնորդվում: Եթե Քիմ Բարդաշյանի լողազգեստը հանրությանը մատչելի դարձնելն է, ապա ավանդապաշտ հայ աղջիկները կհաքնեն էդ լողազգեստը: Առաջ ասում էին ավանդույթը գորեղ է, բայց ոչ կապիտալն է գորեղ՝ նոր ավանդույթ է ստեղծում»:

Հարցվող կանանց բոլոր տարիքային խմբերը իրենց քաղաքականությունից հեռու են համարում: Հավաստացած են, որ հայաստանյան քաղաքականության պես իշխանական ու հզոր դաշտում սովորական մարդիկ անզոր, տկար են ցանկացած փոփոխություն իրականացնելու: Նշում են որ մեր երկրում անկախ սեռից քաղաքացու կարծիքը արժեզրկված է: Քաղաքացին ինքը չունի իրավագիտակցության էն աստիճանը որը նրան թույլ չէր տա ընտրակաշառք վերցնել, հետևաբար նաև նույն քաղաքացին չի կարող պահանջատեր լինել: Բոլոր տարիքային խմբերի տղամարդիկ և կանայք միանշանակ համոզված են, որ լուրջ քաղաքական փոփոխություններ մեր երկրում կարող է անել միայն տղամարդը կամ տղամարդկանց խումբը: Կամ դա հնարավոր կլինի

երիտասարդ սերնդի համար (կրկին միայն արական սեռի), որը չունի էն վախերն ու մտահոգությունները ինչ ավագ սերունդը: Թե կանայք, թե տղամարդիկ համարում են որ կանայք այսօր զուտ ֆորմալ են ներկայացված դաշտում, լսված չեն: Անգամ նախարար լինելով չունեն ազատության էն մակարդակը որ միանձնյա որոշումներ կայացնեն առանց դաշտի լիդեր տղամարդկանց իր արած քայլերի մասին կարծիքը հաշվի առնելու, կամ նրանց հավանությանն արժանանալու հավակնության: Միայն մի 50-նն անց կին առանձնացրեց Հեղինե Բիշարյքն որպես կին քաղաքական գործչի, սակայն չկարողացավ հիմնավորել իր ընտրությունը: Ինտուիտիվ մակարդակով ավելի շատ միտված են վստահելու տղամարդ և ոչ կին քաղաքական գործիչների, որովհետև տղամարդիկ ավելի փորձառու են էս ոլորտում: Տղամարդ քաղաքական գործիչներից կանայք առանձնացնում են Կարեն Կարապետյանին ու Նիկոլ Փաշինյանին զուգահեռաբար նշելով, որ միևնույնն է նրանց նկատմամբ էլ չկա լիարժեք վստահություն: Կանայք գտնում են, որ երիտասարդ սերունդը՝ թե կին, թե տղամարդ, ավելի ակտիվ են քաղաքական գործընթացներին մասնակցություն ցուցաբերում, քան ավագ սերունդը, որտեղ հիմնականում մեծ տղամարդիկ են ակտիվ:

Տղամարդկանց խումբը առանձնանում է հարցի շուրջ ավելի հստակ պատկերացումներ ունենալով ու դաշտի լիդեր հանդիսացող անձանց գործունեության մասին համեմատականորեն խորքաին գիտելիքի իմացությամբ: Հահամոզված են, որ սովորական կինն ու տղամարդը կարող են որոշիչ ազդեցություն ունենալ քաղաքական գործընթացներին, համապատասխան միջոցառումներում ցուցաբերած մասնակցությամբ կամ չմասնակցությամբ: Երիտասարդները զարմանալիորեն հեռու են քաղաքականությունից՝ չեն հետևում ոչ տղամարդ, ոչ կին քաղաքական գործիչների գործունեությանը, չեն հավատում սովորական քաղաքացու քաղաքական գործընթացների մեջ դերի կարևորությանը, քանի որ արդեն իսկ կա ձևավորված վերաբերմունք, որ մեր երկրում դիկտատորական ռեժիմ է: Թերևս անգամ երիտասարդ ու քաղաքականությունից իրենց հեռու համարող տղամարդիկ գտնում են, որ քաղաքական գործընթացների վրա ազդեցություն ունենալու հավանականությունը տղամարդկանցն է. օրինակ՝ ընտրակաշառք վերցնել չվերցնելով, կամ իրենց

հեղինակությամբ շրջապատի վրա ունեցած ներգործությամբ: Որոշ կին քաղաքական գործիչների կերպարները նույնականացվում էին տղամարդ քաղաքական գործիչների հետ, ընդգծելով՝ ժամանակին հատուկ, ուղրտում եղած առանձնահատկությունը, քաղաքականության մասկուլին ու փակ համակարգ լինելը: Տղամարդիկ կանանցից առանձնանում են կին քաղաքական գործիչների գործունեությունների մեջ որակական տարբերություններ տեսնելով:

Տղամարդ 46տ.՝ *«Կինը զսպող ուժ կարող է լինել՝ ինչպես Ջարուհի Փոստանջյանը, ափսոս որ այլևս պառլամենտում չէ, կամ Ելենա Նազարյանը: Թե չէ՝ Մարգարիտ Եսայանը նույնն է ինչ Շմայսը, տարբերություն չեմ տեսնում եթե երկուսն էլ նույն կերպ են մտածում»:*

Կանանց շատ ներգրավվածությունը քաղաքական դաշտում տղամարդկանց կողմից կարևորվում է նաև պատերազմներից խուսափելու հեռահար հայացքներից ելնելով: Շեշտում են, որ միայն տղամարդու որոշումներով միշտ պատերազմներ կլինեն, հասարակությունն էլ կդառնա դեգրադացված, ստրկամիտ ու էլի մի շարք բացասական բաներ:

Տղամարդ 24տ.՝ *«Ինձ թվում է, որ Հայաստանում դա անհնար է, որովհետև բոլորըն ավելի շատ վստահում են տղամարդու խոսքին: Թեկուզ 100 տարի անցնի, մեր երկրում տղամարդու խոսքն ավելի մեծ դեր է ունենալու քան կնոջինը: Կին քաղաքական գործիչներից ոչ մեկին չեմ ճանաչում: Տղամարդկ քաղաքական գործիչներից էլ չկան համապատասխան արժեքներ ունեցող մարդիկ ում կառանձնացնեի»:*

Կին 35տ.՝ *«Ըստ օրենքի ենթադրվում է որ պիտի կարողանան, բայց մարդիկ հիասթափված են: Սովորական ժողովուրդը ոչինչ չի կարող անել մանավանդ կինը, քաղաքական գործիչներին էլ չեմ ճանաչում թե կին թե տղամարդ: Երբեմն կարծում եմ, որ մեր կառավարությանը կառավարող մեկ այլ ուժ կա, որ թույլ չի տալիս սեփական ժողովրդի համար ինչ-որ բան անեն»:*

Հայաստանում ազնիվ կառավարման հավանականության վերաբերյալ հարցի շուրջ կանանց ու տղամարդկանց պատասխանները միանշանակ հուսադրող չէին երկիրը կառավարող մարդկանցից արդարության, բաց, թափանցիկ,

քաղաքականությունն ակնկալելու անիրական լինելու տեսանկյունից: Թվարկվում են համընդհանուր սոցիալական բնույթի խնդիրներ որ գնալով խորանում են ու լուծում չեն ստանում: Ցավոք միայն մի տղամարդ է հարցին դրական պատասխան է տվել: Մնացածը հուսահատորեն խոստովանում է իրավիճակի, արդեն բավական երկար ժամանակ, անելանելի լինելու փաստը, ընդգծելով մարդկանց կարծիքը կարևորելու նախընտրական (կանխատեսելի) շահադիտական վերաբերմունքը: Հերթական անգամ շեշտվեց դիկտատորական կառավարման, ժողովրդավարական տեսանկյունից, ոչ հեռանկարային լինելու փաստը: Կանանց խնդիրների դիտարկումը միանշանակ ավելի անիրական է բոլոր հարցվողների կարծիքով, քան տղամարդկանց, որովհետև տղամարդիկ ըստ ավանդական պարտկերացումների ընտանիքի բարորությունն ապահովողներն են համարվում: Այսօրվա վարչապետի մարդկանց նկատմամբ ցուցաբերած ուշադրությունը մարքեթինգային հաշվարկ է որակավորվում կամ մեծահոգություն, բայց ոչ պետական դիրքորոշում: Իրավիճակը շտկելու հնարավորություն է համարվում հեղափոխությունը: Կապ ստեղծելով վերոհիշյալ իդեալական տղամարդկային որակների հետ շեշտվում է, որ հենց կառավարական մակարդակներից սկսված են տեսնում կոնջն ու տղամարդուն հատուկ իդեալականից շեղված, հեռու որակների դրսևորում:

Տղամարդ 44տ.՝ *«Կանանց խնդիրները ավելի քիչ են դիտարկվում ու դա պարզ երևում է թեկուզ նրանով, որ պառլամենտում 4-ից մեկը պիտի կին լինի և ոչ 1 կին 1 տղամարդ: Դա մեր ազգաին մենթալիտետից է գալիս»:*

Կին 42տ.՝ *«Ոչ իհարկե, որովհետև մենք ապրում ենք տնտեսապես ցածր մակարդակով երկրում, որտեղ ամեն ինչ գումար ունեցողն է որոշում, իսկ մեր դեպքում դրանք նաև ցածր բարոյական արժեքների տեր մարդիկ են: Հետևաբար, եթե քաղաքականությունը կախված է այդ մարդկանցից, ապա ցանկացած փոփոխություն, ի սկզբանե, չեմ կարող դեպի լավը համարել»:*

Տղամարդ 21տ.՝ *«Իհարկե ոչ, բայց ուշադրություն դարձնելիս էլ միանշանակ տղամարդկանց կարիքներին են դիտարկվում: Տրամաբանությունը հետևյալն է՝ տղամարդ-կին ապրում են մեկ ընտանիքում, քննարկում են որ իրենց ինչ-որ բան է պետք, հետո հավաքվում են տղամարդիկ ու խոսում ընտանիքի անունից, ու քանի որ*

տղամարդու ձայնն ավելի շատ է անցնում, դրա համար տղամարդն է էդ գործով զբաղված: Չգիտեմ ինչը կարող է շտկել, երևի հեղափոխություն է պետք»:

Կին 52տ.՝ «Մեր երկրում ազնիվ կառավարում գոյություն չունի արդեն շատ վաղուց և վերջին ընտրությունները դրա հերթական ապացույցն էին: Անտեսված են բոլորի կարիքներն ու խնդիրները անկախ սեռից: Եթե չեն ապահովվում համապատասխան կենցաղային պայմաններ, չեն ստեղծվում աշխատատեղեր, չեն բարելավվում մարդկանց ապրելակերպը: Մեր ղեկավարները ռեստորաններից ու խաղատներից հոգնած երևի ժամանակ չունի էս ամբողջի մասին մտածելու»:

Կանայք հավատացած են, որ թեև մեր երկրում գոյություն ունի համապատասխան իրավական դաշտ, որ կարծես հավասար հնարավորություններ է ստեղծում կնոջ ու տղամարդու համար: Սակայն փաստում են, որ իրական կյանքում հնարավորությունները նույնքան հավասար չեն որքան օրենքը ու դրա համար մի շարք խոչընդոտներ են առաջանում: Գտնում են, որ սովորական տղամարդու համար ևս կարող են խնդիրներ առաջանալ, սակայն դրանք լուծելի են տղամարդկային սովորարության, խնամի-ծանոթ-բարեկամի կամ կաշառքի միջոցով, որ պակաս արդիական են կանանց դեպքում: Կանանց համար գործունեություն ծավալելու իրական հնարավորությունները պակասում են մենաշնորհի, հովանավոր չունենալու, ծառայություններ մատուցելու դաշտով (հիմնականում գեղեցկության ինդուստրիայում որտեղ ծառայություններ են մատուցում կրկին կանանց համար): Նաև հասարակության մեջ կնոջն ու տղամարդուն վերագրվող հատուկ գենդերային նորմերի սահմաններում պատկերացումները և այլն:

Տղամարդկանց կողմից հարցն ավելի լայն ու դրական է մեկնաբանվում ի տարբերություն կանանց: Տնտեսական գործընթացներ ասելով հասկանում են գործունեության շատ ավելի լայն սպեկտր քան միայն բիզնեսի հիմնումը (խանութում ապրանքների որակի ու զնի նորմատիվներից շեղման բարձրաձայնում, աշխատաշուկայում ներգրավված լինելը, որոշակի ապրանքատեսակից հրաժարում և այլն): Այնուամենայնիվ ընդգծվում է հարցի շուրջ քաղաքական գործոնի, ազգային ավանդական մենթալիտետի դերը: Նաև գլոբալ իմաստով կենսաբանական

դետերմինիզմով հիմնավորված տղամարդու դոմինանտ դիրքն ու լայն հնարավորությունները, կնոջ աջակցող, խնամադր, ոգեշնչող լինելը:

Տղամարդ 50տ.՝ «Օրինակ՝ գիտեմ որ էսինչ մթերքը չնայած գեղեցիկ փաթեթավորման վնասակար է, կամ չեմ հետևում ապրանքների վրա նշված ժամկետի ցուցիչներին: Տեսնելու դեպքում էլ չեմ գնի, բայց նաև ձայն չեմ հանում և գիտեմ, որ դա սխալ է: Բարձրաձայնելու, չգնելու դեպքում բնականաբար կազդեն համապատասխան ապրանքի շուկայում ներկայացվածության ծավալներին, լինելու փաստին: Կարծում եմ կանանց համար ավելի հեշտ է բարձրաձայնել, բողոքել»:

Տղամարդ 20տ.՝ «Կարող է իհարկե: Օրինակ տրանսպորտի թանկացման դեպքը, շատ շատերը, թե կին, թե տղամարդ դեմ կանցնեցին ու էդպիսով ազդեցին որոշման փոփոխությանը: Ու դա երկու սեռի ձեռքբերումն է: Բայց հիմնականում ավելի շատ տղամարդիկ էին ակտիվ, որովհետև բնությունից արական սեռն ավելի պայքարող է: Կանայք խիզախ են, կարող են դրդել տղամարդուն պայքարի»:

Կին 35տ.՝ «Կարող է իհարկե, բայց մեկ այլ բան է, թե որքանով սովորական կոնջըր կամ սովորական տղամարդուն թույլ կտան նախաձեռնությունն ի կատար ածել կամ հաջողակ տարբերակով զարգանալ: Օրինակ կինը կարող է իր նախաձեռնությամբ փոխել շուկայում մտածելակերպի փոփոխությանը և գնի, և որակի վերաբերյալ, աշխատատեղեր բացել, բայց մեր երկրում չեն թողնում մարդիկ իրենց աշխատանքի արդյունքները ստանան: Ու որովհետև մեր երկրում կա մտածելակերպը, որ կանայք թույլ են, տղամարդիկ ուժեղ, համապատասխանաբար տղամարդիկ ավելի պաշտպանված են ու ավելի մեծ շանսեր ունեն, քան կանայք: Մեր մոտ ամեն ինչ հեղինակություններն են որոշում, հարցեր լուծում, կինն էլ դժվար թե նման որակի մարդկանց հետ գնա բանակցության: Նույնիսկ պաշտոնյաների հետ հարցեր լուծելիս գործ ունենք նույն հեղինակության որակի մի ներկայացուցչի հետ, որը քիչ թե շատ իրեն գուսպ է պահում: Հիմնականում նախաձեռնությամբ հասունացած կանայք բարձր ինտելեկտի տեր մարդիկ են, որոնք տարբերվում են սկզբունքներով ու նրանց դժվար է գոյատևել նման շուկայում: Մակայն իրականության մեջ շատ տարբեր են կնոջ ու տղամարդու բանակցային լեզուները»:

Իրերի հաստատված կարգի փոփոխությանը վերաբերվող հարցին տղամարդկանց կարծիքները կրկին շատ բազմազան ու հարցին բազմակողմանի մոտեցում են ցուցաբերում՝ անձնականից մինչև կառավարական մակարդակներ: Հիմնականում գտնում են, որ նման փոփոխություններն անհնար են, իսկ նման բան լինելու դեպքում էլ տղամարդու ձեռքով իրականացվելու հավանականությունն ավելի մեծ է: Մի մասն էլ գտնում է, որ նույն գլոբալիզացիայի արդյունքում նոր գաղափարների յուրայնացումը, լոկալացումը, թեև քիչ, բայց հավանական է դարձնում կնոջ նորմատիվային արժեհամակարգի փոփոխության հնարավորությունը, որ կարելի է որոշակի առաջընթաց համարել:

Կանայք գտնում են որ սովորական մարդիկ, մասնավորապես կանայք, թույլ ու անկարող են, վախենում են օրենքից ու դրան դեմ գնալու հետևանքներից: Կնոջ կողմից նորմերի ու արժեքների փոփոխության հնարավորությունը տղամարդու հետ միասնական գործողությունների արդյունքում են տեսնում:

Փորձագետները համոզված են, որ ցանկացած փոփոխության հիմքում այսօր միայն տղամարդը կարող է կանգնած լինել, որովհետև նրանց խոսքն ընդունվում է օրենսդիր մակարդակից մինև ընտանեկանը: Փոփոխությունները սակայն չեն արվում իշխանություն ունեցողների կողմից, որովհետև դա ըստ էության տղամարդու գերիշխանության կորուստ է համարվում ու հարցի գենդերային իրավահավասարության դիտարկման տեսանկյունից կնոջ ավանդական դերերից դուրս գալու երևույթը իշխանություն ունեցող տղամարդու կողմից բացասական է:

Կին 40տ.՝ *«Գլոբալ առումով դժվար էմ պատկերացնում, բայց ինչ-որ մանր քայլերում կարծում եմ հնարավոր է: Օրինակ կարող է լինել դպրոց որ դեկավարվի կնոջ կամ տղամարդու կողմից, որը նոր հայացքներ է ներմուծում կրթական գործընթացում: Բայց դա չի կարող ընդհանրացվել, այսինքն միայն իր գործունեության դաշտում միայն: Դա նրանից չէ որ կինը կամ տղամարդը չի ուզում, այլ նաև նրանից որ դիմացնինները չեն ուզում, պատրաստ չեն վերցնելու: Չվերցնելու համար էլ տարբեր պատճառներ կարող են լինել՝ ընդունված նորմերը փոխելու վախը, դրանք փոխելու համար ոչ հասուն*

լինելը, որ իրերի նման դրվածքը ուղղակի հարմար է, մարդիկ սովորել են, իսկ փոփոխությունները աշխատանք են ենթադրում»:

Տղամարդ 36տ.՝ «Բարդ կյինի, որովհետև իշխողը, որ հիմա տղամարդն է, չի ցանկանում զիճել դիրքերը: Բայց լավ հիմնավորված, մտածված, ուժեղ դիրքորոշումը, որ հնարավոր չի հերքել, շատ բան կարող է փոխել : Մարդու բնավորությունից է շատ բան գալիս»:

Փորձագետ՝ «Կանայք ավելի ճկուն են ու ունակ են փոխվելու, բայց քանի մեր տղամարդիկ չեն ուզում փոխվել կանայք էդքան ուժ չունեն հանրային մակարդակում: Մենք աղջիկներին դաստիարակելիս ասում ենք ուժեղ եղիր, պինդ կաց, այսինքն տղայի պես պահի իրեն, բայց տղային չենք սովորեցնում աղջկա պես պահի իրեն: Սա նշանակում է տղամարդու վերաբերմունքը ու խաղի տղամարդկային օրենքներով խաղալը գերադասվում է, ու սրա փոփոխությունն է որ պիտի ձեռքբերում համարվի: Փոփոխության ձև է նաև ասենք եթե բոլոր կանայք սկսեն այլ կերպ մտածել, ակամայից տղամարդիկ այլընտրանք չեն ունենա քան իրենք էլ փոխվեն»:

Առողջական, կենցաղային, իրավական խնդիրներ ունենալու դեպքում կանայք համարում են որ թե կինը թե տղամարդը նույնքան անպաշտպան են եթե կողքին չունեն իրենց օգնող որևէ մեկին կամ գիտելիքների բազա, որ կօգնի արագ կողմնորոշվել: Հիմնականում կարող են ապավինել իրենց բարեկամներին ու ընկերներին, բայց նշվում է նաև որ ընկերներին դիմելն ավելի տղամարդկանց է հատուկ քան կանանց:

Տղամարդիկ թեև ընդգծում են իրավիճակների բազմազան լինելու դեպքում երկու սեռի համար հավանական դժվարություններն ու անպաշտպանվածությունը, սակայն ավելացնում են, որ տղամարդը մեր հասարակությունում ծագած հարցերին լուծում տալու արտոնյալ հնարավորություններ ունի՝ պայմանավորված սեռային պատկանելությամբ:

Փորձագետները միտված են խնդիրների բնույթի հստակեցման, որովհետև սա ենթադրում է որոշակի գիտելիքների, հմտությունների ու կարողությունների բազա, որ կարող է տարբեր լինել ամեն խնդրի դեպքում ու հետևաբար այս կամ այն սեռին ավելի խոցելի դարձնել: Մասնավորապես բժշկական ոլորտում ծագած խնդիրները դեպքում

ավելի հավանական են համարում կանանց համապատասխան գիտելիքների շնորհիվ ճիշտ կողմնորոշումը, իրավաբանականի դեպքում՝ տղամարդկանց, որովհետև կրթական համակարգով ու գենդերային նորմատիվների ազգային պատկերացումով այս բաժանումն է մտցվում վաղ տարիքից: Այնուամենայնիվ շեշտվում են, որ մեր երկրում չկան համապատասխան կառույցներ, որ կհոգան խոցելի խմբերի առողջապահական, իրավաբանական, կենցաղային խնդիրները:

Տղամարդ 49տ.՝ *«Թե կինը թե տղամարդը եթե լավ ընկերներ ունի ապա ընկերներին, բայց դա հիմնականում տղամարդուն է հատուկ ընկերներին դիմելը: Իսկ կինը ավելի շատ ինքն իր վրա պիտի հույսը դնի, որովհետև շատ խափուսիկ է կնոջ ընկերությունը»:*

Տղամարդ 46տ.՝ *«Կենցաղային խնդիրների դեպքում կարծում են երկուսն էլ հավասար են ու դիմելու դեպքում երևի դատարանն է: Տղամարդը մի փոքր այլ է լուծում ընտանիքում առաջացած կենցաղային խնդիրները: Դատական համակարգը հեռու է իդեալական կոչվելուց: Կանայք ավելի շատ կարծում են կիսուսափեն իրավապահ մարմինների հետ գործ ունենալուց ու կդիմեն ընտանիքի անդամներին: Սա էլ է մեր մենթալիտետով պայմանավորված նաև իհարկե դատական համակարգի ոչ էֆեկտիվ լինելուց: Տղամարդն էլ ավելի միտված է շրջապատի միջոցով հարցեր լուծելու»:*

Կին 62տ.՝ *«Աստծուն. . . , Շրջապատում լսում եմ մարդիկ առողջական խնդիրները լուծում են գումարների միջոցով, բայց դա գրավական չէ, որ արդարացի կվարվեն, կամ խնդիրը լիարժեք կլուծվի: Մարդիկ պաշտպանված չեն անգամ նման զգայուն հարցերում: Քիչ չեն մախինացիաները ու եթե մարդը չունի համապատասխան կրթություն, կամ մեկը ով կպաշտպանի նրան, ապա բացիթողի վիճակ է: Հատկապես եթե չունենան համապատասխան խնայողություններ: Անգամ պետպատվերը կաշառքով են տալիս մարդկանց, այսինքն նաև նրանց ովքեր պակաս դրա կարիքն ունեն: Բնականաբար տարբեր են իրավունքների համար պայքարող կանանց ու տղամարդկանց շանսերը: Կանանց շանսերը քիչ են, դա երևի մեր հոգեբանությունից է գալիս, չգիտեմ ինչու: Կանայք ավելի հետևողական են, պայքարող, պահանջող, բայց կնոջ իրավունքները հարգելը մեր մտածելակերպից դուրս է: Պարադոքսի առաջ ենք՝*

չնայած վերջին տարիներին կանայք շատ են խոսում իրավունքներից ու պայքարում դրանց համար, բայց իրականում կնոջից կրկնակի ջանքեր են պահանջվում արդյունք ստանալու համար»:

Միջին աշխատավարձի տղամարդկանց տված սահմանումները տատանվում են 100,000-400,000, կախված մասնավոր թե պետական ոլորտի մասին է խոսքը: Սա նաև վկայում է մարդկանց տարբեր ֆինանսական հնարավորությունների ու դրա հիման վրա գումար տնօրինելու սովորությունների մասին: Կարևոր է նշել, որ կանանց պատկերացրած միջին աշխատավարձի շեմը տատանվում է 100,000-150,000-ը, այս փաստը թույլ է տալիս նաև ենթադրել, որ աշխատաշուկայում կանաց ու տղամարդկանց աշխատավարձերը նույն համամասնությամբ են տարբերվում: Ամեն դեպքում տղամարդիկ համակարծիք են, որ միջին աշխատավարձը հազիվ է բավականեցնում կենցաղային հարցերի լուծման համար: Բարեկեցիկ կյանք ապահովելու համար այդ գումարն իրենց հազիվ է բավականեցնում, իսկ ընտանիքի պարագայում հնարավոր է միայն լրացուցիչ եկամուտ ունենալու դեպքում: Հակառակ սեռի մասին խոսելիս համոզմունք են արտահայտում, որ կանայք կարող են հաջողել, որովհետև ավելի մտածված են տնօրինում գումարը և տնտեսող են:

Կանայք ընդհանրաբանում են տված պատասխաններում՝ նշելով որ տղամարդու և կնոջ ավանդական դերի ընկալման տարբերակում տղամարդուն էմոցիոնալ առումով ավելի դժվար է քան կնոջը: Կարծրատիպից ելնելով տղամարդուն դժվար է համակերպվել միջին աշխատավարձով ենթադրվող դժվարություններին, կանայք ավելի տնտեսող լինելու, եղած գումարը տան վրա ծախսող լինելու հաշվին թեև ավելի մեծ դժվարություններով, բայց կարողանում են ընտանիքն ապահովել: Նշում են, որ միջին աշխատավարձը, մանավանդ եթե տանը 1 անձ է աշխատում, հազիվ է բավականեցնում կենցաղային կարիզների ծախսերին:

Տղամարդ 20տ.՝ «Մեր երկրում միջին աշխատավարձ են հաշվարկում 250,000 դրամը: Կան մարդիկ որ 1միլիոն են վաստակում և կան որ 50հազար, ու եթե միջինացնենք կարող է ստացվոլ 250հազար: Բայց մեկ միլիոն ստացողները շատ քիչ տոկոս են կազմում հասարակությունում իսկ 50հազար ստացողները մոտավորապես

60-70%: Եթե մարդը իսկապես ստանա 250000 ապա կարող է ապահովել, բայց դա բարեկեցիկ չէի անվանի, այլ ուղղակի գոյատևման խնդիրից մի քիչ բարձր, եթե իհարկե գնալով ամեն ինչ չթանկացնեն: Կնոջ համար ավելի հեշտ է էդ գումարով ընտանիքի հոգսերը հոգալ, քանի որ կանայք ավելի ճիշտ են գումար ծախսում, խնայող են: Տղամարդն ավելի շոտալ է ու վատնող»:

Կին 49տ.՝ «Ոչ դա ուղղակի ծիծաղելի է: Կնոջ համար կրկին ավելի դժվար է: Կնոջը անխոս կերպով մեռժում են աշխատանք փնտրելիս: Կան ոլորտներ, որտեղ կինը չի կարող ներս մտնել, կամ էլ հաջողության հասնել: Նույն բիզնեսի մեջ կան իհարկե հաջողության հասած կանայք, բայց նրանց ներդրած աշխատանքը կրկնակի անգամ շատ է տղամարդու արածից: Նույն միջին աշխատավարձ ունենալը կինը համարում է որ շահել է, իսկ տղամարդը որ դա քիչ է: Անգամ նույն կազմակերպությունում նույն հաստիքի դեպքում տարբերվում են կանանց ու տղամարդկանց աշխատավարձերը: Տղամարդկանց աշխատավարձը պիտի բարձր լինի որովհետև մեր մտածելակերպում էդպես է»:

Տղամարդ 40տ.՝ «Բարեկեցիկ ասվածը շատ բարձր է: Տղամարդու համար էս տեսանկյունից դժվար է, քանի որ նա է տան գլուխն ու պատասխանատվությունն իր ուսերին է»:

Կնոջ ու տղամարդու նպատակին օրինական ճանապարհով հասնելու մասին հարցի առաջին մասի վերաբերյալ կանայք ու տղամարդիկ տալիս են պայմանական պատասխան: Պայմանականությունը կապված է թափուր հաստիքի համար պահանջվող մասնագիտական ու անհատական յուրահատկություններից: Եթե մրցակցությունը գիտելիքների պաշարից գատ սեռերի միջև է, նախատվությունը տրվում է տղամարդուն, քանի որ գործատուն ստիպված չի լինելու վճարել նրա ծննդաբերության ու երեխայի խնամքի համար հատկացվող նպաստը: Եթե սպասարկման ոլորտն է նախընտրում են երիտասարդ ու գրավիչ աղջիկներին: Եթե բարձր որակավորման մասնագետների միջև է ընտրությունը՝ կինը 2 անգամ ավելի լավ մասնագետ պետք է լինի մրցակցությանը դիմակայելու համար, այլ տարբերակում ընտրվում է տղամարդը (գործում է ծանոթի, կաշառքի, բարեկամի գործոնը): Երիտասարդները ավելի հակված են

կարծելու ու չեն բացառում նպատակների նվաճման արդար ճանապարհը, զուտ գիտելիքների, կամ այլ արդար մրցակցային միջոցների շնորհիվ: Օրինախախտումների արդարացման տեսանկյունից եթեների շարքը կրճատվում է: Կանայք թեև ընդհանուր առմամբ, օերինախախտությունը չեն ընդունում, բայց արդարացնում են ինչ-որ մեկի կյանքը փրկելու համար արված լինելու դեպքում: Համոզված են, որ մեր իրականությունում ամեն օր օրենք է խախտվում ամենատարբեր հարթակներում ու առիթներով: Կանանց տեսանկյունից տղամարդիկ ավելի հեշտ են գնում օրինախախտության քան կանայք, ու որ տղամարդիկ միտված են միմիջանց հետ համագործակցել՝ շրջանցելով օրենքն ու կանանց: Որպես էդպիսին են ընունում տղամարդկանց ամենաթողությունը: Բոլոր հարցվողները գտնում են, որ նույն օրինազանցության համար կանայք ավելի շատ են ենթարկվում հանրային քննադատությանը քան տղամարդիկ: Օրինազանցության գործիքներն ու հնարքների ընտրության հարցում էլ են շատ տարբեր՝ կինը կարող է ինչ-որ մեկից աջակցություն խնդրել, իսկ տղամարդը կարող է պարզապես գողանալ, վերցնել ժամանակավոր օգտագործման, կամ իր ուզածը կստանա, որովհետև հարգված մեկն է:

Տղամարդիկ համաձայնում են, որ հայաստանյան իրականությունում կանանց հաջողության հասնելու հավանականությունը կա բայց ի համեմատ տղամարդկանց շատ բարդ է: Ասվածը հիմնավորվում է ընտանեկան, հանրային, օրենսդրական դաշտերում տղամարդու ունեցած հեղինակույամբ: Համաձայն են, որ ի տարբերություն կանանց, տարբեր առիթներով ավելի շատ են օրենք խախտում, թեև գիտակցում են նման քայլի արատավոր լինելը:

Փորձագետները ևս համոզված են տղամարդկանց առավել իրավախախտ լինելու փաստի մեջ, սակայն կարծում են որ չնայած եղած խոչընդոտների կնոջ համար էլ է հնարավոր հաջողության հասնելը, երկար ու հետևողական աշխատանքի արդյունքում: Փաստում են տղամարդկանց ավելի հզոր դիրքերում լինելը, կանանց քիչ ու զուսպ հնարավորությունը, սեռերի կողմից բարոյականության տարբեր ընկալումները: Դրա վառ օրինակն է՝ տղամարդու առանց միջնորդի հարցեր լուծելու կարողությունը, որը կնոջ դեպքում էդպես չէ: Կինը պիտի գտնի մի տղամարդ որ կմիջնորդի իր համար:

Փորձագետներն ընդգծում են, որ շատ տարբեր հարթություններում կանայք ուղղակի չեն ընդունվում, որովհետև եղպիսինն է մեզնում եղած կանանց նկատմամբ հանրային վերաբերմունքը:

Կին 29տ.՝ «Կինը կամ տղամարդը պիտի շատ լավ, ուժեղ մասնագետ լինեն, տարբեր քննություններ հանձնեն, կամ էլ մեր երկրում ընդունված է կաշառք տալն ու ծանոթ խառնելը, պետք է նման մի հնար գտնել: Կնոջ օրինախախտությունը, ասենք կաշառք տալը, ավելի աչք ծակող է, տղամարդկանց դեպքում ոչինչ նայվում է: Հայ կինը հազվագյուտ է նման քայլերի դիմում: Ընդհանրապես կարծում եմ մեր երկրում աշխատանքի ընդունելիս նախապատվությունը տղամարդկանց է տրվում: Թիկունք ունենալն էլ առաջ է տանում թե տղամարդուն, թե կնոջը: Կան իհարկե ոլորտներ որ տղամարդիկ են հիմնականում, օրինակ՝ զինված ուժերը, քաղաքականությունը, շինարարությունում, կարող է իհարկե կինը քաղաքականությամբ զբաղվել, բայց դա տղամարդու գործ է»:

Տղամարդ 36տ.՝ «Կարծում եմ այո, իսկ օրինախախտումն արդարացնում եմ սխալ գրված լինելու դեպքում: Իսկ որոշակի օրենքի մեծամաշտաբ խախտումները վկայում են նրա մասին, որ դա աշխատող օրենք չի: Եթե օրենսդրական դաշտում օրենքները որ պիտի ապահովեն մարդկանց բարեկեցիկ կյանքը ու չեն ապահովում, ապա այդ օրենքները սխալ են, իսկ եթե սխալ են, ապա իրավախախտումը չի կարելի քննադատել: Իրավախախտման մի օրինակ է ստվերային տնտեսությունների զարգանալը և դա կշարունակվի մինչև մարդ կարիք չունենա նման բան անելու: Հաջողության հասնելու ճանապարհները նույնը չեն կանանց ու տղամարդկանց համար և դա գալիս է հասարակության կնոջ և տղամարդու ավանդական դերերի ընկալումից»:

Տղամարդ 49տ.՝ «Կինն ավելի շատ պիտի ապավինի օրենքի ու ավելի շատ աշխատի: Տղամարդը՝ կազա մի պահ, որ կմտածի որ կարելի է գումարով հարցը լուծել, դրա համար արդեն տարբերություններ են առաջանում: Ոչ մի դեպքում չեմ արդարացնում օրենքի ծախսումները, միայն ինքնապաշտպանության դեպքում: Կանանց միանշանակ ավելի դժվար է առաջ գնալ առանց թիկունքի ու այլ միջոցների: Եթե մի ոլորտում լիի 1 կին և 3 տղամարդ, հաստատ կնոջը դուրս կմղեն, ու օրենքով չի

կարող պաշտպանվել, որովհետև այնպիսի բաներ կանեն, որ ավելի լավ կլինի լուռ հեռանա: Դրա ապացույցն է մեր երկրում մոնոպոլիաները, խլված բիզնեսները. . . Գլոբալ հաշվով սովորական տղամարդն էլ պաշտպանված չէ, որովհետև եթե կա մտադրություն որ էդ մարդուն հորիզոնից եռացնեն ապա կանեն, բայց իհարկե հիմնականում կանայք ավելի խոցելի են: Հարցեր լուծելու ձևերն այլ են կանանց մոտ: Էսքան ժամանակ զոհաված ազատամարտիկի հայրերին փողոցում քարշ չեն տվել, մայրերին. . . Սա մեր պղծված հասարակության մասին է խոսում»:

Փորձագետ՝ «Կարծում եմ հնարավոր է, ուղղակի բարոյական ասվածք շատ հարաբերական է: Իրավական դաշտում ունենք միջոց, բայց էդ միջոցի կիրառության ձևը շատ տարբեր է: Կանայք ավելի օրինապաշտ են, մեզ էդպես են մեծացնում, որովհետև նաև ենթարկվել են սովորեցնում: Բիզնես ունենալն էլ նշանակում է որ օրենքը անընդհատ պիտի խախտես: Ու բնականաբար տղամարդիկ ավելի շատ են օրենք խախտում համոզված են որ ամենակարող են: Փոքրուց ասում են որ տղաները մեծ գործերի համար են ծնվել, դե տղամարդիկ էլ ինչ կարող են էտ էլ անում են: Աղջիկները՝ խոնարհ, ժպտերես. . . «համեստ» ու տենց, դե արի ու էդ պարագայում օրենք խախտիր. . .»:

Հարցվող Տղամարդիկ ու կանայք հավատացած են որ աշխատանքի անցնելու նպատակով հավասարապես արդիական են թե այլընտրանքային, թե արդար ճանապարհները ու դրանց կիրառումը երկու սեռի դեպքում էլ առկա է: Մեկ այլ հարց է թե որքան հաճախ են կանայք կամ տղամարդիկ առանձին վերցրած դիմում այլընտրանքին: Ինչպես նաև ընդունում են աշխատաշուկայի սեռային բաժանման փաստը: Կանայք նշում են աշխատաշուկայում կանանց նկատմամբ կիրառվող խտրականությունների ավելի բազմաբնույթ շարք՝ ավելի ցածր աշխատավարձ, աելի երկար աշխատանքային գրաֆիկ, ցածր հաստիքների զբաղեցում, որոնց տղամարդիկ չեն համաձայնում, թեև կանայք ավելի արդյունավետ են ու հետևողական աշխատանքի մեջ: Ընդգծվում է աշխատաշուկայում միջազգային կրթությամբ մասնագետների առկայությունը, որն արհեստականորեն բարձրացնում է աշխատաշուկայում աշխատողի որակական պատրաստվածության սպասելիքների նշաձողը:

Կին 35տ.՝ «Ազդեցիկ թիկունքն ու մյուսները ցավոք սրտի կան, ու ցավոք սրտի դրանք գործում են ոչ պրոֆեսիոնալների քան պրոֆեսիոնալների դեպքում: Միջազգային կազմակերպություններում չկան խտրականություններ՝ թե կանայք, թե տղամարդիկ հավասար են իրենց հնարավորություններով, ու հետագայում էլ ստանա նորմալ աշխատավարձ, առանց որևէ մեկի երաշխավորության: Բայց պետական համակարգերում, միանշանակ ծանոթի, կամ կաշառքի գործոնը շատ աշխատող է, ու հարաբերակցության առումով 100-ից 3-4-ն են որ իրենց հմտությունների ու գիտելիքների շնորհիվ են աշխատանքի ընդունվել: Իսկ ոլորտների կանացի կամ տղամարդկային լինելը դեռ վաղուց էդպես է եղել ու դեռ շարունակվում է: Առողջապահությունը, կրթությունը, մեծամասամբ կանացի են համարվում, իրավաբանական, ռազմական ոլորտները, դատական համակարգը՝ տղամարդիկ են գերակշռում»:

Տղամարդ 24տ.՝ «Միանշանակ կարող են, բայց օրինակ աշխատանքի ընդունվելուց հետո էդ կոլեկտիվում պետք է մի հատ նշել, մարդկանց ինչ-որ տեղ հրավիրել, դա էլ է կաշառքի ձև: Հնարավորությունները հավասար են, բայց տղամարդիկ ավելի շատ են դիմում այլընտրանքային ճանապարհով նպատակին հասնելուն քան կանայք: Համոզված եմ եթե նման վիճակագրություն կազմվի տղամարդիկ անհամեմատ բարձր ցուցանիշներ կունենան էս հարցում: Միանշանակ կան ոլորտներ որ կանացի կամ արական են: Օրինակ խոհանոցում ինչ-որ օգնող աշխատանքներ, մուժքույրեր, հիմնականում կանայք օգնող աշխատանքներ են կատարում: Չգիտեմ ինչու է էդպես: Երևի տղամարդն ավելի շատ է գնահատում իր ինքնասիրությունը, դա կարող է հիմք լինել»:

Կանայք գտնում են, որ հեռահար պլանների մասին չմտածելն ու կենցաային հարցերին կենտրոնացած լինելը պայմանավորված է սոցիալ-տնտեսական գործոններով: Որ այս կամ այն կերպ ծնողները մտածում են իրենց երեխաների ապագայի համար, անգամ եթե էդպես են արտահայտվում ու չեն գիտակցում խնդիրը, որովհետև դա խորդ է մեր հոգեբանությանը: Հարցվող կանանց մեջ կա համոզմունք, որ

կանայք ավելի միտված են ապագայի մասին հոգալուն, քան տղամարդիկ, որովհետև վերջիններս ավելի հեշտ են հիասթափվում ու տարբեր տեսակի մոլուցքների տրվում:

Տղամարդիկ ևս համոզված են որ նման մոտեցում դրսևորելու պատճառները պետք է բացառապես տնտեսական գործոններում փնտրել: Սակայն ի տարբերություն կանանց, տղամարդկանց ու կանանց միջև որպես ապագայի մասին ավել կամ քիչ մտածող սեռային տարանջատում չեն տալիս: Սրանից կարելի է ենթադրել, որ կանայք իրենց հոգսերի մեջ իրենց մեկակ են տեսնում: Տղամարդիկ այս երևույթի հիմքում նաև տեսնում են հեռուստատեսությամբ պրոպագանդվող կենսակերպի ձևը:

Փորձագետները ապատիկ վիճակը մեկնաբանում են երկրի քաղաքական ու տնտեսական գործընթացներով: Գտնում են, որ վերոհիշյալը ՄՍՀՄ-ի ժամանակաշրջանում տարածված գաղափարախոսության մեջ ինքնուրույնության, սեփական վարքի, ապագայի համար պատասխանատվություն չսերմանելու արդյունքներն են: Շեշտում են գլոբալ իմաստով երկրի ապագայի մասին անտարբերությունը ու երեխայի ապագայի համար ծայրահեղ քայլերի պատրաստակամությունը:

Կին 60տ.՝ *«Մարդիկ հիմա հոգսաշատ են, դյուրագրգիռ, լարված: Մուղ պայմանների պատճառով բարեկամների իրար հետ շփումը քչացել է ու հետըզհետե հեռվանում, սառում իրարից: Առաջ մարդիկ վստահ էին վաղվա օրվան, վայելում էին կյանքը: Պետությունը քանդվել է, չկան աշխատատեղեր, մարդիկ հազիվ են ապրում, ստիպված լքում են երկիրը: Եթե վերականգնվեն աշխատատեղերը կարծում եմ նորից կվերադառնանք մեր հին կենսակերպին, արժեքներին»:*

Տղամարդ 64տ.՝ *«Մեր սերունդը միշտ հեռուն չտեսնելն ու վաղվա մասին չմտածելը բացասական է գնահատել, իսկ հիմա այսօրով ապրելը դրական բնորոշում է ստանում: Դա ուղղակի պրոպագանդ է որ հեռուստատեսությամբ մեզ է ուղղված ու ստանում է նաև երեխան և սա սարսափելի է»:*

Կին 52տ.՝ *«Այնքան դժվարացել է կյանքը, որ շատ դեպքերում մտածում ես «օրը գա բարին հետը», դա բնական է մեր պայմաններում: Մի կերպ մարդիկ իրենց երեխաներին ուսման են տալիս էդ տարբերակով են հոգում երեխայի ապագայի մասին,*

ու եթե շատ երեխաներ ունեն պարզ է որ տղային պիտի ուսման տան, վաղը տուն է պահելու: Բայց հիմնականում մարդիկ օրվա հացի հարց են լուծում»:

Փորձագետ՝ «Մա ավելի շատ ընդհանուր ապատիայի դրսևորում է: Այսօրվա օրով ապրելը կասեի վախեցած մարդու ռազմավարություն է, որը վախենում է ինչ-որ բան պլանավորել: Ու անկեղծ ասած չգիտեմ էդ վախերը տղամարդկանց թե կանանց մոտ է: Երևի բոլորի մոտ էլ կան ու տարբեր են էդ վախերը, միգուցե տղամարդկանց մոտ ավելի շատ լինի, որովհետև տղամարդկանցից ավելի շատ են սոցիալական դերերից բխող պահանջները՝ լինել հաջողակ, գումար վաստակել և այլն»:

Հարցվող թե կանայք, թե տղամարդկ համակարծիք են, որ այսօրվա հայաստանյան ծանր տնտեսական ու սոցիալական պայմաններում երեխա ունենալը շատ պատասխանատու է հատկապես տղամարդկանց համար, որովհետև ըստ մեր ավանդական պատկերացումների տղամարդը պիտի ապահովի ընտանիքը, տուն ստեղծի: Մշակութային առանձնահատկություններից ելնելով շեշտվում է երեխաների դաստիարակության հարցում խնդիրների գիտակցումը: Երիտասարդներն ամեն դեպում առանձնանում են լավատեսությամբ ու հույսով, որ երկրում դեպի դրական զարգացման տենդենց կլինի: Տնտեսական խնդիրները թե կանանց թե տղամարդկանց ավագ ու երիտասարդ սերնդի ներկայացուցիչների կողմից առաջնային է համարում նոր սերունդ ունենալու ցանկությունից հրաժարվելու հանգամանքում: Ավագ տարիքի կանանց մեջ կա նաև ավստասանք ու դառնություն երեխաների անշնորհակալ լինելու, ծնողներին լքելու առիթով: Խնդիրների բարդության տեսանկյունից թե կանայք ու թե տղամարդիկ առանձնացնում են յուրաքանչյուր սեռի համար խնդիրների շարք: Կանայք մատնանշում են, որ տղաներն ավելի թույլ են՝ էմոցիաները չգիտակցելու ու դրա պատճառով մոլուցնքերի տրվելու տեսանկյունից: Աղջիկների դեպքում կանանց անհանգստացնում է նրա ապագայում լավ ամուսին և ընտանիք ունենալու հեռանկարը, տղաների դեպքում՝ տղամարդ կերպարի հանրային ընկալման խեղվածության արդյունքում առաջացող խնդիրները: Տղամարդիկ աղջիկ երեխայի դաստիարակության հարցում խնդիր են համարում ապագայում կայանալու, նոր միջավայրում ադապտացվելու խնդիրները,

տղաների դեպքում որոշակի արժեհամակարգ ունենալով հասարակությունում հարգանք ձեռք բերելու, բանակի խնդիրները:

Երեխայի սեռի նախապատվության հարցում բոլոր տարիքային խմբերի թե տղամարդիկ, թե կանայք առաջին հերթին քննադատում են երևույթը, պնդում՝ որ մեր ազգային նախապատվությունը տրվում է տղային: Այս երևույթն իր մեջ կուտակել է գեներ շարունակելու, պատերազմային իրավիճակներում տղամարդու պաշտպանվ լինելու փաստի կարևորումը:

Փորձագետնորը նշում են, որ չնայած մեր երկրում առկա սոցիալ-տնտեսական պայմաններով ենթադրվող դժվարությունները իսկապես լուրջ խնդիր է ու շատերը գիտակցելով իրենց անկարողությունը իսկապես կարող են հրաժարվել շարունակվելուց: Երեխայի դաստիարակության տեսանկյունից, գտնում են, որ լավագույն դաստիարակությունը դա ինքնադաստիարակությունն է, որովհետև երեխան ակամայից կրկնում է ծնողներից ստացածը, առանց սեռային պատկանելության շեշտադրության: Մեզանում ընդունված արական սեռի երեխայի պաշտանմունքը ու դրա արատավոր խտրականությունը (մասնավորապես սեռով պայմանավորված հղիության ընդհատումները) պայմանավորում են մեր ազգի ունեցած պատերազմների, մասնավոր սեփականությունը փոխանցելու, ազգանունը շարունակելու, կնոջ բարդ կյանքի, տղայի շատ գումար վաստակելու նկատառումներով:

Փորձագետ՝ «*Կարծում եմ, դա բոլոր տեղերում է հղապես: Երեխան մեծ ինդուստրիա է՝ շոր, կոշիկ, սայլակ և այլն, իսկ եթե մարդը չի աշխատում հարցեր են առաջանում: Մանավանդ տղա երեխա ունենալու դեպքում անընդհատ հարց է առաջանում արդյոք ճիշտ է էս քայլը, էն քայլը: Երեխային բռնությունից հեռու կդաստիարակեի, բայց մյուս կողմից հասկանում եմ իրականության մեջ տղա երեխայի կայանալու ճանապարհները ու չէի ուզենա թուլամորթ դաստիարակել, և դա իմ սկզբունքների հետ հակասության մեջ է մտնում: Իսկ երեխա չունենալը մեր երկրում շատ հազվադեպ երևույթ է մանավանդ սեփական ընտրությամբ, որովհետև մենք երեխայապաշտ ենք: Սովորական կնոջ կամ տղամարդու համար չեմ պատկերացնում որ համարձակվեն դեմ գնալ սոցիալական կառուցվածքին ու իր ընտրությամբ կյանքը պլանավորել, մեր երկրում կա ընդունված*

սգենար ընտանիքի զարգացման, որ շատ քչերն են խախտում: Երեխայի սեռով պայմանավորված հղիություններն ընդհատվում են, որովհետև կինը բանակ չի գնում, թույլ է, գումար չի վաստակի, ազգանունը չի շարունակի և այլն: + կինը երկրորդ սորտի մարդ է համարվում»:

Կին 57տ.՝ «Այսօր շատ աղջիկներ շատ ավելի պատասխանատու, ընտանիքին նվիրված ու իրենց ծնողներին ավելի ուշադիր են, քան տղա զավակները: Շատ տղաներ հեռանում են ու անգամ մոռանում ծնողների գոյության մասին, դրա համար չեմ ընդունում էդ քայլը»:

Տղամարդ 49տ.՝ «Ինձ թվում է աղջիկ ունենալն ավելի խնդրահարույց է, պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել, թե ընտանիքում, թե շրջապատում: Աղջկան ավելի շատ հագուստ է պետք գնել: Աղջկան ավելի դժվար է կայանալ: Էմոցիոնալ պորթլումներն ավելի հատուկ են աղջիկներին ու էդ պատճառով էլ դժվար է: Մեր մոտ ընդունված է որ առաջինը պիտի ընտանիքում տղա ունենան հետ աղջիկ, որ աղջկան հսկող լինի»:

Կին 49տ.՝ «Երկու սեռի երեխա ունենալն է լի է խնդիրներով, ու չկա սրանցից մեկի համար ավելի շահեկան վիճակ, ամեն մեկն իր բարդություններն ունի: Էսօր դա շատ բարդ հարց է երեխա պահելը: Լինելով աղքատ պետություն ու փոքր ազգ, իրավիճակը բարդացնող շատ հանգամանքներ ունենք քան մյուս երկրներում՝ ոչ միայն ուղղակի դաստիարակության, այլև մեր ազգային տեսակը պահպանելու համար: Ֆիզիկապես ու հոգեպես առողջ երեխա դաստիարակելը հիմա անկախ սեռից շատ դժվար է, մանավանդ ծանր կենցաղային պայմաններում: Սրան գումարվում է անորոշությունը, ու միգրացե հավանական վախերն ու խնդիրներն են որ երիտասարդներին ետ են պահում երեխա ունենալուց: Տնտեսական վիճակը հավասարապես ծանր է թե տղամարդու թե կնոջ համար»:

Տղամարդ 48տ.՝ «Մեր իրականության մեջ տղա երխան ավելի շատ խնդիրներ է ունենում ու դրանում մեծ դեր ունի հեռուստատեսությամբ ներկայացված մերզ համար օտար արժեքները: Աղջիկը ավելի կամային է և ի վերջո ավելի ճիշտ լուծում գտնել, զգույշ են: Տղաները հեշտ են տրվում հաճույքներին»:

Քաղաքական ակցիաներին, սոցիալական շարժումների վերաբերյալ երիտասարդ սերունդը մասնակցության տարբեր ձևեր է առանձնացնում՝ գաղափարային, էմոցիոնալ աջակցություն (եթե ինչ-ինչ պատճառներով չեն կարող ֆիզիկապես ներկա լինել) և ֆիզիկական ներկայությամբ աջակցություն գաղափարակիցներին: Հարցվող երիտասարդ կանայք ու տղամարդիկ ավագ սերնդի մասնակցությունը թույլ է գնահատում նրանց մեջ նախորդ նմանատիպ միջոցառումները մնացած հիասթափությունների պատճառով: Ընդգծում են հասարակությունում «Մենք» գաղափարի թույլ հիմքերը: Զուգահեռաբար ընդունում են, որ մեր երկրում շատ դժվար է պայքարել:

Ավագ սերնդի տղամարդիկ իրենց չմասնակցությունը արդարացնում են զբաղվածությամբ, հիասթափվածությամբ ու ժամանակի կորստով: Կանայք՝ նշում են հիասթափվածությունը, կենցաղային խնդիրների սահմանափակող բնույթը, և վախը կորցնել ամուսիններին, զավակներին:

Փորձագիտական կարծիքը ընդհանրացնելով կրկին տեսանելի է տղամարդկանց դոմինանտումը, թե սոցիալական շարժումներում, թե ժամանցի կազմակերպման ու մասնակցության հարցերում:

Տղամարդ 44տ.՝ *«Մեկը էս չեմ գնացել ու ճիշտ չեմ համարել գնալը, որովհետև էդ ակցիաները խաթարում են մեր երկրի հիմքերը: Մենք չպիտի բողոքենք մեր ունեցածից կամ ծաղրենք մեր նախազահին, պետք է այլ ձևեր գտնել դեկավարությունից ձերբազատվելու, բայց ոչ էս տարրերակենում: Օրինակ ինչպես ծնողից չեն հրաժարվում այնպես էլ էս դեպքում: Պարզ է որ կանայք իրենց ավելի հետ են պահում նման միջոցառումներին մասնակցելուց»:*

Կին 50տ.՝ *«Շատ քիչ են մասնակցում: Երևի ինչ-որ կամային գործոններ են քչացել, ազգային մենթալիտետի, համախմբվածության խնդիրներ կան: Մնք կամ լրիվ լուծվում ենք «մենք»-ի մեջ, որ լրիվ լուծվում ենք ու կորցնում մեր «ես»-ը: Կամ ամեն մեկս մեր «ես»-ը ունենալով «մենք» չենք դառնում: Միայն պատերազմական իրավիճակներում, լուրջ վտանգի դեպքում ենք միավորվում, իսկ այլ խնդիրների դեպքում մեզ հատուկ չէ միավորվելը: Բացի դրանից արդեն մի քանի ակցիաների ընթացքում մարդկանց*

հետապնդում են, անսպասելիորեն լուրջ մարմնական վնասներ հասցնում: Դրա համար էլ մարդիկ վախենում են ու մեծ հաշվով կորցրել ինչ-որ բաներ փոխելու հնարավորության հույսը: Կառավարման համակարգում չեն գնահատում, արժեվորում քաղաքացուն, ըստ իրենց, բնականաբար դա գիտակցելով մարդիկ զգուշանում են»:

Տղամարդ 53տ.՝ «Չէի ասի, լավ էլ մասնակցում են, ուղղակի մի մասը մասնակցում է մյուսը ոչ: Ով չի մասնակցում գտնում է, որ իր կարիքն էնտեղ չկա, կամ ինքը չի հետապնդում նման մտքեր: Այսինքն չկա միանշանակություն»:

Կին 60տ.՝ «80ականների շարժմանը մասնակցելիս մեզ թվում էր, որ մենք էնքան զեղեցիկ, ուժեղ ու դեմոկրատական երկիր կունենանք, որն ի վերջո մերը կլինի: Բայց հետո եկան իրար նման, տարբեր դեմքերով դեկավարներ, որ ամեն անգամ ավելի ու ավելի հիասթափեցնում, քանդում էին մեր ստեղծածը: Դրա համար մենք էլ հավաստ չունենք, ազգը եթե մի մարդու նման ոտքի կանգնի միզուցե հնարավոր լինի որոշ բաներ փոխել, բայց ոչ բոլորն են այլևս ցանկանում մասնակցել դրան: Մարդիկ բացի հավաստ չունենալուց նաև վախենում են և վերջապես ժողովուրդը հորնել է: Իհարկե ամեն մեկս ընդհանուրի մասն է կազմում, բայց էլ մեզ միավորող ուժ չկա: Մարդիկ ուզում են լավ լինի ու էլի կգնահին, բայց ամեն մի ցույցից հետ կամ հենց ցույցի ընթացքում մի վատ բան է լինում»:

Փորձագետ՝ «Ամենացավազին հարցերից մեկն է, որովհետև մեր հասարակությունը գոհի հոգեբանությամբ է առաջնորդվում: Եթե համեմատենք ընտանեկան բռնության գոհ դարձած կնոջ իրավիճակից ելք չտեսնելու վիճակը մեր ժողովրդի վիճակի հետ, շատ ընդհանուր բաներ կտեսնենք: Անզորությունից հանձնվել ենք, վախենում ենք իշխանությունն էլ պատերազմով է մեզ վախեցնում: Ցավոք նաև մեր ունեցած կին պատգամավորները իրենց գործով, որոշումներ կայացնելով, մտածելակերպով չեն տարբերվում տղամարդ պատգամավորներից»:

Ժամանցից հրաժարվելու պատճառները շատ խառն են կանանց ու տղամարդկանց ավագ ու երիտասարդ խմբերի դեպքում, բայց բոլորն ընդունում են անհատի ֆինանսական հնարավորություններում սահմանափակ լինելը:

Երիտասարդ տղամարդիկ կարծում են, որ ցանկացած նախասիրություն ունեցող անձի համար կան ժամանցի շատ ձևեր որ անգամ գումար չեն պահանջում և անիմաստ է դրանցից հրաժարվելը, թեև հասկանում են ժամանակակից իրականությունում զբաղվածության ու գումարի որոշիչ դերը: Տղամարդկանց 35-ից բարձր տարիքի ներկայացուցիչները ելենելով ազգային գենդերային վարքի ձևերի նորմատիվներից կարծում է, որ տղամարդը ժամանցի կազմակերպման հարցում կարող է նախաձեռնող լինել իսկ կինը ոչ, որովհետև էդպես է ընդունված, կամ երիտասարդ կանանց վարքըն ու ազատությունը վերահսկվում է ընտանիքի արական սեռի ներկայացուցչի կողմից:

Ավագ սերնդի կանայք խոստովանում են, որ տարբեր հոգսերի պատճառով, գերադասում են իրենց գումարն ու ժամանակը տանը ծախսել, որի ռեսուրսները նրանց մոտ սահմանափակ են: Կանաց կարծիքով տղամարդիկ ավելի ազատ են ժամանց կազմակերպելու հարցում:

Տղամարդ 44տ.՝ *«Տղամարդը կարող է ուղղակի դուրս գա զբոսնելու չկա էնպես բան որ տղամարդը սպասի կնոջ հրավերին ու մնա սպասումներով, երբ ուզենա կարող է մեկին հրավիրի ու դուրս գա: Իսկ կինը չի կարող ուղղակի դուրս գալ, ուզում է, բայց իրեն ետ է պահում, նրա պետք է հրավիրեն»:*

Կին 59տ.՝ *«Կանայք ավելի խորն են մտածում, որ էդ գումարը իրենց տանը կմնա, մի բան իրենց երեխաների համար կանեն: Տղամարդիկ անհոգ են, ավելի էգոիստ, նրանց համար կարևորն իրենց լավ լինի: Կարող են ընկերներով իրենց լավ զգալ մի տեղ գարեջրի կամ խաղաքարտերի շուրջ: Հայ տղամարդիկ սիրում են իրենց անձը, կանայք ամբողջությամբ նվիրվում են իրենց ընտանիքին, դա իսկապես այդպես է»:*

Փորձագետ՝ *«Ժամանցից հրաժարվելու դրդապատճառները պիտի որ շատ լինեն, տարբեր բաներով պայմանավորված, պետք է լավ ուսումնասիրել մի քանի տեսանկյունից: Եթե մարդ իր մտային կառուցակցումներով 18-րդ դարում է, ապա նրա համար էսօրվա հեռուստատեսությունը ոչ մի խնդրահարույց բան չունի, նա հաճույէ է ստանում էս անորակ ու ապուշ սերիալներից: Էս տեսանկյունից շատ նորմալ է: Այսինքն իմաստային առումով ոչ մի ազդակի հետ անհամապատասխանություն չեմ ունեցել: Եթե էն ինչ գալիս է ու չեմ ճանաչում, նույն կերպ եթե հետս չինարեն խոսեին, էս եպքում*

անգամ զգում եմ որ աղմուկ է, հայերենի դեպքում չեմ հասկանում որ դա աղմուկ է: Ընկալվում է, որպես բառերի համադրություն, որի իմաստային լիցքերը 18-րդ դարի են: Այսինքն շփվելիս հայտնի չի մենք ինչ ենք իրար հաղորդակցում: Պետք է ճշտել իմ ընկալած ազատությունն ու դիմացինի ընկալած ազատության սահմանումները, որովհետև դրանք տարբեր կառուցվածքներ են 18-րդ և 21-րդ դարում»:

Բարեկամական հարաբերությունների թուլացման ու մարդկանց մտերմիկ հարաբերությունների ձևափոխման փորձագետները գտնում են, որ այս երևույթը ևս պայմանավորված է սոցիալ-տնտեսական պայմաններով: Միևնույն ժամանակ վկայում են կապի ժամանակակից միջոցների մարդկանց հարաբերություններն ավելի ճկուն դարձնելու մասին: Մյուս տեսանկյունից դա դիտարկվում է մարդկային հարաբերությունների զարգացման հերթական փուլ ու որ շատ դեպքերում մեկուսացումն ավելի ցանկալի է քան անցանկալի կամ ինչ-ինչ պայմաններից ելնելով ստիպված փոխհարաբերությունները:

Փորձագետ՝ «...անընդհատ գործընթաց է որ միշտ կա: 18-րդ դարում կար պայմանավորվածություն որ կարգն էյդպիսին է: Հետագայում այլ պայմանավորվածություններ են առաջ եկել հինը պարբերաբար խախտելով ու նոր պայմանավորվածություններ հաստատելու հաշվին: Հայաստանն էս իմաստով ճգնաժամի մեջ է, որովհետև փոքր-փոքր պայմանավորվածություններ են հավաքվում՝ ասենք 4 հոգով, բայց չկա պայմանավորվածությունների ինստիտուցիոնալիզացիա: Հիմա մեր պետությունն այլ բաներով է զբաղված դրա համար էլ այսպես է»:

Յուրայիններին վերահսկելու տեսանկյունից, սակայն, փորձագետները համակարծիք են, որ տղամարդիկ, անկախ տարիքից, ավելի շատ են վերահսկում, քան կանայք: Կանայք սահմանափակված են գործունեությամբ ու ֆիզիկապես շատ բան չեն կարող իրենց թույլ տալ: Նշում են, որ վերահսկողությունը խոսում է ներքին անվստահության մասին, ու թե ինչպես է դա անդրադառնում կնոջ ու տղամարդու դրսևորած վարքին: Տղամարդիկ վերահսկում են որոշումների մակարդակում, կանայք կենցաղային:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, իրականացված հետազոտության արդյունքում եզրակացնում ենք՝

- Իդալական կնոջն ու իդեալական տղամարդուն վերագրվող որակները դիտարկելիս երիտասարդ սերնդի մոտ կա միտում համամարդկային արժեքների առավել կարևորման, առանց սեռային պատկանելության շեշտադրության: Ավագ սերունդը տղամարդու կամ կնոջ իդեալական որակների ձևակերպման մեջ ցուցաբերում է ավանդական նորմատիվների պահպանողական մոտեցում:
- Երեխաների դաստիարակության հարցում թե ավագ սերունդը, թե երիտասարդները կողմնակից է բարձր բարոյական արժեքներին զուգահեռ սեռերի ավանդական նորմատիվներին: Աղջիկ երեխաների դեպքում շեշտ են դնում հնազանդության, խոհեմության, զսպվածության, համեստության և այլ կանացի որակներին: Տղա երեխաների դեպքում՝ ինքնավստահության, վճռականության, առաջնորդության, գումար վաստակելու և այլ ընդունված որակների վրա: Բացառությամբ միայն, որ երիտասարդների դեպքում ավելի է կարևորվում ապագա լավ մարդ դառնալու փաստը, քան զուտ կանացի կամ տղամարդկային որակների դաստիարակությանը:
- Իրական կնոջ ու տղամարդու վերաբերյալ, թե տղամարդկանց, թե կանանց կողմից տրված որակների բացասական երանգավորումներում տեսանելի է կանանց մասկուլինացումն և տղամարդկանց՝ իրական կերպարի իդեալականից շեղում: Նման փոփոխությունը պայմանավորվում է երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսակն, մշակութային ճգնաժամի հետ:
- Բոլոր տարիքային խմբերի թե տղամարդիկ, թե կանայք հասարակական, ընտանեկան կյանքի, պետության կայունության նորմավորման տեսանկյունից կարևորում են կանանց ու տղամարդկանց ավանդական դերերի պահպանման խնդիրը, նշում գենդերային ավանդական նորմատիվների վերացման սպառնալիքը: Կարևորվում է կրթական համակարգի, ընտանիքի, լրատվամիջոցների ու պետական կառուցվածքների համատեղ աշխատանքի

անհրաժեշտությունը: Ավանդական դերերի փոփոխությունը դիտարկվում է թե դրական, թե բացասական կողմից, սակայն կանանց կողմից նման փոփոխություններն ավելի են արժեվորվում:

- Կանայք, չնայած արտաքին սոցիալական ակտիվության, մնում են տղամարդկանց վերահսկողության տակ, առաջնորդվում տղամարդկանց կարծիքով:
- Իշխանությունների որոշումներ կայացնելու մեջ ավելի շատ հաշվի են առնվում տղամարդկանց, քան կանանց շահերն ու կարիքները, քանի որ առաջիններս ընտանիքի սոցիալական ապահովման օբյեկտներ են:
- Քաղաքական, տնտեսական ոլորտներում ակտիվությունը թեև հնարավոր է համարվում երկու սեռի համար էլ, բայց կա հետադարձ հայացք ավանդական նորմատիվներին, որ կինն ամեն դեպքում ստեղծված չէ արտաքին կյանքի համար, շեշտվում է տղամարդ քաղաքական գործչի կամ գործարարի հանրային տեսանկյունից ավելի լուրջ ու վստահելի լինելը:
- Խնդիրներ ունենալու դեպքում օրենքի տեսանկյունից երկու սեռն էլ խոցելի իրավիճակում է: Սակայն տղամարդկանց համար ավելի հեշտ է խնդիրներին լուծում գտնել, դիմել ընկերներին քան կանանց, քանի որ վերջիններիս մոտ ընդունված չէ դիմել ընկերներին:

Հետազոտության արդյունքում առաջադրված հիպոթեզները հաստատվել են`

- Գենդերային հեռացումն առավելապես տեղին է կանանց, քան տղամարդկանց պարագայում: Իրական կինը իր վրա է վերցրել ընտանիքի հոգսը, երեխաների դաստիարակությունը և այլն, իրեն պարտավորված է զգում իր շուրջը կատրվող փոփոխությունների համար: Բացի դրանից իրական կինը չնայած արտաքին ազատության չունի սեփական կարծիք, որը կարողանա հիմնավորել: Առաջնորդվում է ավանդական, ժամանակակից ու տղամարդկանց առաջադրած ձևաչափերի խառնուրդով, որը սակայն ներանձնայնացված չէ ու հղի է բազմաբնույթ բացասական հետևանքներով:

- Գենդերային «ավանդական» նորմատիվների փոփոխությունները ընկալվում են որպես դրական միտում կանանց մոտ: Տղամարդկանց պարագայում գենդերային «ավանդական» նորմատիվների փոփոխությունը ընկալվում է որպես այնուամենայնիվ բացասական, բայց անհրաժեշտորեն անխուսափելի գործընթաց: Կյանքի ժամանակակից ռիթմով ու գաղափարախոսությամբ թելադրվող նոր ավանդույթների ձևավորման ընթացքը ավելի ողջունվում է կանանց կողմից, մինչդեռ տղամարդիկ կողմ են ավանդական դերերի պահպանմանն ու դեմ իրավահավասարության պրոպագանդային:
- Քաղաքական, տնտեսական ոլորտներում կանանց մասնակցությունը ֆորմալ է ընկալվում, նրանք անտեսանելի են: Մինչդեռ տղամարդիկ ունեն որոշումներ կայացնելու մենաշնորհ ու պարտադրում են դրանք կանանց: Կանանց գործարարությունը լուրջ չի ընկալվում: Չնայած օրենքի տեսանկյունից իրավահավասարությանը, կանայք ավելի շատ խոչընդոտների են հանդիպում իրենց նախաձեռնություններում քան տղամարդիկ:
- Սոցիալական տարբեր միջոցառումներում, ժամանցում տղամարդիկ ավելի ակտիվ են ու ազատ են տնօրինում իրենց ժամանակիք, քան կանայք: Դրան նպաստում են մշակութային նորմատիվների խոր արմատավորումը:
- Սոցիալական օտարումը հանձինս սոցիական աննորմության առավելապես տեղին է տղամարդկանց պարագայում, քան կանանց: Սա արտահայտվում է տղամարդկանց առավել օրինազանց լինելով: Կանայք ավելի զգույշ ու շրջահայաց են ու դժվարությամբ են դիմում օրենքից դուրս քայլերի:
- Կանանց սոցիալական առավել իմաստազրկումն ակնառու է հենց կնոջ կյանքի կարևորումից, որ հասարակությունում դիտվում է պտղի սեռով պայմանավորված արդրոնների քանակով, վերջացրած սեփական կյանքում նպատակների բացակայությունից: Հայրիշխանական հայաստանյան իրականությունը վերարտադրվում է պարբերաբար սահմանափակելով կնոջ դերը, տեղն ու նշանակությունը հասարակությունում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածաշունչ, Նոր Կտակարան, Գործ Առաքելոց, Պողոս Առաքյալի թուղթը Եփեսացիներին – 4:18
2. Թաղևոսյան Գ., Որակական սոցիալական հետազոտություններ, Երևան 2006թ.
3. Брайсон В. Б87 Политическая теория феминизма. пер. с англ. О. Липовской и Т. Липовской. М.: Идея-Пресс, 2001
4. Вебер М. Протестантская этика и дух капитализма, 2009
5. Избр. филос. произв., т. 2, М., 1955, с. 263
6. Милль Дж. С. Подчиненность женщины. СПб, 1869
7. Ревушкина М. Б., Представление о ценностях в учении В. Франкла, Вестник Томского государственного университета Философия. Социология. Политология 2015. Ном.2
8. *Сартр Жан-Поль. Тошнота/La Nausée.* 2-е изд.; Санкт-Петербург: Азбука, 2007
9. Фридан Б. Загадка женственности. М., 1994
10. Фромм Э. Бегство от свободы: Пер с англ. /Общ. ред. и послесл. П.С. Гуревича. - М.: Прогресс, 1989., с.175-176,196.
11. Alienation - Richard Schacht Published Online: 1 FEB 2013
12. Alizadeh Zahra and Ehsan Khan Mohammadi, Extensive Journal of Applied Sciences, Surveying the Concept of Alienation in the Thought of Erich Fromm, ©2014, pp.64-68
13. Buckland, 2007*A Text-Book of Roman Law: From Augustus to Justinian*, 3rd edn revised by P Stein. Cambridge: Cambridge University Press
14. Dean, D. Alienation: Its meaning and measurement. American Sociological Review, 1961 753-758
15. Caron, H. S. Wardell, W. I., & Bahnson, C. B. coronary Stress and disease: The responsibility hypothesis. In M* B. Clinard (Ed.), Anomie and deviant behavior. New York: Free Press of Glencoe, 1964
16. Crumbaugh, J. Cross-validation of a purpose-in-life test based on Frankl's concepts. 1968, *Journal of Individual Psychology*, 74-81

17. Durkheim Emile, *The Division of Labor in Society*, (Translated by George Simpson). By New York: The Free Press, 1947
18. Gibbs J. B. Rates of mental hospitalization: A study of societal reaction to deviant behavior. *American Sociological Review*, 1962, 27, 782-792
19. Hegel GWF *Philosophy of the Mind*, trans. And ed. by Wallace W, Miller AV, and Inwood MJ. Oxford: Clarendon 2007
20. Hegel 21, Hegel, G.W.F. *Phenomenology Of Spirit* . Trans. A.V. Miller. Oxford: Oxford University, 1977
21. Hooks, Bell. «Feminist Theory: From Margin to Center». — Cambridge, MA: South End Press, 1984
22. Horowitz I. L. *International Phenomenological Society Philosophy and Phenomenological Research*, Vol 27, No 2, Dec. 1966, pp 230-237
23. Janesick V. J., *Oral history for the qualitative researcher: choreographing the story*, 2010, pp.44-81.
24. Jessor, R., & Jessor, S. L. *Problem behavior and psychosocial development*. 1977, New York: Academic Press
25. Joseph, Gloria (1981) *The incompatible ménage a trois: Marxism, feminism and racism*. In Lyndia Sargent (Ed.) *Women and revolution*. Boston, MA: South End Press
26. Kanungo, 1979; Mottaz, 1981; Overend, 1975
27. Kenneth A. Schmidt, Brandman University *Alienational Powerlessness and Meaninglessness: A Neo-Thomist Approach* Volume2, No1, Spring 2012
28. Kohn, M. L., & Schooler, C. (1983). *Work and personality: An inquiry into the impact of social stratification*. Norwood, NJ: Ablex
29. Lander, B. *Toward an understanding of /juvenile delinquency* . New York: Columbia University Press, 1954
30. Ladner GB *Images and Ideas in the Middle Ages*, Vol. II. Roma: Edizioni di Storia e Letteratura 1983
31. Маркс К., Ф. Энгельс Из ранних произведений, М., Политиздат, 1956

32. McClosky, H., & Schaar, J. H. Psychological dimensions of anomie. *American Sociological Review*, 1956, 14-40
33. Merton, R. K. Social theory and social structure. New York: 1957, Free Press of Glencoe
34. Neal, A. G., & Groat, H. T. Social class correlates of stability and change in levels of alienation. *Sociological Quarterly*, 1947, 548-558
35. Neal, A., & Seeman, M. Organizations and powerlessness: A test of the mediation hypothesis. *American Sociological Review*, 1964, 216-226
36. Nettler G. A measure of alienation. *American Sociological Review*, 1957, 22, 670-677
37. Pearlin, L., Lieberman, M., Menaghan, E., & Mullan, J. The stress process. *Journal of Health and Social Behavior*, 1981, 337-356
38. Rubin, H. J., and Rubin, I. S. Qualitative Interviewing, The Art of Hearing Data. 2. Edition, Sage Publications, Thousand Oaks, 2005, London, New York
39. Richard Schacht, Srole L. Social integration and certain corollaries: An exploratory study. *American Sociological Review*, 1956, 21, 709-716.
40. Robinson J.P, Phillip R. Shaver and Lawrence S. Wrightsman Eds. Measures_of_Personality and Social Psychological Attitudes. Measures of Social Psychological Attitudes 1991
41. Sartre, Jean-Paul, Being and Nothingness, Trans. By Hazel. E. Barnes, Washington Square press, New York, London, Toronto, Sydney, Tokyo. December, 1992
42. Scheussler, K. F *Measuring social life feelings*. San Francisco: 1982, Jossey-Bass
43. Seeman, M. On the meaning of alienation. *American Sociological Review*, 1959, 783-791
44. Seeman, M.. On the personal consequences of alienation in work. *American Sociological Review*, 1967, 273-285
45. Seeman, M. Alienation motifs in contemporary theorizing: The hidden continuity of the classic themes. *Social Psychology Quarterly*, 1983, 171-184
46. Slomczynski, K., Miller, J., & Kohn, M. Stratification, work, and values. *American Sociological Review*, 1981, 720-744
47. Srole, L. Social integration and certain corollaries. *American Sociological Review*, 1956, 709-716

48. Weber, Max *Economy and Society*. Edited by Max Rheinstein. Translated by Edward Shils and Max Rheinstein. New York: Simon and Schuster, 1922/1968
49. Willis, Ellen, «Radical Feminism and Feminist Radicalism», 1984, collected in *No More Nice Girls: Countercultural Essays*, Wesleyan University Press, 1992, pp. 117—150
50. Women's Studies Encyclopedia, Vol.1: 476—477
51. <http://academics.triton.edu/uc/Ethics/fromm.htm> 11.04.2017
52. <http://aspirantura.ws/fenomenologija-duha-Gegel.htm>, 24.01.2017
53. <http://www.cardiff.ac.uk/socsi/undergraduate/introsoc/marx10.html> 26.10.2016
54. http://dic.academic.ru/dic.nsf/history_of_philosophy/571/%D0%A4%D0%95%D0%9D%D0%9E%D0%9C%D0%95%D0%9D%D0%9E%D0%9B%D0%9E%D0%93%D0%98%D0%AF 22.01.2017
55. <http://www.encyclopedia.com/humanities/encyclopedias-almanacs-transcripts-and-maps/alienation/> 15.03.2017
56. <http://www.feministezine.com/feminist/modern/Socialist-Feminism.html>, 03.05.2017
57. <http://feminism.pro/o-feminizme/psichoanaliticheskii-feminizm.html>, 04.05.2017
58. <https://www.filosofio.ru/filosofiya-gegelya/osnovnye-idei-fenomenologii-dukha-gegelya.html> 18.03.2017
59. <http://www.krugosvet.ru/enc/istoriya/feminizm.html?page=0,5>, 04.05.2017
60. www.marxists.org/subject/women/authors/ehrenreich-barbara/socialist-feminism.htm, 03.05.2017
61. http://www.newacropol.ru/Alexandria/philosophy/Philosofs/Plato/Uchenie_Plato/Plato3/ 24.04.2017
62. <http://www.panorama.am/am/news/2017/04/26/%D5%8A%D5%BF%D5%B2%D5%AB%D5%BD%D5%A5%D5%BC%D5%AB%D5%AD%D5%BF%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A5%D5%B4%D5%BA%D5%A1%D5%B5%D6%84%D5%A1%D6%80/1767545>, 28.04.2017
63. <https://plato.stanford.edu/entries/feminism-liberal/#ClaLibLibFem>, 01.05.2017

64. <https://plato.stanford.edu/entries/feminism-liberal> 01.05.2017
65. http://socialistica.lenin.ru/txt/f/feuerbach_1.htm, 09.03.2017
66. http://studopedia.su/18_63774_psihoanaliticheskiy-feminizm.html. 01.05.2017
67. <https://www.ukessays.com/essays/religion/ludwig-feuerbach-the-essence-of-christianity-religion-essay.php> 12.03.2017
68. https://en.wikipedia.org/wiki/Escape_from_Freedom 03.04.2014
69. http://www.yasu.am/files/CGLS_OXFAM_RESEARCH_2016.pdf, 22.04.2017
70. <http://www.yasu.am/files/%20գեղերային%20բարոյագիտության.pdf>, 23.04.2017
71. http://www.yasu.am/files/Report_Gargrtsyan_Harutyunyan.pdf 23.04.2017
72. http://www.yasu.am/files/The%20Systematic%20and%20Cultural%20Causes_Sex-selective%20abortions_ARM.pdf, 24.04.2017
73. <https://www.youtube.com/watch?v=BzpT1mZf718>, 09.04.2017

Իդեալական

1. Ձեր կարծիքով ինչ որակներով պետք է օժտված լինի ա) «իսկական» հայ տղամարդը, բ) «իսկական» հայ կինը այսօր: *Աղյուսակի օգնությամբ դուրս բերել 10-ական բնութագրիչներ ըստ առաջնահերթության իսկական հայ տղամարդու և իսկական հայ կնոջ համար:*

Իրական

2. Ձեր կարծիքով ինչ որակներ են հատուկ ա) իրական՝ «սովորական» հայաստանցի տղամարդուն, բ) իրական՝ «սովորական» հայաստանցի կնոջը: *Աղյուսակի օգնությամբ դուրս բերել 10-ական բնութագրիչներ ըստ առաջնահերթության իրական հայաստանցի տղամարդու և իրական հայաստանցի կնոջ համար:*

3. Ձեր կարծիքով կարևոր է, արդյոք այսօր Հայաստանում լինել «իսկական» տղամարդ (ըստ վերը բերված որակների, հատկանիշների), «իսկական» կին (ըստ վերը բերված որակների, հատկանիշների), թե նմանատիպ որակավորումն այլևս արդիական չէ, գուցե այսօրինակ հասկացությունները գոյություն չունեն, նույնիսկ երբեմն անիրական են: Ինչ ենք մենք այդ պարագայում կորցնում և/կամ ընդհակառակը՝ ձեռք բերում, ինչու?: Ձեր կարծիքով ինչն է փոխվել, կամ ինչն է նպաստել նման փոփոխություններին, ինչը կօգնի նախկին արժեքները վերականգնելուն:

4. Կարծում եք հնարավոր է այսօր պահպանել «իսկական» տղամարդու (ըստ վերը բերված որակների, հատկանիշների), «իսկական» կնոջ (ըստ վերը բերված որակների, հատկանիշների), որակները: Ինչ է դրա համար անհրաժեշտ և ինչն է դրան խանգարում: Ինչն է նպաստել իրավիճակի փոփոխության: *(խոսքը գնում է բազմաթիվ մշակութային, հասարակական, տնտեսական, քաղաքական գործընթացների և փոփոխությունների մասին, որոնք բերեցին գենդերային նորմատիվների փոփոխությանը):*

5. Կարծում եք այսօր ծնողները երեխաներին դաստիարակելիս պետք է սերմանեն «իսկական» հայ տղամարդու, «իսկական» հայ կնոջ որակներ *Աղյուսակի օգնությամբ դուրս բերել 10-ական բնութագրիչներ տղաների և աղջիկների համար*), համեստություն, ազնվություն, հավատարմություն և այլն, թե նման որակները կարող են խնդիրներ առաջացնել կյանքում, խանգարել ապահովված, բարեկեցիկ, ապագա ունենալուն: Միգուցե այսօր արդեն անհրաժեշտ են որոշակի, նախկինում գոյություն չունեցող ազատություններ, ճկուն մոտեցումներ դաստիարակության մեջ: Ինչ մտավախություններ ունեք այս թեմայի շուրջ: *(Առանձին մանրամասն խոսել տղաների և աղջիկների մասին):*

6. Ինչպես եք վերաբերվում տղամարդու և կնոջ ավանդական դիրքերի և դերերի, վարքի փոփոխությանը: Նկարագրեք ասվածի պատճառները, դրական, բացասական հետևանքները, իրավիճակը շտկելու տարբերակները: Համաձայն եք, ողջունում եք նման փոփոխությունները, թե այս ամենը օտարարանոլ երևույթներ են և խորթ մեր մենթալիտետին: *(Խնդրին անդրադառնալ ըստ ոլորտների՝ ընտանեկան հարաբերություններ, դերեր, տնտեսական հարաբերություններ, զբաղվածության ոլորտներ, քաղաքականություն, առանձնակի ուշադրություն դարձնել գենդերային նորմատիվային բարքերի խախտմանը, այլափոխմանը):*

7. Կարո՞ղ է արդյոք «սովորական» տղամարդը/ «սովորական» կինը *(խնդրին անդրադառնալ յուրաքանչյուրի համար առանձին)* Հայաստանում որոշիչ ազդեցություն ունենալ Հայաստանի

ներքաղաքական (ընտրություններ, հանրաքվե և այլն) խնդիրների վրա: Ինչու՞: Քաղաքական գործիչներից որ կնոջ և տղամարդու կերպարն է Ձեզ համար ընդունելի օրինակելի, ինչու:

8. Հնարավո՞ր է այսօր Հայաստանում ազնիվ, արդար քաղաքական կառավարում: Քաղաքական որոշումներում ու գործընթացներում հաշվի առնվո՞ւմ են արդյոք շարքային քաղաքացու (տղամարդկանց/ կանանց) խնդիրները, ցանկությունները Ինչու՞ եք այդպես կարծում: Ձեր կարծիքվ ի՞նչը կարող է շտկել ստեղծված իրավիճակը: Շեշտը դրվում է կանանց թե տղամարդկանց խնդիրներին/կարիքներին:

9. Կարո՞ղ է արդյոք հայաստանյան «սովորական» տղամարդը/ «սովորական» կինը որոշիչ ազդեցություն ունենալ տնտեսական գործընթացի վրա (ապրաքների, ծառայությունների գնագոյացում, դրամի փոխարժեք և այլն...): Ի՞նչ է պետք իրավիճակը փոխելու համար, ով կարող է դա անել: օրինակ՝

10. Ըստ Ձեզ, այսօր Հայաստանում «սովորական» տղամարդը/ «սովորական» կինը կարող է փոխել իրերի հաստատված կարգը, գոյություն ունեցող նորմերը, արժեքները: Թե ոչինչ փոխել հնարավոր չէ:

11. Ու՞մ կարող է դիմել, հույսը դնել Հայաստանում «սովորական» տղամարդը/ «սովորական» կինը խնդիրներ ունենալու դեպքում: *(Մանրմասնել ըստ խնդիրների և իրավիճակների...)*

12. Կարո՞ղ է արդյոք միջին աշխատավարձով ապրող տղամարդը/կինը բարեկեցիկ կյանք ապահովել իր և իր հարազատների համար, թե հնարավոր չէ: Ինչու՞ եք այդպես կարծում *(արդյոք նույնն են հնարավորությունները կանանց և տղամարդկանց համար):*

13. Կարո՞ղ է արդյոք այսօր Հայաստանում «սովորական» կինը/ «սովորական» տղամարդը օրինակալից ճանապարհով հասնել իր նպատակներին /առանց հանրային, բարոյական, իրավական օրինախախտության/: Որ դեպքում կարողարացնեի ք օրենքի խախտումը: *(Խնդիրը դիտարկել տղամարդկանց և կանանց համար առանձին): ... Արդյոք միջոցներն ու ձևերը նույնն են կանանց և տղամարդկանց համար:*

14. Արդյոք հնարավոր է այսօր Հայաստանում որակյալ մասնագետը /տղամարդ/կին/ աշխատի մասնագիտությամբ, վարձատրվի ըստ արժանավույն, թե դրա համար անհրաժեշտ է /ազդեցիկ թիկունք, լավ վերաբերմունք, կամ.../ Ինչու՞ եք այդպես կարծում: *(Խնդիրը դիտարկել տղամարդկանց և կանանց համար առանձին):* Արդյոք այլընտրանքային տարբերակների դեպքում հնարավորությունները հավասար են կանանց և տղամարդկանց համար: Կան արդյոք աշխատանքային ոլորտներ, որոնք ավելի կանանցի կամ ավելի տղամարդկային են:

15. Ի՞նչ կասեք այն մասին, որ Հայաստանի շարքային քաղաքացին /տղամարդ/կին/ ստիպված հրաժարվում է հեռահար նպատակներից՝ գլխավորապես լուծելով կենցաղային խնդիրներ, նախընտրում է ապրել միայն այսօրով: Ապագայի մասին թող մտածեն ապագա սերունդները: Ինչու՞ եք այդպես կարծում: *(Խնդիրը դիտարկել տղամարդկանց և կանանց համար առանձին):*

16. Կարծում եք Հայաստանում երեխաներ ունենալը, ճիշտ դաստիարակելն ու մեծացնելը շատ բարդ, պատասխանատու խնդիր է: Պարզ չէ, թե ինչ անհատ կձևավորվի, ինչ արժեհամակարգով կառաջնորդվի, ինչ կյանք կունենա երեխան ապագայում: Երիտասարդները երբեմն հրաժարվում են երեխա ունենալ: Ինչու՞ եք այդպես կարծում: *(Տարբերակել տղաների և աղջիկների համար):* Տղա ունենալն է ավելի խնդրահարույց/պրոբլեմատիկ թե աղջիկ ունենալը:

17. Հայաստանի շարքային քաղաքացին /տղամարդ/ կին/ չի մասնակցում քաղաքացիական
ակցիաներին, սոցիալական շարժումներին, միջոցառումներին, հրաժարվում է ժամանցներից՝ ինչու՞
(Խնդիրը դիտարկել տղամարդկանց և կանանց համար առանձին)

Շնորհակալություն

1. Ձեր կարծիքով ինչ որակներով պետք է օժտված լինի ա) իսկական» հայ տղամարդը, բ) «իսկական» հայ կինը այսօր: *Աղյուսակի օգնությամբ դուրս բերել 10-ական բնութագրիչներ ըստ առաջնահերթության իսկական հայ տղամարդու և իսկական հայ կնոջ համար:*

2. Ձեր կարծիքով ինչ որակներ են հատուկ ա) իրական՝ «սովորական» հայաստանցի տղամարդուն, բ) իրական՝ «սովորական» հայաստանցի կնոջը *Աղյուսակի օգնությամբ դուրս բերել 10-ական բնութագրիչներ ըստ առաջնահերթության իրական հայաստանցի տղամարդու և իրական հայաստանցի կնոջ համար:*

3. Ձեր կարծիքով կարևոր է, արդյոք այսօր Հայաստանում լինել «իսկական» տղամարդ (ըստ վերը բերված որակների, հատկանիշների), «իսկական» կին (ըստ վերը բերված որակների, հատկանիշների), թե նմանատիպ որակավորումն այլևս արդիական չէ, գուցե այսօրինակ հասկացությունները գոյություն չունեն, նույնիսկ երբեմն անհրապական են: Ինչ ենք մենք այդ պարագայում կորցնում և/կամ ընդհակառակը՝ ձեռք բերում, ինչու?: Ձեր կարծիքով ինչն է փոխվել, կամ ինչն է նպաստել նման փոփոխություններին, ինչը կօգնի նախկին արժեքները վերականգնելուն:

4. Կարծում եք հնարավոր է այսօր պահպանել «իսկական» տղամարդու (ըստ վերը բերված որակների, հատկանիշների), «իսկական» կնոջ (ըստ վերը բերված որակների, հատկանիշների), որակները: Ինչ է դրա համար անհրաժեշտ և ինչն է դրան խանգարում: Ինչն է նպաստել իրավիճակի փոփոխության: *(խոսքը գնում է բազմաթիվ մշակութային, հասարակական, տնտեսական, քաղաքական գործընթացների և փոփոխությունների մասին, որոնք բերեցին գենդերային նորմատիվների փոփոխությանը):*

5. Կարծում եք այսօր ծնողները երեխաներին դաստիարակելիս պետք է սերմանեն «իսկական» հայ տղամարդու, «իսկական» հայ կնոջ որակներ *Աղյուսակի օգնությամբ դուրս բերել 10-ական բնութագրիչներ տղաների և աղջիկների համար*), համեստություն, ազնվություն, հավատարմություն և այլն, թե նման որակները կարող են խնդիրներ առաջացնել կյանքում, խանգարել ապահովված, բարեկեցիկ, ապագա ունենալուն: Միգուցե այսօր արդեն անհրաժեշտ են որոշակի, նախկինում գոյություն չունեցող ազատություններ, ճկուն մոտեցումներ դաստիարակության մեջ: Ինչ մտավախություններ ունեք այս թեմայի շուրջ: *(Առանձին մանրամասն խոսել տղաների և աղջիկների մասին):*

6. Ինչպես եք վերաբերվում տղամարդու և կնոջ ավանդական դիրքերի և դերերի վարքի փոփոխությանը: Նկարագրեք ասվածի պատճառները, դրական, բացասական հետևանքները, իրավիճակը շտկելու տարբերակները: Համաձայն եք, ողջունում եք նման փոփոխությունները, թե այս ամենը օտարամոլ երևույթներ են և խորթ մեր մենթալիտետին: *(Խնդրին անդրադառնալ ըստ ոլորտների՝ ընտանեկան հարաբերություններ, դերեր, տնտեսական հարաբերություններ, զբաղվածության ոլորտներ, քաղաքականություն, առանձնակի ուշադրություն դարձնել գենդերային նորմատիվային բարքերի խախտմանը, այլափոխմանը):*

7. Կարո՞ղ է արդյոք «սովորական» տղամարդը/ «սովորական» կինը Հայաստանում վերահսկել իր, իր հարազատների կյանքը, կենցաղը, առօրյան, թե շատ բան նրանից ընդհանրապես կախված չէ: Ինչու՞ եք այդպես կարծում:

8. Ըստ Ձեզ, այսօր Հայաստանում «սովորական» տղամարդը/ «սովորական» կինը կարող է փոխել իրերի հաստատված կարգը, գոյություն ունեցող նորմերը, արժեքները: Թե ոչինչ փոխել հնարավոր չէ:

9. Ու՞մ կարող է դիմել, հույսը դնել Հայաստանում «սովորական» տղամարդը/ «սովորական» կինը խնդիրներ ունենալու դեպքում: *(Մանրամասնել ըստ խնդիրների և իրավիճակների. . .):*

10. Կարո՞ղ է արդյոք այսօր Հայաստանում «սովորական» կինը/ «սովորական» տղամարդը օրինական ճանապարհով հասնել իր նպատակներին /առանց հանրային, բարոյական, իրավական օրինախախտության/: Որ դեպքում կարողարացնե՞ք օրենքի խախտումը: *(Խնդիրը դիտարկել տղամարդկանց և կանանց համար առանձին): . . . Արդյոք միջոցներն ու ձևերը նույնն են կանանց և տղամարդկանց համար:*

11. Ի՞նչ կասեք այն մասին, որ Հայաստանի շարքային քաղաքացին /տղամարդ/կին/ ստիպված հրաժարվում է հեռահար նպատակներից՝ գլխավորապես լուծելով կենցաղային խնդիրներ, նախընտրում է ապրել միայն այսօրով: Ապագայի մասին թող մտածեն ապագա սերունդները: Ինչու՞ եք այդպես կարծում: *(Խնդիրը դիտարկել տղամարդկանց և կանանց համար առանձին):*

12. Կարծում եք Հայաստանում երեխաներ ունենալը, ճիշտ դաստիարակելն և մեծացնելը շատ բարդ, պատասխանատու խնդիր է: Պարզ չէ, թե ինչ անհատ կձևավորվի, ինչ արժեհամակարգով առժեհամակարգով կառաջնորդվի, ինչ կյանք կունենա երեխան ապագայում: Երիտասարդները երբեմն հրաժարվում են երեխա ունենալ: Ինչու՞ եք այդպես կարծում: *(Տարբերակել տղաների և աղջիկների համար):* Տղա ունենալն է ավելի խնդրահարույց/պրոբլեմատիկ թե աղջիկ ունենալը:

13. Հայաստանում բարեկամական, ընկերական հարաբերությունները գնալով թուլանում, կորում են: Նախկին լայն շրջապատը, անշահախնդիր հարաբերությունները չկան: Մարդը նախընտրում է ապրել միայն իր համար, մյուսների խնդիրները իրեն չեն վերաբերում: Ինչու՞ եք այդպես կարծում: *(Խնդիրը դիտարկել տղամարդկանց և կանանց համար առանձին):*

14. Հայաստանի շարքային քաղաքացին /կին/տղամարդ/ չի մասնակցում քաղաքացիական ակցիաներին, սոցիալական շարժումներին, միջոցառումներին, հրաժարվում է ժամանցներից: Ինչու՞ եք այդպես կարծում: *(Խնդիրը դիտարկել տղամարդկանց և կանանց համար առանձին):*